

Ժուլիթ Պետրոսյան

Արեւանա՛լ,

Երկինքոտվե՛լ

**Երեւան
2018**

ՀՏԴ 821.19-8 Պետրոսյան

ԳՄԴ 84 (5Հ)

Պ 505

Պետրոսյան Ժ.

Պ 505 Արեւանանլ, Երկնքոտվէլ / Ժ. Պետրոսյան.- Եր.: ՆՏ Զոլդինգ, 2018.-130 էջ:

«Արեւանանլ, Երկնքոտվէլ» վերտառութամբ գրական իր անդրանիկ ժողովածուն ժուլէթ Պետրոսյանը լույս է ընծայում իր հայրենիքում, Զայաստանում:

Սա առաջին փորձն է մեկտեղելու ժուլէթ Պետրոսյանի ստեղծագործությունները՝ արձակ բանաստեղծություններ, աֆորիզմներ, գրական վերլուծություններ, որոնք մինչ այժմ տպագրվել են Ստամբուլի հայկական մամուլում միայն: Ներշնչված լինելով պոլսահայ գրականությամբ եւ լինելով Զ. Պարոնյանի, Դ.Վարուժանի եւ Մ.Մեծարենցի մեծ երկրպագուն՝ ժուլէթ Պետրոսյանը երազում է դառնալ նրանց հետեւորդը:

Դիպուկ բնորոշումներ եւ համեմատություններ, փիլիսոփայական եզրահանգումներ, սուր աֆորիզմներ. այսպիսին է ժուլէթ Պետրոսյանի գրական ձեռագիրը, որի ստեղծած պատկերները եւ հույզերը մղում են ընթերցողներին խորասուզվել իրենց իսկ հոգու խորքերը, փնտրելու եւ գտնելու հուզող հարցերի պատասխանները:

ISBN 978-9939-870-21-2

© Պետրոսյան Ժ. 2018

© Նոյյան Տապան, 2018

«Թե իմանայի՞ք՝
ինչ ճամփաներով եմ անցել
մինչ հասնեմ ձեզ»

Ժուլէթ Պետրոսյան

Չարմանալի զգացողություն է առաջանում ժուլէթ Պետրոսյանի գողտրիկ այս ժողովածուն ընթերցելուց. առաջին հայացքից թվում է, որ այստեղ ամփոփված են հեղինակի առանձին մտքերը, հույզերը, միջոցառում էջ առ էջ սկսում ես գիտակցել, որ սա մեկ ամբողջություն է՝ մեկ Մատյան, եւ ինչպես մարդու կյանքն է կազմված իր ապրած օրերի փազլից, այնպես էլ այստեղ՝ փազլի պես, հավաքված են արարված այս աշխարհի կանոնները, ապրելու արվեստի բացահայտումները, մարդուն մտատանջող հարցականները:

«Աստծո հետ ժամադրավայր է բանաստեղծությունը», - ասում է հեղինակը եւ տանում ընթերցողին իր հետեւից՝ կանգնելու Աստծո առջեւ՝ աղոթելու, զրուցելու, հարցնելու եւ պատասխաններին սպասելու:

Դիպուկ բնորոշումներ, խորքային համեմատություններ, փիլիսոփայական եզրահանգումներ՝ յուրաքանչյուր տողում, սույն Մատյանի յուրաքանչյուր բանաստեղծություն-փազլում, որն իր արձագանքն է գտնում ընթերցողի հոգում, առաջացնելով համաձայնելու, վիճելու, իրն առաջարկելու մղումը: Եվ հենց այստեղ, այս էջերում է կայանում ընթերցողի եւ հեղինակի հոգիների հանդիպումը՝ չէ՛ որ հենց ինքն է ասում՝ «բանաստեղծությունը հոգու հասցեն է»:

Գրականության մեջ հայտնի աֆորիզմներ ժանրին ժուլէթ Պետրոսյանի ստեղծագործական գրիչը նոր երանգ է հաղորդում, նոր հանդերձանք տալիս. լակոնիկ, մեկտող սուր աֆորիզմների հետ մեկտեղ իր յուրաքանչյուր միտք-պատկեր արձակ բանաստեղծության առանցքում հեղինակը

Նոր աֆորիզմ է հյուսում, որը ծաղկի թերթիկների պես՝ ոչ հանկարծ, բացվում է. «Վաղուց մոխիր եմ: Ծխով չես վախեցնի ինձ», «Անխուսափելի է ճյուղերի սուսերամարտը, թե սաղարթը քամու հետ սիրաբանե», «Անսեր մարդուց մահն էլ կխուսափի: Իսկ փոքրոզիները կկարծեն՝ չարը հարատև է»: սրանք հատվածներ են Ժուլեթ Պետրոսյանի բանաստեղծություններից, եւ սրանցից յուրաքանչյուրը մի նոր աֆորիզմ է:

Ահա այսպիսին է Ժուլեթ Պետրոսյանի խոսքը, որը ծնվում է իր եւ ճերմակ թղթի մտերմությունից՝ Աստծո հետ ժամադրավայրում, եւ Մարդու հանդեպ (ով նրա բնորոշմամբ՝ «Տիեզերք է քայլող») խորը եւ նուրբ հարգանքից. «Հաղթանակս ուրիշի պարտության հաշվին չլինի՝»: Եվ կարծես ինքն իրեն է ասում. «Բնությունն ու մարդը Աստծո երազանքի պտուղներն են: Մնացյալն ավելորդություն է . . .»:

**Հրատարակչի կողմից
Գ.Ա.**

Ժամադրավայր...

Աստծո հետ

* * *

Բանաստեղծությունը հոգու հասցեն է: Նավահանգիստ է, ուր մարմինը կիսատ մնացած աղոթքի պես կամբողջանա: Աստծո հետ ժամադրավայր է բանաստեղծությունը: Երկինքոտ դրախտի մեջ է ճեմում Բառ-դշխոն: Բառերը երբ տխրեն, ինչույք կսարքեն, որ լռությունը արնագույն գինու պես հարբե: Պարի օրը ու արևը գլխապտույտ ապրած գլորվի իմ գիրկը: Բանաստեղծության առագաստը լողում է քո աչքերում, հոգի՛ս: Ո՞ւմ բաժինն է այն տողը, որ գրեցի քեզի ընծա: Ո՞վ կկարդա: Ո՞ւմ մեջ ես փնտրելու կարոտի թռչունը՝ անու-նը Ափսոսանք: Բառերի հետ զգրվշ վարվիր: Ձեռքդ ինձ չհասնի՝ համբույրիս երամը երազիդ մեջ կպարի: Սրբության սրբոց դող կա չասված խոստովանությանդ մեջ: Լռե, որ պահը ամեղծվածանա: Չհասկացա՝ կայի՞ր, թե՞ ոչ... Գուցե բանաստեղծություն էիր օրերիս բաց էջերին: Ո՞վ պոկեց, ի՞նչ նետեց հեռու: Կարտասանեմ՝ լսող չկա: Անունդ նեկտարն է հոգուն՝ իմ բառ, իմ եղելություն, համր կյանքիս սիմֆոնիա...

* * *

Տողը քայլեց դեպի սիրտս: Բառերի սիրախաղը կրակի տվեց մաշկը աշխարհի: Ես մոխրացա, իսկ բառը մի ուրիշի աչքերում նորից ծագեց, ուր ես չկայի: Կար տողի չանցած ճամփան ու Աստված...

* * *

Չսիրված կինը արցունքի պես կթափվի պատուհանին: Ներսից պատասխանող չկա: Չքնաղի սիրտը ղվ է մոռացել դրսում: Ինչէր էին մնացել մայթերին... Լապտերից կախված հուշերը թռչվել էին: Չոր էր միայն օրվա սիրտը: Ապագայի հեքիաթը մոռացման ձեռքով է գրվում: Հասնողը դառնում է թռչուն ու հրաժարվում հողից: Երկնքում խարիսխ նետելն էլ դժվար է: Աստղերն անգամ դատապարտված են մեռնելու: Մերժված կնոջը ոչ չորս պատ է տրված, ոչ էլ աշխարհը կպարփակի սև բողոքը: Դողացող կրակի պես քայլում եմ անձրևի տակ: Ոչ կյանքին եմ «այո» ասում, ոչ մերժում եմ մահվանը...

Չսիրվածներ, ղրն է ձեր կրոնը: Ձեր աղոթքի շրթունքները ինչն են պաղ...

* * *

Բիբլիական պատգամը քարե արցունք է աշխարհի ղեմքին: Դարեդար քունս չի գա: Քարե ղեպքեր, քարե վերքեր... Ո՞վ է կերտել այս լաբիրինթը: Աշխարհից ելք չկա... Հեքիաթե ինձորները գալիք գարունի գովքն են անում: Հեքիաթասացն այս ի՞նչ համբերատար է... Լինելիության էջին կհասնեմ երբևէ... Իմ ստորագրությունս ևս մնա օրվա մաշկին: Մի ուրիշ հեքիաթի սկիզբը դառնանք միասին... Միայն թե Աստծո համբերությունը չհատվի... Կորել եմ ինքս իմ մեջ... Խնձորի սերմերը ղր գանեմ: Դրախտի հողից կերտված կողակից չկա...

* * *

Անձրևե բանաստեղծությունը տրորելով անցա: Յետքը ծաղկե զոջում էր, բույրը չհասավ ապագային: Ուրիշ բանաստեղծություն էր գրել արևագալը, ու տողատակում ինձ կրակի տվել... Բառե մոխիրը աչքերիս միջից կկայծկտա: Ինձ նայողը կայրվե: Մոխրացած օրերից դեմքեր կկերտեմ, բայց քամու դեմ անուժ եմ... Զանրի անգամ ծնվեի: Ամեն մահ ինձնից ինչեր առավ: Յոգնել եմ: Յերթական բանաստեղծությունը վերջակետը սրտիս մեջ դներ, վերջի բառի մեջ անեանայի... Գիշերվա ռեփլիեմը տաներ երագի երկիր, ուր ինձ բուրրը կճանաչեն, բացի բախտից... Յրաժեշտը ինչքան էլ ցավոտ լինի, իրական ցավից կծերբազատվեմ: Յրեշտակի արցունքից կհասկանամ, որ ինձ երբևէ նախանձել են, իզուր չեմ ապրել...

* * *

Ո՛ր էի ես, Տեր, երբ ժամանակի աչքերից յոթնագույն օրեր էին գլորվում: Տարածության սրտի զարկը համահունչ չէ երագիս: Ինչո՛ւ: Որ ես քայլեմ ու չհասնեմ հողին: Երբ Ոչինչը անունս տվեց՝ չպատասխանեցի: Յամր երգ էի՝ պատկանող միայն թեզ... Փոշոտ են աչքերս: Յողի կնիքն է: Որ չտեսնեմ ավելին... Իսկ իմ ուզածը՝ Լճյս: Իմ ուզածը՝ յոթ օրվա հրավառություն, որն իր մեջ պահել է խինդը բո... Ո՛ր եմ լինելու, երբ քամու վիշտը մխիթարող չգտնվե: Թռչունի ճախրանքը վայելք չտա հողին՝ ծաղիկը ինչպե՛ս բուրե... Ո՛ր ես, Տեր, առանց թեզ օրս ուշաթափ է...

* * *

Լռության սավանով բանի՛ կյանքս եք պատանքել: Գունե թողնեիք՝ գարնանը հասներ: Արև տեսեր ծոպերը սպասման ու շողերի մեջ ծաղկաթափվեի... Կյանքը կույր աչքերով կհետևի խաղին: Ես կպատռեմ ասքը բախտի, որ հեքիաթը սիրով վերջանա: Իզուր: Դարձյալ գլխավոր դերը մենությանն է: Լռություն, խոսիր: Արի արարումից սկսենք: Ասա «սեր», ու ես թագուհին կդառնամ քո: Հարձը կդառնամ Լուսի, միայն թե ցույց տա տեղը երկնքի: Ոչ ոք չկիսի ընթացքս հազարամյա... Ներկայում եմ... Անցյալ-ապագան ինչո՞ն կուշանան... Ինչպե՞ս ամբողջանամ, երբ էությունս Աստծո մոտ է... Ստվերս բախտի գնդանում տարին մեկ կծաղկի, կհիշեցնի բույրը սիրո ու աչքերը կփակի... Երկաթե գնդանը չի՛ անհետանա... Երկինքը այսքան մոտ է, իսկ ես կհեռանամ միշտ... Լռություն, իմ մայր, իմ քույր, քո թունավոր սիրուց ինչո՞ն մահ չկա...

* * *

Բանաստեղծության պես ապրեցի: Տողերի վրայից չքայլեցի դեպի կյանք: Սպասեցի՝ նոր օրը փոխվեր երգի, բայց բախտի կռիւնը տողերս դարձրեց լաբիրինթ: Նոր էջի կարոտով ճամփա ընկա: Թանաքս լերդացավ: Ի սեր Բառի ինչն՞ր անտեսեցի: Սև արցունքների մեջ խեղդվեցի ու չհասա արի: Էջերս հարսն էին հեքիաթի: Ինչո՞ն բառի պես չհավերժացա...

* * *

Քանի՛ անգամ կառափնարան բարձրացրին, բայց դահիճիս «գուլթը» հոգեվարքս բազմապատկեց: Թե ինձ փրկեր՝ մնացած մեղքերը կներվեին... Դահիճի աչքերում արևները ծունկի էին իջել աղոթքի: Լույս էր կաթում սուրսայր ժպիտից... Կպատռվեր պատանքը վախի... Ռեքվիեմն էր իշխել սրտին: Գոնե այս անգամ սուրը կիջնե՞ր, թե հավերժորեն ապաստի պիտի, միևս սրով գրված վերջնագիրը փոխվեր հավատամքի... Կընդունե՞ր առաջարկս ապրելու: Երկու մենություն կդառնա՞մք ամբողջական... Քանի՛ գարուն է հարկավոր, որ դարձյալ աշխարհ գամ, չճանաչեմ, թե դու ես եղել իմ դահիճը, ինչ-որ սիրո կապույտ հեքիաթում...

* * *

Ոչինչի ճամփին ծովեր են ծունկի եկել, լեռներ են թև առել երկինք: Ճակատագրի պոեմը աստվածացրել է սիրտ ու հոգի: Տողատակերում եմ պատսպարվել, երբ կյանքը հեռու էր երգից: Թե տոն էի, թե՛ սուգ... Գիշեր, սրբագրի՛ ինձ...

* * *

Կյանքի նեկտարն եմ ծծում, բայց հոգիս դառն է ու լեղի: Քամին պարի հրավիրեց, որ քաղցրություն խառներ հուշերիս: Թռիչքով տարված մոռացա վերադառնալ մայր հողին...

* * *

Աստված երբ ինձ ճանապարհեց դեպի կյանք, մախաղիս մեջ մանկության բրբիջ էր ու անմեղության փշրանք: Երբ դիմավորե, հուսախաբությանս լացը կլսվի ու չծերացող սրտիս մեղան...

* * *

Երկնքին սիրահարված թռչուն եմ: Վայրեջքի համար ոչ սիրտ կա, ոչ հոգի: Գերի եմ հողին: Երազումս անվերջ սավառնողն իմ է: Գուցե երկինքն էլ ինձ չգտավ... Ու մնացինք աչքերի մեջ Աստծո՝ մեկս դարձած մարդ, մյուսը՝ գույն՝ արցունքի պես թափվող հոգուն...

* * *

Վայրկյանի մեջ քանի՛ դար է բյուրեղացել: Քանի՛ օվկիան է խեղդվել անմեղի արցունքում: Անձրևակաթիլի մեջ եմ փնտրել ցամաքը նոր կյանքի, բայց հույսիս տապանը սիրո գագաթ չգտավ: Երազների մեջ պատուպարվեցի: Ձգտեցի գոնե աղոթքս հասներ Վեհին: Ողջույններս մենության սառցե ձեռքերի մեջ ուշաթափվեցին: Քանի՛ որբացած օր ժամանակի սպանդանոցը տարան: Հողի դառը քայլում երկինքներ փշրվեցին: Իսկ արդարությանը սպասող վաղեմին կարծում էր, թե հույսը ողջ է դեռ...

* * *

Երկիրը կհետևե թռչունի ճախրանքին: Մեղուն ծաղկի հետ համբուրվե՝ քամին աչքերը կգոցե: Ծովը կմխիթարե ավերին, թե նավը հեռանա: Ձմեռը անցյալին ծունկի չբերի: Մերը ուշանա՝ ճամփաների արցունքը սառցե սպառնալիք է: Անխուսափելի է ճյուղերի սուսերամարտը, թե սաղարթը քամու հետ սիրաբանե:

Ձյունոտ թարթիչներիս վրա հույսը կբողբոջի՞ դարձյալ: Անհնարինի ճամփեքին մոլորվեցի: Սիրտս ինձնից առաջ հասավ հեքիաթի երկիր: Բայց մանկությունը կորցրածին ո՞վ կճանաչի: Բախտի հետ ծանոթանալու օրը աղոթքներս լացին: Ինձ մխիթարողը գրիչս էր ու երազը:

* * *

Կգամ իմ ժամանակը, երբ ձյունը թափվի ժամանակին: Խնձորը ծառի վրա այնքան սպասի, մինչ խղճիս ձեռքը հասնի ճյուղին: Տարածությունը բախտի ավերում չլողա՞, հաստատուն դառնա լույսի քայլքը: Արգելված ոչ մի անուն շուրթերիս վրա չդողա... Կգամ իմ ժամանակը՝ ամեն վայրկյանը սիրո՞ր ծառա: Մենություններս գահնկեց եղած մեղա գան: Հողը վերջապես դառնա հարազատ, ու ես չենթարկվեմ ճակատագրին: Երկնքի կարոտը թռչուն դարձած ինձնից բաժանվելիս, ես հողի մեջից օրոր երգեմ դարերին...

ՀԱՅ ԵՄ՝ ԹԱՓԱՌԵԼԸ ՃԱԿԱՏԱԳԻՐ Է

Ամայերը կորոտան: Կայծակները կհիշեցնեն Թուր Կեծակին: Ձեռքս չի հասնի երկինք: Հոյսերը զինվել են: Չեղած ծովի հատակը կսուզվեմ, որ թամբեմ Քուռկիկ Չալալին: Հողոտ օրերի մեջ կխրվեմ: Երկնքոտ ոչ սիրտ կա, ոչ աղոթք: Պղնձե քաղաքում ծնծղաները կզարկեն ավետիսը նոր կյանքի: Կուռքերի աչքերը մի-մի գուռզ դարձած գետնով կտան հեքիաթի ինձորները: Առանց երագի անիմաստ է ապրելը: Օրերը աննպատակ կասպանդակեն: Ճյուղերիս չորացած գարուններ կծպտան:

Ճամփաները սապատավոր են: Ճամփի վերջին ի՛նչ կապասվե՛ ոչ ոքի համար կարևոր չէ: Հողի մեջ թաղվելով կքայլեմ: Իսմիլ Խաթունները ճամփաս կկտրեն:

Սեր չխոստովանեք, օտարներ, ես հայ եմ: Բացեք ճամփան Ագռավաբարի: Մաղախիս մեջ ստվերն է Մասիսի, Սիփան սարի գեփյուռը ոսկի ու Անջուր քաղաքի պապակ շուրթերը: Իմ հույսը Շամ ու Հալեբ է տարվել: Իմ հացը դառն է ու լեղի: Ի սկզբանե Առյուծաձև օրեր չունեի երևի... Մարութա բարձր սարերը դատաստանագիր են: Ո՞վ կարկտահարեց իմ պես խեղճի սիրո արտերը: Ուժդ ինձ հետ կչափես, Կյանք: Գոմեշի յոթ տակ կաշի կփաթթեմ աշխարհին, որ ցավիս մռնչունից չպատռվի:

Բախտի ճակատը արցունքներովս կճեղքեմ, միևնույն է՝ հույսերիցս հարկ կառնի... Հրաժեշտ կտամ ինձի մայրությունն արած արևին, ու գիշերը կուշանա

դարձյալ... Կճջամ. «Էր ես, աշխարհ, կամ սիրի, կամ բա-
ժանվե՞նք առանց դավի...»: Օրերս կերգես. «Կենդանի
եմ, սեր, մեկ էլ արի...»: Լսող չկա... Մենությանս ջաղաց-
քարերը քառասուն կտոր անող չկամ: Բախտի զարկը
իմ վրա կառնեմ, միայն թե ժպտան, Կյանք... Երկինք ու
ծով Կապույտբերդի գովքը կանեն՝ աշխարհը մենաս-
տան է վերնագրով... Իրար չենք ճանաչի ես ու զավակս:
Օրերի եղեգնուտից թունավոր նետեր կսլանան հեռու:
Որը կսպանե, որը կդատապարտի չմեռնելու... Ազնիվը
կնետվի երկնքից, նենգը իր եությամբ կթունավորի հո-
ղը, ու աշխարհը կգրկվի բարության բերքից... Մարդիկ
Նույն Աստծո երազանքի պտուղները չէին: Երազներն էլ
պղտորեցին իրենց աչուկները...

Չողը չդիմացավ ցավիս: Ետևիցս գոցվեցին դռները
Ագռավաբարի: Կելնեմ, երբ ձեռքդ հասնի արևին, մատ-
Նահետքդ դառնա Լույսի կնիքը...

Չայ եմ, թափառելը ճակատագիր է երևի...

* * *

Վաղուց մոխիր եմ: Ծխով չես վախացնի ինձ: Դրո-
շիս ծալքերում ազատության կարոտ կա: Բարձունք
կփնտրեմ, որ փողփողամ: Գույնս դառնա լազուր, ու
թռչունը արևի աչքերում ճախրի առանց այրվելու: Ժա-
մանակը վայրկյանի կարոտից պատեպատ չտա իրեն:

Չաղթանակս ուրիշի պարտության հաշվին չլինի՜...
Վաղուց մոխիր եմ: Արևի տակ լոկ հուշերս կբազմա-
պատկվեն...

* * *

Արծվին բարձունքով կվախացնեն, աստղերին անկումհով, ծովերին ափհով... Ծաղիկը կսպասի աշխարհը ծունկի գա ու չքաղի՝ իրեն: Կհեռանաս չվերադառնալիս պայմանով: Աչքերիս մեջ վախ չկա: Ուզես՝ մնա, ուզես՝ հետևե ուրիշի: Ես անսերության ափին ոտք չեմ դնի: Կմնամ հուշերի ծովում: Ուզես՝ փրկե, ուզես՝ կխեղդվեմ: Միայն թե օրդ իմ անունով կոչվե: Հոգուս նավին վստահե, կհանդիպենք թեկուզ մյուս աշխարհում: Ինձ բաժանումով չես վախացնի, ես հուշերի տեր եմ...

* * *

Ինձից ինչեր առավ կյանքը: Փոխարենը՝ դրախտի թռչունները բառ դարձած բույն հյուսեցին երևակայությանս երկնքում: Քայլեցի: Ինչի որ հպվեցի՝ բառ դարձավ:

Բառերը կարոտի պես բացին իրենց թևերն ու... ինձի մնաց հառաչել ու... չափսոսալ... Ապրեցի: Ում սիրեցի՝ բանաստեղծացավ: Դարձավ աշխարհիկը, ոչ իմս: Բախտը մաշկիս վրա գրեց երգերի երգը, բայց միայն Աստված կարդաց այն...

* * *

Մթնշաղը կոպերիցս կախված ինքնասպան կլինի: Լապտեր կվառնեմ, որպեսզի օրը մահից չվախենա: Լույսը կսղոսկի լապտերից ներս, ու պատի ստվերները կփորձեն ապրել իմ ու արևի փոխարեն: Աշխարհն ու ես մահը կճաշակենք մինչ արշալույս...

* * *

Ձիերը քաշ կտան կարոտիս դին: Զամին կոժժվարանա անոնց հասնել: Արևները կդոփեն ժամանակի կուրծքը: Կարագանան բախտի սրտի զարկերը: Անձրևը կփրփրակալե: Ձնջեի հետքերս՝ ոչ ոք չտեսներ, թե ուր կերթամ: Ձիերի վրնջոցը կապույտ ռեփվիեմ է, կյանքի նահանջն է մահվան կանչերին ընդդեմ: Զամիներին ընկերացած ձիերը մոռացան, որ սուզի սև համբույրը թամբել է իրենց, սանձել է կրթերը կրակե, ստիպել հողին ենթարկվել... Բայց ձիերը հասել էին հորիզոնին, ու ամեն ինչ շատ ուշ էր արդեն...

* * *

Թե իմանայիք՝ ինչ ճամփաներով եմ անցել մինչ հասնեմ ձեզ: Ելք չկար օրից օր, հնից՝ նոր:

Թե իմանայի ճամփա բացելը կյանք արժի, արահետներին սրտիս տեղը չէի ասի...



Դժբախտ ծաղիկ չկա: Ամենածեր թռչունի թռիչքում
նույնիսկ անգորությունը տեղ չունի: Վերջին ճախրան-
քը տոն է: Թևերով կապույտը կգրկի: Ամայի ունկերին
կշշնջա խոսքեր, որ հողն էր հուշել: Զժպտացող գույն
կամ: Աստղերի քթփչը խավարին լույսով կվարակի: Ան-
սեր մարդուց մահն էլ կխուսափի: Իսկ փոքրոզիները
կկարծեն՝ չարը հարատև է: Ատելության աշխարհից
ժամանակը փախել է ու մոռացել, որ իրեն սպասող կա:
Տառապանքը թե չայրվի, գարունը ինչպէս գտնի աշ-
խարհի ճամփան: Կփլվի՞ պատնետը բախտի, որ երջան-
կությունը ճեմի սրտիս ընդամաջ: Գիրկդ բաց, որ արևը
վար չընկնի, չխաթարվի տրոփը ժամանակի: Ամեն բան
համընթաց միտվի դեպի հոգին...

...Գեղեցկությանդ անունն ինչ է: Իմինս՝ Կարոտ:
Արցունքներով ջրեի հողը, որ ծլեր ներումը Աստծո: Ժա-
մանակի կրծքից օրեր քաղեի, գինի քամեի, հարբեցնեի
ինձի օտարի աչքով նայող տարածություններին: Սիրտն
առնեի սիրո, որ խռովությանը վերջ դներ:

Մենությանս մաշկը կսրսփա գույնի կարոտից: Ալ
կուզի հանգել: Չարդարվել օրերից դուրս ծնված լույսի
պես: Չարդարվել ինչպես այն հարսը, որի համար փե-
սայի կորուստը մահ չէ... Կյանքի կոշտությանը այնքան
եմ վարժվել, որ մահվան հպանքը անծանոթ սպաս-
վածն է: Փրկություն, որի մասին լեզենդներ եմ հյուսել
ու կորել հյուսքերի մեջ: Խճճվել եմ կասկածի ձեռքե-
րում... Յեթիաթը մի՞թե զարդանախշ ծուղակ էր: Թմբիր
էր բախտի բեմադրությունից չխելագարվելու համար...
Երազներին թամբեմ ու հեռանամ: Ու թե մեռնեմ՝ ո՛չ այս
հողին...

* * *

Անունդ պոեմն է սիրո: Կիսատ տողս երկնքից կախվեց: Վերջակետը կարծիքս չհարցրեց... Օրերը ի՞նչ տառապյալի մոլորակն էին կերտելու... Պոեմն էիր սիրո: Երբ հեռացար՝ վերջին էջն էր կյանքիս: Ո՞ր դրախտում էինք շարունակվելու...

* * *

Հին աստվածների գավիթից նժույգ գողացա: Անունը դրի Բախտ: Պարանոցից երաժշտություն կախեցի: Բաշը զարդարեցի ժամանակի խոստումներով: Թեեև օրը թամբի վրա քնով ընկավ ու սմբակների տակ տրորվեցի: Ոչ հասա ինձ, ոչ վերադարձա աստվածների երկիր: Աններելի էր մեղքս՝ առանց աստվածների կամքը հարցնելու ապրեցի՝ մոռանալով, որ առջևում մահ կա...

* * *

Երամը երկնքի վրա բանաստեղծությունն գրեց, հոգիս տակը ստորագրեց: Օրերի վտառը ինչէր էր մոռացել ժամանակի ուռկանի մեջ: Հեքիաթս խուլուհամր էր... Ինչքան երիտասարդ էի՝ ոչ սեր էի հասկանում, ոչ բաժանում: Անցյալ-ապագայի կամուրջի վրա առաջին քայլերս էին: Չգիտեի, որ սիրո տոմսակը կենտ էր, ու սիրտս այդպես էլ որբ էր մնալու...

* * *

Արևի վրա քանի՛ պայթյուն եղավ, մինչ քեզ կսպասեի: Քանի՛ անձրև հրաժարվեց թափվել: Երկինքն էլ տեղում չէ: Թռչուններին ինչպես մխիթարեմ: Յողի լեզվին բառը սառել է: Գարունն էլ անունդ առել-փախել է: Ինչպե՞ս համոզեմ երկիրը պտտվի... Քանի՛ խիղճ է խեղդվել, մինչ տառապանքե ծովը դարձել է թռչուն, հեռացել մեղսանքի ափից... Ձմեռը դատապարտված է սառույցների մեջ ինձ փնտրելու: Թիապարտ օրերից ինչպե՞ս գարուն հուսամ: Ինչպե՞ս սիրահարվեմ գուլյնին, երբ ադամամութի աչքերում կմխա առավոտի ողբը: Սեր, եկ տիեզերանանք: Երբ ժամանակը ինձ պարի հրավիրե, երկինքը կարող է չդառնալ երաժշտություն... Քանի՛ դար եմ բաց թողել, մինչ հասնեմ շղթայված ոտքերով դիպվածին...

Թեև իմաստ ունե՞ր հասնելը...

* * *

Երամը փամփուլտների լաբիրինթոսում չկորցնի՞ գարնան կանչը: Թեև անցյալը հիշեցնող ոչինչ չկար: Ամենուր երկաթե հայացք է ու երկաթյա երգ: Յող ու երկինքոտ ոչինչ չի մնացել աշխարհում...

Երկինքը ի՞նչ կզգա, երբ փամփուլտը վիրավորե ամպին:

Յրթիռը լուսի արագությանը մարտահրավեր կնետի, ու օրը կուշանա հանդիպման գալ: Աստված ի՞նչ համբերատար է...



Ճամը կուզի հասնել հեքիաթի պարին՝ Յուշերը կբողբոջեին: Չար երազ տեսներ՝ վարսաթափ կլինեին հույսերը: Ճյուղերի բախումը հասարակ սուսերամարտ չկարծեն՝ ասպետների բախումն էր հանուն գեղեցիկի: Որը ծունկի կգար, որը ծունկի կբերեր դարը, որ ժամանակի ծնծղաները լսելի լինեին մարդուն: Պտուղը մանկան պես կժպտար, երբեմն էլ կկարկտահարվեր հենց ճամփի սկզբին... Բնի վրա նորանոր հեքիաթներ կգրվեին: Փչակի փերին իր սիրտը կնետեր գարնան ոտքերի տակ: Ճամը մագիլներով կխրվեր իրականության կոկորդին: Չէր հասկանա՝ իրենից ինչ կուզեր բախտը: Ինչհն սկսել ամեն անգամ նորից, երբ կարող էր դառնալ անսահման գեղեցիկ, դառնալ հեքիաթի բանալին...

Տապալված դարը լուռ կարտասվեր: Անտուն աշխարհի սիրտը կդողար: Խաբուսիկ էին օրերը, վստահություն չէր բողբոջի հույսի շուրթին... Ու կանաչը անբառ կմեռներ: Ժամանակը հունից դուրս էր եկել: Աշխարհի ընթացքը հեքիաթից զուրկ ահարկու էր: Ոգի էին ամել չարի զավակները ու կսպառնային բարու հիշողությունից եղիցիի օրորոցայինը ջնջել...

* * *

Մայր մտնող արևի վերջին շողն եմ...

...Կորած քաղաքում արևը ծագեր՝ մարդիկ կմոռանային իրար շնորհավորել: Ծաղիկն աչքերը բացեր՝ տեսածը երկինքը չէր:

Թռչունը չէր հասցնի մյուս աշխարհից գարունը բերել: Օրը օրվան չէր գումարվի: Ժպիտը կորցրածների երկրում մսխվել էր երազանքը: Միայն քամին գիտեր երջանկության տեղը, բայց ղվ կհասներ ետևից: Արևը ամեն առավոտ կպատմեր լույսի լեզենդը: Ով հավատար՝ կհասներ երկինք, ով ոչ՝ հող կդառնար ու փոշի... Ինչքան հեռացա, այնքան մոտեցա միևնույն սկզբի: Կորուստներս լեռնացան, իմ ու իմ միջև անդունդներ գոյացան: Երևակայությունս հարստացավ: Խորհրդի ծառից կախված օրը թոփեց ու... Ես գտա ու կորցրի ինձ...

Իմ մասին չհիշեցնեք քաղաքիս...

* * *

Օտարի ծառից կախված պտուղ եմ: Հողը ծաղրում է ինձ. «Զեզ ղր քամին բերեց...»: Աշնան թափորը բախտի հիշողությանը դառնություն խառնեց: Կռվախնձոր եմ: Դրախտի արցունքներն են բողբոջել ճյուղերիս: Այդպես էլ ներման ճամփան չգտա: Պատրամստ ես համտեսել ինձ, քո փորձությունն եմ...

* * *

Օրերն իմ մեջ քեզ էին փնտրում: Նրանց ուրախացնող ոչինչ չունեի: Հուշերով էի կերակրում, սրտիս փշրանքներն էին գերադասում՝ հոն էիր դու...

Օրը խռով մայր էր մտնում, տեղը գիջելով մի նոր կարոտի... Ինչպե՞ս հասնեմ Լուսին: Ինչպե՞ս ապրեմ կեսերկնքով, կես-երկրի վրա... Թե իմանալիր գարուններից խռով ծաղկած ծառերի վիճտը... Նույնիսկ աշունն այդքան նախշազարդ չի պարել, ինչպես դու...

* * *

Ոչնչության պես թեթև, լույսի պես ժպտուն, թակեի Աստծո դուռը: Ներսից ծաղիկներ թափվեին վերքերիս վրա: Մոռանալի, թե ով եմ: Արմատախիլ անեի հուսախաբությունս ու դառնալի Լուսի ճամփորդ...

* * *

Մենավոր եմ: Վարագույրը համբուրող քամի, ինձ էլ համբուրի: Ծառերը կխոնարհվեն հուշերիս առաջ, ու փողոցը կարցունքոտվի... Մենավոր եմ ասելու իրավունք չունեմ... Տիեզերք եմ ու հոգի...



...Դժվար է, երբ արեւներ ես երկնում, իսկ շուրջդ լույսի կարոտ ոչ ոք չկա...

...Դրախտը որպէս մատանի դնեին մատիս, բայց մերժված սիրո տխուր նահանջն եմ... Ո՛ր էր, սովորություն պիտի դառնար ամեն երեկո սիրո կողից դարձյալ արարվելը...

...Օրերը հաշվված էին, հողերը՝ լքված... Հողից արդեն անհնամր էր մարդ արարելը: Կալի մեջ վախի սերմը կար, ինքիշխան սեւը կա սիրո փոխարեն... Կորած արեւը աչքերումս է: Անձրեւի կարոտում երջանկությունը կորցրել է ելքը դեպի լոռ օրեր: Արցունքիցս ծովեր եմ կերտել, ուր սիրո աստվածուհիները լողան: Մոռացնել տան, թե ցավ կա ու սուգ: Հասնեմ հոն, ուր չհասնելը մեղք է ու վիշտ: Հող ցանեմ ծովի փրփուրին, որ խեղդվողը ասի ունենա, տուն դառնա կորած սերը: Անդունդի եզրին սփռել եմ քամու թելերը, որ Լեռան մրմունջը դառնա ձայն բառբառո ու աղաղակի ողջ աշխարհով. «Քայլիր իմ տեղը, քայլիր անդադար, մինչ չի հասել...»: Իսկ հասնելու համար Լեռանը թելերիդ առ ու... ուներիդ կզգաս հպումը Աստծո... Չխաբվես արարման 7 օրով: Սիրո թելով դարձյալ արարել է պետք ամեն քար ու թուփ... Սիրագերծ ապրեմ՝ կկրճատվի 7 օրվա երգը...

...Ծարավ եմ արարվելու: Արեւը նժարին դրած արշալույսներիցս հաշիվ չպահանջես, չկշռես անմեղությանս անկարողությունը...

Մայրամուտը ծուղամկ է... Վիշտը արյանս գույնը չփոխի՛, օրվա կորուստը չդառնա՛ հավերժական:

...Հեքիաթասած մոլորակների պարին միանամ ու մոռանամ, որ երբեւէ մեռնել է հարկավոր...



Արցունքներիս մեջ է մեղքի քրքիջը: Ուրախությունս այնքան թանց է: Արեւ նկարեմ երկնքում, որ արեւը մենակ չտխրի: Ժպիտս շատ է անփառունակ, համբուրի, որ մեղքն անհետանա, բարին այսուհետ իմ բերանով խոսի, պատասխանդ լինի այնքան հարազատ...

...Սրտիս դաշտերում մեղքի ոտնահետքն է սփռված: Աստված կիջնի՞ հոն զբոսնելու, ոտնահետքերը ծաղիկ դարձած հուշեն, որ արդեն մենակ չեմ, չե՛ն մոռացել ինձ երկինքները...

...Արյունս դրախտի ալ երկինքն է, հրաշքի ծաղիկներն է ջրելու: Միայն սիրուն է տրված մորեմերկ լողալու այդ ջրվեժի տակ:

...Երբ հասկացա սիրո արժեքը, Աստծուց շատ էի հեռու: Անձրեւի պես կթափվեի ու չէի հասնի հողին: Անջուր ծովերի մեջ փոթորկի ձայնը լսել ես, միացել ես այդ չոր ողբին: Բռնեի հորիզոնի ձեռքը, որ չերերայի հույսի շեղբին: Կտրեի այն կապը, որի վրա բախտը շնջացել է սեւ խոսքեր: Ես հոս եմ, ո՞ր ես դու, սեր իմ հրալեզու: Արդեն մոխիր եմ: Չեն հասկանա, ուզածս միայն դու ես, միայն դու: Կյանքս կրակե պար է սեւին: Երբ խոսել գիտեի, անունդ օտար էր՝ իմ կորած երազների անարշալույս փառք... Թե հասկանամ արեւի լեզուն, կհասնե՞մ Աստծուն... Մեղք է երջանիկ չլինելը, թե ամենուր է սեռը...

Օրերի երգչախմբից դուրս եմ: Մահապարտ սեւը կպայթարի հանուն ինձ: Սպիտակը մատն էլ չի շարժի որպես փրկագին:

Ամենքը ընթացան դեպի ապագա: Ես մնացի անցյալի ստվերում: Երբ օրը բացվեց, երազներս հազա, որ ոչ ոք չճանաչի իմ մեջ իրեն: Մեղքիս անկյունաքարը ղևհամար է աստիճան լինելու: Թե երազներիցս մերկանամ, ողորմելիությունս լույս աշխարհի կգա: Ապագային միս ու արյուն կտամ, որ բաբախի բախտի սիրտը: Մատս զարկերակին է, քանի՞ անգամ անունս տվեց... Պահը սեւ թիթեռ դարձած ժամանակի դեմքը կծածկի, որ կյանքը զուևավոր աչքից զրկվի: Երանի չտեսնեի երանգները թախիծի...

Արդարության դեմքին շարտված քար եմ... Սիրտս օգնության կկանչի: Ոչ ոք չի մոտենա, որ չարյունոտվի: Կսպասեն մինչ ինձնից ոչինչ չմնա՝ նոր փնտրեն արդարացնող խոսքեր: Գուցե փառքի պատմուճանը ծփա ու ինձ հասցնի երկինքներ...

Տառապանքս ինչույքի կիրավիրի երեկվա ինձ քարկոծողներին: Ոմանք ցավովս կհարբեն, ոմանք... սրտիս հենված կփորձեն հասնել... Իսկ երկրի վրա ես եմ ու հողը, որ կսպասի՝ ձեւ տա ապագային, **ԵՐբ՝** գաղտնի է նույնիսկ իրեն...

Աստված թաքցրեց **ինչպես**:

Ինչը փռեց ոտքերիս տակ... Հակառակվեցի: Անսահմանությունը երազեցի: Կորցրի երազի մուտքը, իրականության դեմքն ու այն ամենը, որ ի վերուստ էր տրված ինձ...

* * *

Հրեշտակը հոգուս մեջ հյուր էր: Սրտիս սկիհը լի էր երկնքով: Ծաղկե աղոթքներ կթափվեին պանդուխտ օրվա դեմքին: Կճանաչեի ինձ եւ ձեր աչքերով: Ինչքան կի՛ն էի... Կավահողիս մեջ հրեշտակին ինչպե՛ս բանտեի: Երկինք նկարեցի բախտի աչքերին, որ կապվի հոգուս: Գուցե արգելքները պարտված հեռանային, բայց ամեղձված էր օրը: Հուշերի փշրանքներից ապագա կերտեցի: Էջերս մենության զարդն էին: Աստծո հետ սեղան է նստել ամեն բառս: Հավերժի քարավանը արցունքիս մեջ է մոլորվել: Դեպի ինձ չգաս՝ կայրեմ...

* * *

Էջս նորահարսի պես կբուրի: Կ՛նչ թովչանքներ կսփռի տողերի սպասման վրա, միայն թե կայանա հանդիպումը ոսկե: Երբ գրիչս իր տղամարդկային կեցվածքով դրության տերը դառնա ու ամաջնորդի դրախտին դեպի հոգիս: Էջեր կան, որ կին են արդեն, արելին նույնիսկ կմոխրացնեն: Ամոթխած բառերը կհարսնանան: Ծամփից շեղվող էլ կա: Գրիչս կարոնահոսի էջի անտարբերությունից: Տողը կերդվի սուտ բառերով: Ո՞ր անհոգի սրտից էին թափվել ու արժեզրկել իմաստը սիրո... Լքված տետրակս կփոշոտվի: Կողքի գրքերը հաղթանակած կնայեն որքիս, ու բախտի արցունքը կխառնվի թանաքիս: Բանաստեղծությունը կծնվի ու մոռացնել կտա, որ ցավը հայրենիքս էր...

* * *

Չգացմունքի կրակին կեփվեն սպասումներս: Ար-
ցունքներովս կհամեմեմ անսերության լուծույթը: Կա-
խարդի պես կշշնջամ խոսքեր, որոնց իմաստը հայտնի
է միայն բախտին: Սեր, ուր էլ լինես՝ ինձնով հմայվե,
հետեւէ օրերիս ճախրանքին: Երկինքը թեւերիս առած
թակեւք հավերժի դուռը: Խոսքերս հմայիլի պես կախեմ
դռան բռնակից: Ով բանա՝ սիրտս նրանն է: Միայն թե
օրերիս պես մահկանացու չլինի, չհեռանա ի սկզբանէ:
Վարսերս ուռկանի պես կփռեմ ոտքերիդ տակ, կկա-
խարդեմ որպէս սրտիս որսը: Ու թե հանդգնես դարձյալ
չսիրել՝ գոհե մահս դառնա...

* * *

Ճովի բույրը անապատը արթնացրեց քնից: Հիշո-
ղության մեջ ծփաց կապույտ ալեկոծումը: Հիշեց, որ
ծով էր անցյալում: Բայց հիմա ոչ սկիզբն է հիշում, ոչ
վերջն են հուշում... Ծառացած ավազը բլուրներին պա-
րի կիրավիրի:

Հիշողության բունքերին անորոշության ծնծղաներն
են զարկում: Փուշերն ու տատասկները խայթում են
արեւի ոտքերը: Խոցված արեւն ավելի է այրում ու անա-
պատի հիշողությունից ջնջում անհիշելին: Մարտահրա-
վեր նետող նոր օր չկա՞ հորիզոնին: Ժամանակի քայլ-
վածքը համահունչ չէ ավազի երազներին: Ներկան ու

անցյալը խորթացել էին երեւակայության աչքերում: Ծովի սիրո խոստովանությունը ինչհմէ մերժեցի: Էլ ոչ ոք չի շոյում լքված կողերս, չեն նետվում չորացած գրկիս մեջ: Թե խոսեմ, ավազը կխշրտա: Ճայերի ճովոյունը ողբի է վերածվել: Թե ինձ հիշող մեկը կա, ինչպէս հասնեմ իրեն: Ոտքերս խրվել են ավազի մեջ, թաղվել եմ ողջ-ողջ: Ժամանակին ի՛նչ գվարթ ալեկոծում ունեի, փրփուրե ողջույններս ճայերի կտուցին էին: Կապույտն էի, որի վրա քայլում էր խոստումը Աստծո: Ավետյաց երկիր տանող փորձության պարը քամու գրկի մեջ է դեռ: Բայց արդէն խուսափում են իմ խորշումած դեմքից: Բլուրներիս մեջ են թաղվել նավերը գեղեցիկ խոսքերի: Սպիտակ դրոշ եմ բարձրացրել: Տուրտ քամին ներխուժում է ցավիս խորշերը: Այսօր դարձյալ ուշացավ ճայերի երգչախումբը: Զնո՛վ են ընկել, ինչպես երազներս: Ամպերը ծաղրում են ճախրանքս: Չէ, դեռ չեմ մոռացել: Ծովի հոտը ռունգերիս մեջ է: Պետք է քայլեմ անվհատ, ծովի շարունակությունը գտնեմ...

...Գիշերը աստղերը զգացին, որ տխուր եմ: Իջան զարդարելու երազներս, բայց հուշերս արդէն լույս չէին ընդունում: Օրերը հաջորդում էին իրար: Ես ձեւացնում էի, որ դեռ ողջ եմ... Ամենուր ծով է, ինչհմէ չեմ թըջվում...



Քաղաքի քարե զգվանքը մենությանս կփարվի: Բետոնե քրքիչ է շուրջս: Ճամփաները կմտրակեն քարացած գոյությունս: Արեւը թե մայր մտնի, լույսը չմոռանա՞ ծագել... Փողոցում մարդկանց տեղատարափ է, ես՝ մարդու կարոտ: Բետոնե արգելքներեց ելք չկա՞մ: Յույսս պատեպատ կզարկվի: Պատուհաններում լույսեր կվառվեն: Երագս դռներ կթակի: Ներսից կհարցնեն՝ ո՞վ է: Կպատասխանեմ. «Ձեր անծանոթ հարագատը...»: Կհայհոյեն: Անունս շուրթերին առնող չկա: Իրականության դուռը յոթ փակի տակ կապրեն: Ես երեւակայությանս մեջ կշնջեմ բոլոր արգելքները: Ոչ դուռ կնկարեմ, ոչ պատուհան: Ծովը աչքով կանի: Ալիքները հորիզոնի ստորագրությունը կդնեն ավազին: Գարունը քաղաքի ժխորից փախել է: Չի գա, մինչ անունս չփարվի անունիդ: Քայլեի, քայլեի, մինչ փողոցդ խաչվեր անհասցե գոյությանս: Մեր հանդիպման կետը բանաստեղծություն դառնար: Չգայիր, թե ինչ ես կորցրել՝ ինձ մերժելով: Յասնեի օրվա տետեից, սիրո ոտքերն ընկնեի, աղերսեի փրկել քաղաքի անտարբերությունից: Գորշ ժխորը թաղեի անցյալում ու թեւաբաց ասեի. «Ողջո՛ւյն, հորիզոն, է՛ն եկա...»:



Սերս երկրի վրա գբսնող երկինք էր...

Հոգուդ մեջ տեղ չտվիր, իսկ դուրսը սաստիկ ցուրտ էր: Թեւաբաց զարկվեցի պատուհանիդ, գարուններիս մեջ առա քեզ, իսկ դու սիրտս նետեցիր ձմեռներին կեր...

...Աչքերս ճախրում էին աչքերիդ մեջ: Կտուցիս անցյալի փրփուրն էր: Ուժասպառ եմ, ո՛րը է քո ափը: Թե կոպերդ փակես, լույսը կթռչի կերթա: Մի հեռանա, թող վայելեմ քեզ... Լույսը անուսնա շող դարձրած դրել է բարձիդ: Անունդ եմ տալիս, սիրո մասին եմ խոսում, բայց իրականությունը պնդում է, որ այդպիսի աշխարհ չկա... Դու իմ մեջ էիր, ես քեզ չէի կորցրել: Թե աչքերս փակեմ արեւի առաջ, կվիրավորվի: Ինչպե՞ս բացատրեմ, որ ես միակ արեւի պետքը ունեմ, բայց այդ արեւն իմն չէ... Աններելի մեղք է արեւ գողանալը: Արեւն ինքը պետք է քեզի գա...

...Արեւն ջրահարս է: Ոտք չի դնի ափին: Ես էլ կխեղդվեմ, թե ընդամաջ գնամ: Երանի թե փրփուր դառնայի: Մոռանայի, որ ափ ու հորիզոն կա: Կան ժայռեր, որոնց պատասխան պիտի տամ ընթացքիս համար: Թե անտեսեմ արգելված կղզիները՝ կորած եմ: Նրանք ամենատես են, օրերին զարկելով՝ կծեծեն Էությունս: Հորիզոնը հեքիաթ կմանի: Ես նավերին ցույց չեմ տա խուլթերի ոստայնը: Նավահանգիստը խստադեմ մոր պես կնայի: Բայց չե՛ որ նավարկեցի սիրո հետքերով, հանուն երկնքի՛ վեցի երկիրը, որպեսզի դարձյալ հող չդառնամ: Ափ ել-

Նելու համար պարտադիր է մեղքից զերծ մնալ: Ինչպէն կարելի է սիրուն հպվել առանց թրջվելու: Արտասուքի Նախշերով եմ հյուսել անցյալի ոստայնը...

Անկարելի է Նայել աչքերիդ մեջ ու չմերկանալ: Փրկողակա արեւդ է: Արժէ ապրել, թե մայրամուտը գրկիս մեջ չէ... Ես կառափնարան կելնեմ արեւի հետ: Թե լույսը չգտնես՝ հեքիաթների մեջ փնտրի: Չորացրու ժպիտս, որ քեզ խեղդամահ չգտնես ժպիտիս մեջ...

* * *

Յրաժեշտի կաճանի վրա կորորվեիք: Չասված խոսքերդ փորձաքար էին: Յամբերությունս անափ էր: Կուզեի ասել՝ չվախենաս, քեզ ափ կհանեմ, չես խեղդվի: Աչքը ուրիշի էր փնտրում: Իզուր էր այս ճամփորդությունը: Նավն էլ էր շվարել ծովի կենտրոնում: Յուշերս անցյալի Նեղուցի մեջ էին խրվել: Ապագան ինձանից էր գրկվել: Կայմի վրա սիրագույն բառ իսկ չկար: Ափը ո՛ր է: Բանաստեղծությունս ինքնասպան եղած ուրու է: Շոյանքե կրակները մոխրացել են: Մենությունս վրան ռեքվիեմ է գրում... Արդեն սերը տեղ չունի աշխարհում, թեկուզ անունը լինի Գարուն...



Արարատը մոր պես կանչում է: Ախր շանտ եմ հեռու: Մեր միջեւ ի՛նչ սեւ օրեր են քայլել: Ուսերիս վրա մրափող արեւին համբուրել է պետք, որ կյանքը շարունակվի: Իսկ ես Լուսից շանտ եմ հեռու: Սիրո մասին չհարցնեն... Մնաց Արարատի սառույցների տակ: Անձավներում ճգնող հուշերիս ռվ պիտի կյանք տա: Դեպի սերը տանող արահետ կամ... Ինձ սպասող օր կա՝ մաղախում նախապապուս օրինանքը, նախամորս նոր թխած գորովանքը... Զագարների մենությունն ուսերիս առած Արարատի հետ քայլում ենք: Թակում ենք ձեր դուռը: Ուր ատելություն կա՝ խուլ են: Կծերանա աշխարհը: Զանգած հրաքիս կվերածվեն հուշերը: Սիրո լավան կարծրացել է: Ե՞րբ նմանվեցի Արարատին: Կարոտի աչքերով աշխարհին նայելը ցանկ է: Կյանքից խռով ինչե՛ր ապաստան կփնտրեն Ագռավաքար իմ սրտում: Ուշացող լույսի զոջումը հուշերը շղթայել են: Խավարն ինձնից օգնություն է խնդրում: Ինչպե՞ս համոզեմ տոկա: Ամեն ինչ անցողիկ է: Օրը կգա ու կասի՝ բարեւ, անունս Սեր է, իսկ քինը... Ափիս Արարատից մնացած քար կա, վրան բախտի հիերոգլիֆն է...

...Անունս վաղուց քարի պես շարտել են Արարատի դեմքին: Գարունն էլ չի գա, որ կանաչ աչքերով նայեմ աշխարհին... Ագռավաքարին դարերի մրմուռն է: Մեջը կորել է հետքը իմ... Ձենով Օհանի պես կգոռամ. «Է՛ր ես, հայրենիք, հայրություն արա ինձ՝ թեկուզ հեռվից-հեռու, թեկուզ երագում...»:

* * *

Եթե երբեւէ պետք լինի ապրել՝ երգերս ձեզ նվեր...
Նորից գլուխս հակել եմ ճերմակ թղթին: Ի՛նչ գրեմ: Չայ-
րենիքս հեռու է: Արեւը բոլորովին ուրիշ կերպ է ժպտում:
Երկնքում գրվածը ինչպե՛ս են փորձում ջնջել: Խիղճը
ժխտողի սերունդը ամուլ է: Չայացքս տխուր է... Քարե
սրտերի վրա եմ գրում, որ բառի բուրմունքը փխրեց-
նի գղջման ճամփան... Բառերս ինձանից չառնե՞ք, ձյան
մեջ չթաղե՞ք հույսերս... Արգելված օրը տեղ կգտնի՞ ժա-
մանակի գրկում... Աչքերիս մեջ արցունքն է անցյալի...
Գրում եմ, որ արեւը վաղը եւս ծագի: Նշան չբռնե՞ք ինձ,
ես ձեր փոխարեն վաղու՛ց մեռել եմ...

Չամր օրը հեքիաթ է պատմում խոսքի մասին, իսկ
ես ապրում եմ հեքիաթի սրտում՝ կյանքից խռով, մարդ-
կանցից հեռու...

Բառերով եմ մխիթարվում, շամս է գուցե...

* * *

Փշոտ լռությունը խրվել էր ծիծաղիս մեջ: Մայր էի
մտել, որ լույսը գերծ մնար հողոտ հաշիվներից... Ես-
իցս չհեռանալու համար ստիպված էի տառապանքին
հավատարիմ մնալ: Ուր ձեր դրախտն էր՝ ես չկայի...
Աստծո՞ մեզ հետ կապված հույսը ծիածանից կախված
օրորվում էր...



Մարմնիս վրայի ծաղիկները երբ պիտի քաղես: Գա-
րունը ձեռքիցս ջուրն ընկավ, վերջին աշունս է, անհո-
գի՛: Սիրո հեքիաթը պատմի, որ մաշկս չթորշնի: Անունդ
տամ՝ արեւը ծագի: Յեքիաթ պատմի, ուր ձեռքս ձեռ-
քիցս ետ չմնա, ոտքս ոտքիս թշնամին չդառնա: Ինչպէս
հաշտեցնեմ, երբ մեկը աջ, մյուսը ձախ կեթա: Յեքիաթ
պատմի՝ խելքի գամ: Հույսեր չփայփայեմ հանուն սի-
րո: Պայթարից հոգնել եմ: Բախտն ինձ համար մատն էլ
չարժեց, բայց ստիպեց տեղահան լինեմ: Հիմա սիրտս
եմ փնտրում՝ հեքիաթներում է...

«Հասունացա»: Չարն ու բարին նայեցին աչքե-
րիս մեջ, ու աչքս աչքիցս թաքցրեց տեսածը: Ինքս ինձ
կեղծեցի: Կարծեցի՝ մեծանալը մեծություն է... Հիմա
օտար քաղաքներում հուշերս եմ ժողովում: Գոնե մեկը
ժպիտ փակցներ դեմքիս...

Օրեր ու տարիներ շնչակտուր վազում եմ: Ես եր-
թալիք տեղ չունեմ: Անունիս վրա լռություն է... Կյանքի
շուրջ մագե կամուրջ եմ հյուսել ու սպասում եմ արթա-
յազնի համբույրին: Արի հեքիաթը ապրենք: Վերջապես
օրը օրվա շարունակությունը դառնա: Նախորդի դահի-
ճը չսպառնա հաջորդին... Արեւը մայր մտնելուց չձանձ-
րանա: Հավատա, որ լույսին սպասող կա... Յեքիաթ
դարձած կյանքս գրավե... Կյանքը կուռճանա, ես ավե-
լի կփոքրանամ: Կրնկակոխ կիտեւեմ արեւին՝ մայր
կմտնի: Իսկ լույսի խոստումը... Ծերության փողոցնե-
րով ո՞վ է սիրում քայլել...

Սիրտս պռնկե-պռունկ հեքիաթներով է լեցուն:

Կուրծքս շոյելուց զգրւշ՝ իրականութիւնդ չմոռանաս:
Փերիները կփրկեն, որ աշխարհին կեր չդառնամ: Տեսիլ-
քի հետ հաղորդակցվեի, ուր ճակատագիրը Անտես ձեռ-
քերի խաղալիքը չէ...

Հոգնել եմ ձեւացնել, թե կապրեմ... Հեքիաթներում
մարդու ձեռքով ստեղծված թագավորությունները կխո-
նարիվեն, Թոթովախոս Ծուռը կբանա լեզուն կախար-
դանքի ու կփրկի իմպետներին...

...Անմահական ջրով ցողեմ չխոսկան օրերի կիսա-
մեռ գոյութիւնն ու տունդարձի ճամփան բռնեմ, ուր
մանկութիւնս մոր նման դեռ ինձ է սպասում...

* * *

Տաքցիւլիս սաղարթ, սառնասիրտ արմատ՝ խեղճ
ծառ, ինչպէս հավասարակշռութիւնը պահի: Թռչու-
նի բույնը թելերին առած հետեւում է երամին: Առանց
գարնան սիրո կիսելագարվի, հաստատ համոզված, որ
ձմեռն անխուսափելի է...

Նույնիսկ Քամու գրկում ուզում է հավատարիմ մնալ
հողին՝ հնարավոր է... Քանի՛ սիրո տեր է, որից հրաժար-
վի, երբ գույնի սիրտը կտորելով՝ մերկանում է... Դժվար
է հասկանալ Ծառին, թե Հավերժութեանը սանձած չես
վարճել տեղում...



Փրկեի անհետացող վայրկյանը: Հուշեի ընթացողի ուղին... Քամին նույնիսկ չէր կարող հասնել կործանվողի ետեւից: Գրված էր ի վերուստ ու կնքված կոպերով... Սիրուց օվկիաններ արարեի, որի մեջ երկինքը երկրին վերջապես անմեղ տեսներ: Պատկերն այս բանտել եմ աչքերիս մեջ: Վախենում եմ բացել, որ չգլորվի արցունքի պես: Իսկ երկնքի ցավն ինչպէս զսպեմ: Մոռացավ, որ կավ եմ, ու հավասարեցրեց հողին...

...Վիրավոր թռչունի պես կարոտով նայում եմ երկնքին: Անկարողությանս ճիչը կապույտը վար իջեցրեց ու դերերը փոխվեցին: Ո՞րս որու հոգու մեջ էինք ճախրում... Միայն թե թռիչքս չընդհատվեր, չգամվեի հողին: Ամպերը «հրում եմ հեռու, որ տառապանքովս չվարակվեն...»:

Սրտիս ինչպէս հավատացնեմ, որ հողը հաստատուն է, հողի վրայից ընկնել «չկամ...»: Իսկ չար ու բարու թռիչք-անկումը, ուր երագի սահմանը դրվեց, վրան կյանք կոչվող «տապանաքարը»...

Ճննդավայրս հեթաթն է, ուր աստղերը կոցահաբելն անհրաժեշտություն է, թե ապրել կուզես...

Օրվան ինչպէս համոզեմ՝ ծնվի: Արյանս շուրջպարը երկինք-երկրի կապն է հաստատում իմ մեջ: Մեկի վախը մյուսի ափին գորով է նկարում: Կրոնս Սերն է: Բացե հոգիդ, որ հոն եւս ճախրեմ... Արեւը շոյում է թեւերիս երագը հասնել վեր, միսիթարելով, թե ի՞նչ է հասել, որ դու հասնես: Կանցնի, մի օր կանցնի կապույտի կարոտը, կկապվես հողին... Չկապվեցի: Թշնամացա նույնիսկ:

Թե ուսերիս թելեր չկան, ոտքերիս տարած ուղին ինչ կարելուր է... Շուրթերը, որ մարգարեությունն էին կյանքիս, էնս համրացան...

...Արելը չզգաց, որ ես իր փոխարեն ուզում եմ մեռնել: Չհասկացավ սիրուն չափը: Ուսերիս պատվանդանին է օրվա մարմինը, որ ժամանակը չօրորվի օդի մեջ: Կախաղանի պարանից վար բերեմ վաղվա հույսը: Իսկ օրը ժպիտը ձեռքին տրվում է... Ժամանակն իր երազի մեջ ինձ տեղ չտվեց: Ստիպված արցունքներում բույն հյուսեցի, որ անտուն չմնամ... Դրսում զարմանքն էր կապույտի՝ խառնված իմ կորած կարոտին... Երբեմն հեռանալ է հարկավոր, որ նորը ուխտի գա: Հանդիպումը մեռած հողի վրա չկայանա...

...Բախտը ներկել է կյանքիս ելքերը, որ պարտությունս անցնի գույների տակով: Հաղթանակի կամար, ուր ինձ համար սուգ է, քեզ համար՝ տոն: Մերս մերժելով՝ ինչ շահեցիր: Ես՝ կորցրրի մահը տանող ճամփան: Ինչքան սիրեցի՝ անմահացար: Ես՝ վայրկյան առ վայրկյան մահացա, խմելով քեզ մոռանալու էլիքսիրը...

* * *

Մոլորակի կապույտ արցունքում մայրցամաքներ էին խորտակվել: Իրականությունը ոչ կանցյալանար, ոչ... Հողը հիվանդ էր... Բանաստեղծի ուսերին մոլորակն էր ու դարերի մեղքը... Տիեզերքի ժպիտը փոխվեց արցունքի: Հոգիս փնտրեցի ու չգտա: Ճակատագրի էջերին բառ էի արդեն...



Դուռը թակեցի, ներսից Սերը հարցրեց. «Ո՞վ է»: Պատասխանեցի. «Ես»: Չբացեց: Երբ ասացի. «Մենք», դրախտի բանալին դրեց ափիս... «Սերը ես եմ, էս եմ», - ճչում էին որոշ ծեծված օրեր, իրենց վրա առնելով մեղքս... Օրերը համարձակ, վիրավոր... Ամենքն էլ սպասումից հոգնած: Ապրելու ծարավ սիրահարներ, որոնց տրված չէ հարատելել: Ընդամենը քսանչորս ժամ ու... ամեն բան կծնվի մեռնելու համար... Թե հավերժության ծառի օրե պտուղը համտեսես, իրավունք չկա սերմը ցանել հողին... Զիմքիս մնացած տարիների նախշագարդ համը նորին կպատմի հնի ցավը: Օրը հրաշք էր, երբեմն քաղցր, երբեմն՝ դառը...



Մեր աչքերը՝ երկու երկնքի միախառնություն... Մեռության ամբարում ժողվում էի համբույրիս մնացորդներն ու նվիրում քաղցածներին... Մեր շուրթերը՝ երկու օվկիան: Չառամյալ Սպասումը թրատել էր հորիզոնի ճիգը մեզ հասնելու: Ի՞նչ սերեր էին իրենց մանկությունը խաղում այնտեղ... Չհասունացան... ու ամեն ինչ դարձավ երաժշտություն՝ Լռության նաժիշտը դառնալով...

* * *

...Կորած բառերից կախված ճոճվում էի: Ճերմակեցի էջ առ էջ, երբ տառապանքը ճեմեց տխուր: Ու որ ցավը բթանար, հարբեցի բառերով: Դու հեքիաթ պատմեցիր, ես հավատացի ու էջերս բոցավառվեցին: Տողերը մյուս աշխարհի գնացող մարգարե էին: Յետեւեցի, ու առավոտը անողծվածացավ... Թե ուշանաս, օրերն ինձ ծունկի կբերեն: Արի մահը քաղցրացնենք, դառն է համբույրը վերջին բառի...

* * *

Արցունքս էջերը այրեց, բայց մոխրացողը ես էի... Բառեր են անձրեւում ճաքած շուրթերով աղոթքիս դեմքին... Աչքերս ինչհն են կարմիր: Տիեզերքն ինչհն մատն էլ չի շարժում, որ ես հող չդառնամ... Մուսա, հողի՞ն վրա ինչ ես գրելու...

* * *

Որպեսզի աշխարհի ու իմ միջեւ հավասարակշռություն լինի՝ ինքնախաբեությամբ զինվեցի: Ճամփաներին օրոր երգեցի ու կորա իմ մեջ... Ապագան եկավ: Ոչ ես էի ոտքի վրա, ոչ ներկան...

* * *

Կարոտները թափվում էին բախտի հարցումին. «Յո՛ւրթա...»: Չգիտեի ընթացքն օրերի, չհասա հորիզոնին: Սիրո հետ միամբողջություն էինք: Հիմա ո՛ւր է ձիավորն իմ, ո՛ւր է գնում, թե անհնար է հասնել երկինք... Հաջորդ քայլս ներկայի՛ վրա է, թե անցյալի հառաչանքին:

Անձրեւը մոխրագույն հուշ է մաղում, հողը շղթայում է վարճը սիրո: Անհնար է հասնել հեռացողին: Բաժանումը խրվել է բառերի մեջ ու սանձել հրաժեշտի խոսքը... Լռություն է աշխարհում: Առանց օրերի երամի Զամին տխուր է... Ձիավորը հիշում է Զամու թելերը... Վերադարձի ճամփան ո՛վ թրատեց, ո՛վ կրակի տվեց սեւի հուշերը...

* * *

Բանաստեղծության դիմակը հազա, որ մարդկանց կոշտությանը դիմանամ: Կյանքի հետ համբուրվելիս կոշտություն չզգամ: Ինչքան ինձ հատակը նետեցին՝ պատմեցի վեհի մասին, ուր բառե թռչունները պարում էին արեւի շուրջը... Իմ դեմքն իսկ մոռացա: Արդեն լոկ խոսք եմ ու լույս... Էջերի մեջ է հասցես, ինձ չփնտրես...

* * *

Քաղաքիս անունը Անհայտ է: Փողոցի սկիզբը աղոթք է, վերջը՝ մեղք, իսկ ընթացքը երկվություն է բազմաշերտ: Ամեն պատուհան՝ հարազատ թե խորթ, այրվող սահման է: Քայլ անելու իրավունք չունեմ: Լույսն իսկ վաղանցուկ է ու փշոտ: Քաղաքի օրորոցայինի մեջ հոգիս փնտրեցի ու չգտա: Եղածն էլ տրորվեց մայթերին: Անհայտի գգվանքում մենության արձագանքը կա: Տանիքների վրա ճոճվող կապույտը շատ էր տխուր: Քաղաքիս անունը շուրթերիս վրա բոց է: Չհարցնե՞ որտեղից եկա..

* * *

Բայցը բախտի ձեռնափայտն է: Թե հայտնվի տողերի խաչմերուկում, «այո»-ն իր տեղը կզիջի «ոչ»-ին: Սկիզբս փակուղու ճանկերում կորավ, ստվերով բարուրվեց հույսը: Սիրտս բաժան-բաժան եղավ: Յոսեցի աշխարհի երազանքներում, իրականության սեպագիրը արցունքներով մաքրեցի, բայց եւ զոջացի վերձանելու համար: Գլուխ չխոնարհեցի կուռքերին: Մեղքերի թելով թելեցի վեր, որ իմիջիայլոց հատակ էր: Կոտորակվեցի: Ճայերին ինչքան նման էի: Որոգայթներ, խուրթեր չարախինդ, թե դուք չլինեիք, ես դեռ ընդամենը կբայլեի...

Բայցը բախտի պորտալարն է՝ կապված ապագային: Ուր էլ գնամ՝ անցյալահամ է...

Քամին գույնը փոխեց

Տեր Աստված, թեւերդ փռի, անսերութեան եզրին եմ: Վախը կոպերս կնքել է, որ լույսը չարթնանա իրակա-
նությանն ի տես: Սիրո երկիրն եմ ուզում, ուր չկա մեկը,
ում չարժե սիրել, գույները չճանաչեն սեւի դեմքը:

Տեր Աստված, թեւերդ փռի, սավառնել եմ ուզում:
Երկինքը չի երեւում: Երկրին այնքան կապվեցի, որ հո-
րի հետ միամբողջությունս դարձանք:

Գարունները չեն այցելում, բայց ես գեղեցկություն-
ներում եմ ուզում քայլել: Առանց ոտքերի հնարավոր է:
Անցյալի մեջ իմ մասին չոր լեգենդներ կան: Չար մաղ-
թանքներ կային ինձ սնող գիշերվա սևարին: Աչքերիցս
գահավիժող աստղերը փակում են արշալույսի ճամփան,
որ օրը ինձ չգտնի: Թեւերդ բաց՝ շուրթերիցս սիրված
անունն ընկնում է... Վարից հնարավոր չէ տեսնել ոչինչ:
Միայն հիասթափությունների ճահիճ, լքվածության ճիչ,
որից խլացած օրը լույսին չհասած հեռանում է...

Տարիքս ինձ ծաղրում է, թե՛ ուշ է սիրելը, ուրիշինն
է սերդ...

Թեւերդ փռի, Ոչինչ եմ... Արցունքիս վրա է քանդակ-
ված դավաճանության անունը: Այրվեցի, որ վերադար-
ձի ճամփան գտնեիր, լուսավորվեր շողերի վրա գրված
երգը... Ստրուկը դարձա այն օրվա, որի շուրթերին քո
անունը կա: Թեւերդ բաց, սիրելիս, որ անմահությունը
գիրկդ գա...

Լռի՛ր: Ուշ է մեռնելը, թե՛ վրայիցդ մահվան հոտ է
գալիս: Թեւերդ ետ քաշիր, ապրել է ուզում հոգիս...

Երբեմն արեւի ժպիտը կեղծ է, անձրեւի սերը ուղղ-

ված չէ հողին: Դրախտակերտ թելերով քեզի եկա, թելաթափ հեռացա՝ ինձ թողնելով անցյալում... Չհիշեց-
նեք սիրո մասին հազարամյակներ:

Իրական կյանքը մի քանի ակնթարթ սիրո հե-
քիա՞թն էր: Տարիները «իմաստություն» են խաղում, ժա-
մանակի հետ ինձանից են բամբասում: Զմծիծաղելով,
թե սերը պատահմամբ ետ վերադառնա, ոչինչ չեղածի
պես կհարցնեմ. «Ինչո՞ւ ուշացար, հոգիդ սիրեմ...»:

...Ուխտի գևացի Սիրուն: Յրճվանքով եռաց: Զամին
գույնը փոխեց: Մեզը երկնքի կոպերից կախվեց, ու տե-
սա՝ ինչ չպետք է երեւար: Արեւն ուղղությունը փոխեց,
օրերը իրար չհետեւեցին... Սկիզբ չէին առնում գույներ,
երգեր, խոսքեր, որոնց մեջ դու էիր... Խորթացանք ես
ու սիրոս: Պղծված ակունքներում զգացմունքներս չեն
մերկանա լողալու, սերերը չեն արեւահարվի՝ սպասե-
լով գիշերվան... Տեր Աստված, թելերդ փռի, ոտքի վրա
մնալու ցանկությունն չկա ...

...Անորոշության շղարշի վրա քանդակված հեքիա-
թը պատռվեց: Իրականության հետ ծանոթացա: Լույսը
սիրո տեսքն առած ընդառաջ եկավ: Թվաց՝ ինձանից
երջանիկը չկա՝ հեռացավ... Յիշեցի հեքիաթի կար-չկա-
րը: Յիշեցի ու հասկացա, որ չխելագարվելու համար
կուրանալ է պետք, չհետեւել ոչ մի կանչի...

Թելերս բացեմ, հեռանալու հերթը իմն է... Մի վեր-
ջին անգամ նայեմ Կյանքի աչքերի մեջ. ինքնաարդա-
րացման խոսք ունի... Ապակյա հայացքով նայեց ու
անեացա հողի մեջ... Բախտի երակներով հոսող ժամա-
նակներն իրար բախվեցին՝ ոտնատակ տալով ինձ... Յո-
ղի շերտերով բարուրված տարածությանը դրեցին մո-

ռացման գիրկը... Թե սեր չկա, դարի մեղքը աններելի է...

...Աչքերիս մեջ լույսը աղավալու պես դողաց: Չարության նշրնյլ կար հորիզոնին... Օրը չվատահեց հողին... Բախտը չթողեց ապրեմ: Ստիպված հարատեւության քարավանին միացա...

Կամուրջները անկողմնակալ սիրո դասը տվին: Ստիպեցին ծիածանանալ: Դարձա անձրելի շարունակությունը, արելի քույրը, քամու սիրուհին: Հողի տրտունջն իմ մեջ առա: Տա Աստված, մեղավորի պես չնայեմ զոհի, որի թիկունքի դաշույնին իմ մատնահետքն է: Բայց հպարտությունս գլխիկոր է, քննությունը չանցա: Ինչ պատասխան տամ Ամենակարողին: Կնայեմ վար, կնայեմ վեր: Էլ հանդիպում նշանակող չկամ հորիզոնին... «Այսօր վաղվա առաջին օրն է», - գրված էր հույսի աչքերի մեջ... Մթության մեջ եմ, աչքերդ բաց...

...Գրկախառնված երկու եակ՝ սիրո ստորագրությունն է կյանքի էջերին: Մեռնելու միտք չունի ոչ մի սիրահար, մոռանալով, որ անմահը սերն է, ոչ մահկանացուն... Ինչ պատասխան տամ Աստծուն, գիրկս թափուր է...

...Արելի դավաճանությունը... Ախր, մի երկրորդ արել չկամ... Մի ուրիշի համար արել դառնալը դժվարացնով... Հոփի պատմությունը երբեմն մաղձ էր ու թույն:

Անձրեւը հողին չհասած՝ շեղվեց հունից: Ինպէս հասնեմ Աստծուն, երբ ճամփաներիս վրա արեւներ չեն խաղում:

Խնդրում եմ, ինձ համար արել դարձիր, տար այս աշխարհից...

* * *

Օրը մահամերձ էր: Մայրամուտի ճակատը մաքրեցի՝ գույները մնացին ավերիս: Ում հավեցի՝ գունազարդվեց, ում՝ նայեցի՝ արել հագավ ...

* * *

Արելի հետ միասին ճամփա ընկանք դեպի երկինք, բայց կյանքի ձգողականության ուժը չթողեց հասնեմ կապույտին: Կորցրեցի լույսը: Ինչ էր պատահել, կրամկն էր մարել, թե՛ մեղքերիս թիվը...

* * *

Արեւմուտքի առաջ թելերս լայն բացած՝ թույլ չտվի արելը մայր մտնի, լույսը հեռանա, բայց արելը աշխարհով գայթակղված՝ չնկատեց իսկ իմ գոյությունը, չզգաց, որ ես իր հետեւից մեռա: Օրերին տեղս չասեք, որ չհետեւեն ինձ: Վիրավոր թռչուն եմ: Հույսերս չվեցին՝ իրենց հետ տանելով երկինքը: Երբեւէ կգտնեմ կորած երկիրը...

* * *

Մեկը ինձ երկնքում որսար, վար բերեր հողին: Իր երազները ցաներ հողուս մեջ, գտնեի երկիր տանող ճամփան: Մարդանալու համար պարտադիր է կյանքից հեռանալ... Մեղքերս քրքջացին հարցումիս վրա...

* * *

Օրն ինձ էր փնտրում, բայց հասցե չունեի իրեն տալու: Ես երկինք-երկրի միջեւ սեր էի փնտրում, այնքան նման էի Աստծուն: Բացեցի հողուս խեցին, ելք տվի երկնքին: Երբեմն վեր նայիր, մենակ մի թող ինձ...

* * *

Ամպը կապույտի վրա ասեղնագործություն է, բա-
նաստեղծությունը՝ սրտի վրա, իսկ սերը՝ հողու... Մե-
տաքստ հուշերս գիշերազգեստի պես կհագնեմ ու կթա-
կեմ դուռդ: Քո փոխարեն կարոտները կբացեն: Կանչերս
անպատասխան մնան, դատարկությունները կլցնեմ
չասվածոյ խոսքերով: Կբայլեմ նրանց վրայով ու կհաս-
նեմ Աստծուն... Ուժս սերն է, տկարությունս սերն է: Սե-
րը ես եմ, իսկ դ՛րև...

* * *

Գլուխս սիրո ուսին դնելու փոխարեն դնում եմ տետրակիս: Բառերն են ինձ համբուրում: Աստղերը ձեռքերիդ դերն են խաղում՝ հոգիս են շոյում: Մենությունս տիեզերքի շուրթերից կախված աղոթք է...

* * *

Սիրո նեկտարը շուրթերիս վրա է: Հին աստվածները շննդալից անցան, ու համբույրիս փոշին պար բռնեց օդում: Ես ամպամած օրերի սփոփանքն էի, լուսության ծոփքերից թափվում ու չէի հասնում ոչ ոքի...

* * *

Ճամփաները կուզեին հատվել սպասվածին, ուր դարը ծունկի եկած խորհել է: Հոնքերի տակից արցունքը գլորվել, արյունը ծորել է: Խառնվել է հողին: Ջրել է Ժամանակի ծաղիկները, որ արեւին եւս ժպտացող լինի: Ճամփաները մազանոթների պես երկրի սիրտն են փնտրում, որ ամբողջանան: Իսկ սիրտը երկնքում նորահարսի պես շորորում է: Արահետի ձեռքը վերջապես հասներ երկինք: Անցորդի աղոթքը դներ սրտիս, որ մաքուր ոտքերով քայլեր օրը...



Դարձյալ ճամփա ելա, հրերորդի շարունակությունն է... Զոգուս մեջ ձմեռ է: Ինձ կրակի եմ տալիս, որ արեւը չպաղի, գոնե երազներս տաքանան...

Գաղտնիքների հեքիաթի ներքո է կատարվում օրերի մկրտությունը: Ինձանից նշույլ կմնամ արեւ մեջ: Ինչքան ապրեմ՝ երեւակայությունս հարսնանում է, արշալույսները արնաքամվում են հանուն վաղվա: Չղջումներս հիասթափությունների ցցուն կողերի վրա են բույն հյուսել: Ինչպէս պահեմ հավասարակշռությունս: Քամին պարում է ժամանակի կամուրջի վրա: Օգնություն կանչողը դարձյալ էս եմ... Երբ ճակատագրերը բախվեն, հարցերն ու պատասխանները կթրատեն իրար: Ո՞վ է ատելության կողմը, ով՝ սիրո... Արեւը վկան էր այս ամենի, այսօր ում մեղքով մայր մտավ...

Երկրավորի ու երկնավորի հանդիպումը գրված է սիրո մատյանում: Կարդացողը կամ կկուրանա, կամ կմոռանա, թե ով էր իր սիրելին...

...Ես սիրո հետ պարում էի... Երբ հեռացավ՝ քամին դարձավ զուլգս: Մոտեցող մայրամուտի թաթերն ու աչքերս թաց էին: Ուղղակի սիրել էի, լսել ու հետեւել էի Աստծո կանչին: Սիւն էի արել...

* * *

Կյանքս թաղված է հնչյունների մեջ: Սեւ ու սպիտակից քամում եմ սիրո գույնը, անտեսանելի ձեռքերով գրկում չունեցած ուրախությունս... Փողոցների լռությունն եմ կտցահարում: Կորած երգերը երկնագույն թռչնի պես չվում են հեռու... Ինչ գրեմ՝ կորած հասցեն, թե նորը, որ դեռ չկա...

Ես ստվեր եմ, ում փայթաթվեմ՝ կխրոչի... Լույսի աչքերի առասպելը հարստացնում է ինձ:

Աղքատացողը հեռացողն է գիշերվա ետեւից... Արի քայլենք, հոգիս... Մայրերն առանց մեզ այնքան տխուր են: Միասին քայլենք ու չհասնենք իրար, խոսենք ու պատասխանը չսպանի մեզ... Թե հպվես, օրերիս ստեղծերը ծիածան կհազնեն: Մի գրկիր ինձ այդ հաճույքից, թող մի քիչ էլ ապրեմ...

* * *

Ճամփաները երկնքում սավառնող երազանքներ են որսում, տորրելով՝ փոշիացնում... Յորիզուկի վարզը արթնացնում է քնից արշալույսին: Սպասումը սպասում է գիրկդ առնես վերջին բառը, որ հեռանալիս մնաց հիշատակ: Ո՛վ էր նետել որպես ընծա, հիր անցորդը: Բառը արեւի շողի հետ պարում էր: Լսող չկար ծափողջույնը երկնքի: Միացող չկար ճամփաների խնջույքին: Երազներից չգայթեմ հանկարծ... Բայց հնարավոր է շրջանցել բախտի հաշիվները...

* * *

Իրականությունը շողը ավիս դրեց որպես ապացույց, թե ապրել եմ: Ճամփի վերջում դիմավորողը երազն էր: Յողին որդեգրված ամեն ինչ անեացավ: Միայն թե սիրո հետ չխորթանանք: Աշխարհից հեռանալիս սերը առնեմ որպես մրցանակ այս սեւ սպասման: Էլ ոչ մի ճամփա չիրամայի, թե ժամն է տեղահանության, ժամն է բաժանումի...

* * *

Հեքիաթները երբ վերջացան, երջանկության դիմակը հագա, խաղացի ամենակարեւոր դերը կյանքիս: Սահմանների մեջ չտեղավորվեցին օրեր ու տարի: Որ ճամփին էլ հարցրի՝ ոչ վերջն էր հիշում, ոչ սկիզբն էր հայտնի: Ծաղկի նեկտարը համն էր օրվա: Չհամտեսես՝ ապագայի աչքը անցյալի վրա կմնա, ու օրերի ոտնահետքը չի բազմապատկվի...

...Ուշ հասկացա՝ կարելորդ ոչ թե դրախտ գնալն է, այլ դժոխքի ճամփից ետ բերելը մոլորվածին: Ափիս կռնատի ձեռքը չկար: Սիրո ծարավն այն անցորդի, որ անապատի մեջ աղոթում է՝ անձրեւ թափվի հողին: Իր կավե եռությունից ծիլ տա սերը: Գրկի չեղած ձեռքերով ու օրինի պահը անցողիկ... Ու թե ետ նայեմ՝ միայն Աստծո ոտնահետքն է դրոշմվել ճամփիս... Սերը մայրություն կանխ օրերիս: Կհաշտեցնի՞ սեւ ու ճերմակիս: Միայն թե ծիածանը վրայիցս չառնեք, չերեւա անսերության հետքերը...



Չեփաթանալով կորցրի կյանքի ճամփան: Կոտորակված օրերը արդարության աչքերից հոսեցին: Աշխարհը դարձյալ չոր մնաց, դարձյալ չգոհացավ: Արցունքներումս ծաղիկներ ծաղկեցին, որոնց բույրից երկիրը ծիրից դուրս եկավ... Չասված խոսքերդ մեղադրականն են կյանքիս: Անմարդաբնակությունը կիրկիզի սպասման ճամփաները: Դարձյալ ընթանալ է պետք դեպի ինքս ինձ՝ ամենափշոտ ճամփան երեւի: Այդ փշերից քամել եմ դառը սերս, բախտին հրավիրել հյուր: Սիրտս գրավ եմ դրել, որ սերը չխեղճանա: Ուր էլ նավարկեմ՝ նավահանգիստ չկան: Տառապանքի կտորված կայմին վերջին շապիկս է փողփողում: Քարկոծում են մերկությունս ինձ գույներից զրկողները: Քարերը կես ճանապարհին բանաստեղծացնում եմ, որ մեղմեմ ցավս: Չավասարակչիռ ապրելը հերոսություն է: Ու որ գլուխ չխոնարհեմ՝ արյանս մեջ պեղում եմ բախտի թողածը...

Չեփաթի ինձորը կերա: Դրախտը ինչո՞ւ լույս աշխարհ չեկավ...

Աստված պիտի մեզ փնտրի, թե՛ մենք գտնենք Աստծուն...

Դրախտի կաթով մեծացա...

Օրերս բախտի որսն էին...

Տարիների ուռկանի մեջ խճճվել եմ, ո՞ր է ելքը...



Չայրենիք եմ ուզում մուլտրակի պես կլոր ու բարի, ուր էլ գնամ՝ ոտքերս նորից հոն բերեն...

Շոյենք նայողի հայացքը ու խաբվածների արցունքներից ծով արարենք: Օրը շնչա, որ քսանչորսը միՖ է, մենք հավերժությունն ենք, որ կանք: Երազներս իրենց որբ չզգան... Ապագայի հողը վարեմ, ամպերը սրբեն քրտնքիս կաթիլները...

Որքան էլ վեր սավառնենք, արմատները մեզանից հաշիվ են պահանջելու: Պարտավոր ես հողին դրոշմելու անկշիռ ներկայությունդ: Տիեզերքի ընթացքը անսխալ է, թեկուզ հեռվից սենտիմենտալ է երեւում...

Չայրենիքս աշխարհի չափ անսահման լինի ու տեղափորվի ափերիս մեջ: Նախապապս պորտալարս կապի արեւի շողով: Ջրհեղեղից թըշված հողը չորացնենք ծիածանի մեջ, որ նույնիսկ մահս երփներանգ լինի...

Չայրենիք եմ ուզում, ուր գենքի շայցունը դեռ չի հնչել ու երբեք էլ չպիտի հնչի: Իրար հետ հաշտվեն «այո»-ն ու «ոչ»-ը... Լուսնի սափորից ծորի սերը: Ծծեմ, ծծեմ հրաշք գիշերը ու չհագենամ... Սրբեմ կարոտից հրկիզված շուրթերս ու համբուրեմ խավարը մութ...

Չայրենիք եմ ուզում, որը դրախտի կապույտը չի մոռացել առնել իր մեջ: Անտեսանելի կապով ժխտի բաժանման գոյությունը: Այս հեթանոսական արարողությունը դառնա իմ անմահության վկայագիրը: Ես գլխապտույտ եմ ունենում ամեն անգամ, երբ աշխարհն ու արեւը հանդիպում են իրար: Տեսնես աշխարհը վերջապես իր թեւը կոնի՞ արեւի ուսին, կխոստովանի՞ իր քնաղ սերը...

Երբ մոլորվեմ այս սուտ աշխարհում, հայրենիքս
մարմնացած բարություն դառնա...

...Աշխարհի անունը մայր է: Փորձում է ամեն ինչ
ցույց տալ կաթի պես անաղարտ: Բայց բավական է մե-
ծանաս՝ էլ չես հավատա, որ կաթի մեջ սեւ չկա...

Հայրենիք եմ ուզում, ուզածս շամո է...

* * *

Շրթունքիս ծերպին բառ է ծաղկել: Հավերժության
կանչն է հեռացող գարնան ետեւից: Բառի սերմը Եղի-
ցիից է թափվել: Զամին հարբել է նեկտարից, ու համ-
բավը դարձրել առասպել: Տողս այդ ճամփով կանցնէր,
կառնէր խոսքի բույրն իր ուսերին: Բանաստեղծություն
եմ: Ո՞ր պոետն է քաղելու ինձ, ի՞ր երկինքն է որոտալու
այդ անպատասխան սիրուց... Անանունը անունս տա՝
կծաղկաթափվեմ ու մերկությանս երզը կուղեկցի մայ-
րամուտին: Չթողեք թորչնեմ, խոսեք հողեր, որ ժամա-
նակի մեղրը դառնամ: Զաղցր վերջ եմ ուզում, քաղցր
երթ... Սիրոս ծաղկել է՝ ապրելիւ ժամն է, թե՛ մեռնելու...

* * *

Օրերն ինձ իրենց մեջ առած պարում են: Ուոթս սահի՝ մահ է, սիրոս սահի՝ անմահություն... Օրերը դաժան են, ես՝ թովիչ: Մեղավորը սերն էր: Մոռացավ ինձ կրթերի կրակին, ու ամեն բան այրվող վայելք դարձավ: Երգի շիթեր էին թափվում հուշերից: Չուսպ աչքերով նայես՝ Եվան մեջս կմեռնի: Արի կոպերիդ դրախտ նկարեմ, որ լույսը իրեն լքված չզգա: Արի օրերը կրակի տանք՝ կպահեմ...

* * *

Օրերի սեւագրության մեջ խաչ եմ քաշել անունիդ վրա: Ժամանակին ինչպե՞ս էիր փայլում, արեւի կարիք չէի զգա: Ամեն իրիկուն լույսին հարցնում եմ. «Քեզ մեկ էլ կտեսնեմ»... Արեւի պես ժպիտը դեմքիդ հեռացար: Ոչ ասիր՝ կգամ, ոչ ասիր՝ սպասի: Յնարավոր է մառախուղի վախից ճամփա չընկնել: Օրերի եռուզեռ է շուրջս, իսկ իմ ժամանակը ինքնակամ բանտվել է սրտիդ մեջ, երեսիս չի նայում: Սիրո ձգողականության ուժը հուշերիս հանդեպ անուժ է: Բանաստեղծություններ եմ գրում: Օրերը տրորելով անցնում են: Ինձ թվում է՝ դու ես, ու ցավի փոխարեն հաճույք եմ ապրում... Ե՛ս էի աշխարհի համար անձեռնմխելի, թե՛ աշխարհը՝ իմ: Լեռներ ու ծով գլխարկ են հանում սիրուս առաջ: Սիրահարվածի դեմ բոլոր դռները բաց են, ինչո՞ւ քոնը դեռ գոց է, սիրելիս... Գրում եմ անունդ անունիս կողքին: Անձրեւում է, դրախտը դարձյալ լողում է հուշերի արցունքում... Քեզ սիրելը ետմահու տրված փառք է գուցե...

Անունը Կին Է

Ճառի ականջին անձրեւը երգ է: Ո՞ւմ է փնտրում քամին, էլ ավելի կորցնելով, կորչելով հորիզոնին: Կինը վայելումով էր զգեստավորում ամեն ինչ: Ափերի մեջ էր առնում լուսինը, անտեսվածի վրայից փչում էր մենության նստվածքն ու փոշեհատիկներից աստղեր արարում, որ գիշերը իրեն լքված չզգար, ավելին՝ գիշերը դառնար կին՝ խորհրդավոր, անթափանց, եթերային...

Անունը Կին էր: Ճնվել էր արդյոք, թե՛ մենավորների երազն էր, տեսիլք... Իրականության գգրոցներում դիզվեին հոգսերը՝ ժամանակի արգանդը կբացեր, որ փրկվեին գոնե հույսերը: Ճնվել էր, որ կյանքի մոխրագույն տեսքից չկուրանայինք:

Կին էր անունը: Կյանքի ձգողականության ուժն էր իր մեջ, ու թե գրկիդ մեջ սեր չգտներ, իրենից կվաներ օրերդ մոխրագույն...

Անունը Կին էր: Ափիդ մեջ կրնի մի բուռ հող ու քո կողից կպակասի դարձյալ մեկը: Անհայտությանը սանձած՝ կծխտի բախտ ու ճակատագիր: Կին էր՝ նման էր իր նախամորը ու նման չէր մինչ այդ ծնված ոչ մի եակի: Անունն ի՞նչ էր՝ ինքն էլ էր մոռացել: Ինչպե՞ս ընդուներ չսիրվելը, ինչպե՞ս հաշտվեր տարիների հետ: Պատրաստ

Եր կիսել ինչ ուներ, բայց ցանկացող չկար... Բախտի քրքիջներից չխլանամ: Ուզում եր շտկել ճակատագիրը, դարձի բերել շեղված խոսքերը: Արցունքներով քարե պատնեշից ելք եր բացում՝ փրկության խորշեր: Ցավի մեջ բյուրեղանում էին սիրտն ու հոգին: Ուժ եր աղերսում, որ հրաժեշտի պահին ծունկի չգար, կանգուն մնային հույսերը: Հիմա զոջման կեղեւնով է պատվել, հեռու է ինքն իրենից: Ո՛ր ես սիրելիները: Չի ընդունում սիրո հակառակը: Շրթունքներն աղոթում են, իսկ սիրտը փառաբանում է հին մեղքերը... Կնոջ մեղքերը չեն ծերանում, նրանք զարդ են սիրո պարանոցին: Չոջումը խաբուսիկ է: Ցույց տվեք սիրո տառը, ու կինը դարձյալ կկենդանանա: Խորշումած դեմքը դիմակ է, խաղ: Կնոջ տարիքն իր ապրումներն են, թռիչք-անկումները գահավեժ: Օրերը ճգնում են հիշողության կիրճերում: Լավայի պես թափվում է բողոքը, սխալները՝ երբեմն գիտակցաբար արված:

Կնոջը չհավատալն անհնար է, հավատալը՝ անմտություն: Չայրույթը դամոկլյան սուր է, վրեժը՝ թույն: Թե հակաթույն փնտրեք՝ նորեն իր ձեռքում է... Մեծարեք կնոջը, գուցե գլխատվեք այդ նույն ձեռքերի կողմից...

Կին եր անունը: Առաջնորդվել եր ուզում, առաջնորդելով ձեզ... Կնոջ գալուստով անփորձությունը կրակի են տալիս: Հուշերի քարավանը չի թողնի մոլորվեք: Իրավ, ո՞վ եր ուժեղ՝ սերը, դո՞ւք, թե՛... Հիմա ամեն բան

հին ու չհնացրդ, ամպերի պես չվող, հողմերին գերի ու ամեն գիշեր հուշերի հյուսքը հյուսած նորովի...

Կնոջ տվածն է շատ, թե՛ առած-տարածը: Կինը աշխարհն է այս ու այն մյուսը՝ հաստատուն, կասկածելի՛...

Անունը Կին է: Ամբողջովին զգացմունք է: Թե սիրե՞ք՝ կմոռանա օր, աշխարհ, երկինք... «Իմ» բառը որպես խայծ նետե՞ք՝ կգայթակղվի: Կինը երբեք անհատ չէ՝ ամբողջություն է ձեզ իր մեջ առած: Չայրույթն անպարփակ է, չտեղավորվող խոստումների մեջ, ու տված բոլոր երդումները ժխտող վարկենական...

Անունը Կին էր: Առաքելությունն էր սիրել ու սիրվել: Թե սպասումները չիրականանան, կմիաս անկայծ: Եղերական երթը ժամանակից դուրս կշարունակվի: Կնոջը հիշեցնող հեքիաթը օրերի աչքերից կգլորվի: Կորցրել էր սերը, սեռը ու կընթանար... Ո՛ւր... Ինքն էլ չգիտեր... Կնոջ նահանջը նույնիսկ մահվան գուրն էր շարժում...

Կինը պարտադրված ոչինչ չի սիրում: Չի ների, թե իր սրտից դուրս արմատ նետե՞ք, ճյուղատարած չմիտվե՞ք իր հոգուն: Թե ծաղկել՝ իր ափերում, իր աչքերի մեջ:

Կին էր անունը՝ լիրիկ էր ու թովիչ: Նրա շուրջ օղնիսկ ուրիշ էր, ուրիշ էիք թե դուք, թե աշխարհը...

Անունը Կին էր: Կարծում էր՝ վերջին հրաշքը ինքն է, որ կա:

Ո՞վ ապացուցեց հակառակը: Ո՞վ խնդաց իր նվիրումի վրա: Չարությանը զգեստավորվեց ամեն ինչ: Սեւի ձեռքերի մեջ մոլորակն ինչպէս պտտվի: Գլխապտույտ ունեցան սկզբունքներ՝ անցյալ ու ներկա: Ճոճվեցին վաղեմի օրերը: Կնոջ անունը կաթած անձրեւաջրում ու օղակ-օղակ ետ միտվեց դեպի անցյալ, հետք չթողնելով ոչ ոքի սրտում: Հավատը դաշույնահարված էր: Թեեւ ընդամենը հերթական դավն էր կյանքի: Նախորդները «մոռացել» էր...

Կին էր անունը: Արեւածագի փունջը դներ սրտիդ գավին, կզգայի՞ր լույսի առավելությունը... Բաժանման կոչնակի ներքո կծերանար: Արցունքի մեջ ծաղկած ծաղկի անունն էր Հուշ: Չղջում, գուցե Կարոտախտ: Ծառացած փոթորիկներում ուլթեր էին խորտակվել, ինչէր էին փրկության արժանի...

Կին էր անունը: Սիրո հավատարմագիրը համբույրներով էր կնքել: Խարիսխվել էր սիրված շուրթերին: Գրկախառնումները առազաստ դարձրած՝ նավարկում էր դեպի անհայտություն: Տարիների մամուռը հեթիաթ էր

հյուսում շուրջը: Միթե հեռանալը անհրաժեշտություն էր՝ վերադարձը երազին որդեգրած... Գտնվեր սիրո առաջին ճրը... Հայացքի հունը փոխվեր, որ էլ անցյալ չհոսեին բառերը...

Կին էր: Անծանոթ ոմն ինչպէս դարձավ այսքան հարազատ: Ներծծվեց եռթյան մեջ, փոխեց արյան բաղադրությունը: Բայց արյան խումբը չհամընկավ, ու տակնուվրա եղավ կյանքը: Ոմն օտարական դարձավ իր ես-ը, հենարանը դարձավ կյանքի: Երբ լքեց, երերաց աշխարհը, հոգին: Ոսկրացած օրերը դրվեցին երազների ուսերին: Ստիպեցին կոտրված կայմով ճամփա ընկնել: Բայց տախտակամածը հանդիպում չէր ծնում: Լքվածության ալիքները վայրկյան առ վայրկյան վեր էին խոյանում, թեեւ խեղդվելն անհնար էր՝ աղի էին վշտի ծովերը: Կողմնացույցի վրա չկար սիրված անունը, որով գտներ ինքն իրեն...

Անունը Կին էր: Սիրով ներծծված օրերը վայրկյան էին, ասես: Երբ իրեն գտավ սիրո շրջագծից դուրս, վայրկյանը տարվա տեւողությամբ էր վանկարկում...

Անունս ինչ էր՝ դրախտի դռների վրա էր գրված, իսկ բանալին կոտրել էիք ձեր իսկ ձեռքով...

Կարմեն

Իրականությունն ուզում էր ոտքի վրա մնալ, իսկ ոտքի վրա մնալ հարբած երազների համար արդեն ուշ էր: Մոլորակը պարում էր հրդեհված հնչյունների ներքո: Իսպանուհին խավարը շալի նման ուսերին առած՝ գայթում էր: Ծուփերն անկումն էր խոստովանությունների: Երբ իրանը խոնարհվե, կրծքի պայթյունն անխուսափելի էր: Սրտով էր առաջնորդվում, ականջ չէր դնում բանականությանը: Կիրթը տաք բառեր էր մրմնջում: Օդը երաժշտություն էր գումարում այդ ամենին: Ուզես, թե ոչ՝ պարանոցդ կխոնարհես սիրո առաջ՝ կամ գլխատվելու, կամ թագադրվելու պայմանով...

-Կարմեն, չափը չանցնես...

Գիշերը կնոջ տեսք առած հռչում էր:

-Կարմեն, կվճարես թուլությանդ համար...

Ո՞ր կինն է ընդունում իր անզորությունը: Գրոհում է, գրոհում է, մինչ գրավի արեւը: Կրակն այդ որպես ծաղիկ մազերին խրած ճեղքի սիրո միջուկը: Դերթական զոհը կշշնջա.

-Կարմեն, դու ի՛մն ես...

Բայց օրը կփարվի առաջին պատահածին, կուզի զգացմունքների թարմություն:

-Կարմեն, սրերի վրա ես պարում...

Մեղեդին թեժանում էր: Բաց են ծուփերը հեշտանփի: Ձեռքդ մեկնիր ու քոնն է վայելքը...

-Կարմեն, կրակից հեռու...

Կինը չլսեց կանչերը մայր-Կյանքի:

-Կարմեն, վռնդիր գրկիցդ գիշերը...

Ժամանակը հեքիաթե մամուռ էր հյուսում: Իրակա-
նությունը գլորվում էր օրերից դուրս... Կինը առնական
ձեռքերի ակցանը բացած՝ ուզում էր ցույց տալ իր ամե-
նագորությունը:

Տղամարդն ինչքան էլ գլուխը կորցնի՝ սթափուփու-
նը կրնկակոխ հետեւում է սրտին: Գուցե դրամ համար
կնոջ աչքին հաշվենկատ երեւաց: Հավատ չներարկեց
այդ «միհշխան» սերը: Բայց սթափության դրոշը ինչ-
քան էլ ալիքվի՝ սիրո գալով կուշաթափվի արյունը, ու
հետքն իսկ չի մնա ոչ անմեղության, ոչ կարմիրի...

-Կյանքի առաքելությունը սիրո մեջ է: Ինչ սահման-
ներ, երբ արփին ինձի է փարվում,- աղոթում էր կինը:

-Բայց կա եւ մոխիր, գիշեր կա խավարծին:

-Չեմ ուզում լսել վերջի երգը: Արեւը հար է, արեւը
կյանք է, անմահ...

-Արեւը ցնորք է, դու՝ մահկանացու...

Կյանքի հորդորները մի կողմ նետած՝ կինը փորձում
էր «հարատելել»... Արագանում էր օրվա սրտի տրոփը:
Պայթյունը պատճառ պիտի դառնար մոլորակային աղե-
տի: Հետաքրքրված ամբոխն ակցանի պես իր մեջ էր
ամել կնոջը, որ ոչ մի ժեստ բաց չթողներ: Աչքաթող չա-
ներ ոչ մի խաչվող հայացք: Դատապարտում էր վայել-
քը, որը համտեսելը «արգելված էր» իրեն: Առանց խղճի
խայթի օղակն այդ գիրկն էր առնում ոմն համարձակի,
օդում դրոշի պես ծածանում անշունչ մարմինը խեղճի:
Ըմբոստն այդ առանց երագ ծանրացել էր: Թե դժոխքը,
թե դրախտը մերժում էին իրեն: Սերը դառնում էր ասք,
շրջում բերնեբերան: Կշեռքին դրվում էին իղձերը: Ու-
զում էին հրաշքի վկան դառնալ: Կարմենը մեկ նետվում

Եր սիրո գիրկը, մեկ դավաճանության: Իրար թրատում էին թշնամի ուժերը: Արնախում բիբերը «ճչում էին».

-Կարմենը միմիայն իմն է... Բայց կնոջ մտքով էլ չէր անցնում հավատարմության երգը:

-Սերը եզակի՞ է, ո՞վ է համարձակվում արեւի շուրջ ցանկապատ դնել...

Պարեղանակի գույներն էին փոխվում: Կինը ծուղակ էր լարում զգացմունքներով, մոռանալով, որ արշալույսը մոտ է, երազները լույսի ներքո հոգս են ցնդում: Առավոտյան երեւան էին գալիս շպարված համբույրները, տարիքը կեղծ: Կնոջ համար ամեն բան խաղ էր: Ալարկոտ ժեստով ետ էր հրում գիշերվա զգվանքները: Գնում էր լուծվելու առօրյա հոգսերի մեջ: Երբ գիշերը վրա հասներ, օրվա բեռը ուսերին նետած դարձյալ ծփալու էր խաղընկերոջ ոտքերի տակ... ու շարունակվելու էր խաղը դանակի եզրին...

Ո՞ր ուժը կարող էր ետ մղել թովչանքն այդ մեղրածոր: Սիրո մոլորակը դարձյալ պտտվելու էր լինելիության շուրջ, պարուրվելով հոլանի թելերին: Կրքի դաշտերով վարգում էին տենչերը, ծնծղաներ էին զարկում. «մենությանը վերջ»...

-Կարմեն, մոռացա՞ր երեկվա խոստումներդ...

-Երեկը երեկվա գրկում մնաց...

Մի կողմ նետած «հնացած»-ի սիրտը, ձեռքն էր առնում մի ուրիշ գոհ... Արեւը խարիսխ կնետնէր օրվա մեջ...

...Երգչի ձայնը սկսել էր թրթռալ: Պրկվել էին եւ լարերը քնարի: Հարկավոր էր մեղմել խռովքը վիրավոր զգացմունքների: Բայց Կարմենի մտքով էլ չէր անցնում

կտրված սրտերից ներողություն խնդրել: Տղամարդը հետևում էր կնոջ քայլքին... Կնոջ մակընթացություն-տեղատվությունը սովորական երեւոյթ էր: Մայրամուտ-արեւածագի պարը կնիքն էր հոգու: Ասում են, թէ Կարմենն ուներ մի քանի սիրտ: Որ մեղավորն ինքը չէր, սրտերն էին բազմաթիվ: Բայց օրը ձեռքի դաշույնը համբույրներով էր սրել: Կայծեր էին ճայթում հիշողության շուրթերից: Կրան փորագրված էր Կարմենի խոստումը. «Ես քոնն եմ, սիրելիս»... Մեղեդին լերդանում էր: Օրը կտրել էր սիրո զարկերակը, պատնեշել հոսքը լուսի վտառի...

-Կարմեն, ինչպէս համարձակվեցիր սիրո հետ կատակել...

Կյանքի զգուշացումներն անօգուտ էին: Սիրտն ուզում էր ամեն անգամ առաջին հանդիպման ամոթխածությունը զգալ: Բայց փորձառությունը ձեւ էր դարձել: Կինը շնչում էր. «Սիրելիս, ինձ չմոռանաս»... Օրերը նայում էին միմյանց, վերջին խոստովանությունն ռմբ էր ուղղված: Անկեղծության մասին խորհելն ավելորդ էր: Մարմինը թեւ առած ուզում էր շարունակել ընդհատված պարը: Օրը կամանց-կամանց իր տեղը գիջում էր մի ուրիշ օրվան: Իսկ մեղեդին շարունակում էր գովքը կնոջ, որը «ոչ» ասեց մահին... Իր ետեւից պտտացրեց ինձ, ձեզ ու դեռ շանտ-շատերին...

Ճակատագիրը մարգարեություն էր ցողում վերից: Երբեմն կարդալ է պետք ամպերի գիրը, որ իրական սիրո շաղախով հունցվեն եղելությունները...

-Կարմեն, ռւր ես, ինձ էլ հետդ առ...

Ամենուր լսվում է քրքիջը, իսկ դեմքը չկան ու չկան ...

Սերը չկա ու չկա... Դավաճանություն՝ ինչքան ուզես...

Քո օրենքներով չխոսես սիրո հետ, թե ամեն տառի տակ չի ստորագրել անմեղությունդ, նվիրումդ, հավատարմությունդ լույս...

Անհայտությունից չի վախենում կինը: Ելքերը խցա-
նում է համբույրներով, որ մուտքն անծանոթի համար
արգելված լինի: Բայց այդ բանտվածության մեջ շնչա-
հեղձ են լինում երազները: Իրականությունը ցույց է
տալիս իր իշխանությունը, բաց կինն ապացուցում է,
որ երազի առջեւ ամենքը պարտված են ի վերուստ:
Ուր սեր չկա՝ չկամ եւ ես: Չկա ոչ գույն, ոչ բույր, ոչ երգ:
Առանց այս ամենը վայելելու, չասես, թե ապրել ես, չա-
սես, թե տղամարդ ես դու...

-Կարմեն, ո՞ր ես...

-Ամենուր եմ, ամենքին եմ, հոգի՛ս...

Կարմենը սիրտը խայծ դարձրած գրգռում էր արեւ-
ներին: Մատաղորի պես ծածանում էր երազները: Տղա-
մարդիկ նրա անհոգությունից գազազում էին:

-Օլէյ,- ճչում էր սիրո հետ խաղացող կինը: Պա-
րում էր կրակների պես, կրակներից թեժ: Ու... Նիզակը
խրված է հերթական գոհի սիրտը: «Չաղթանակած» կի-
նը ծափողջույն կսպասի այն անմեղներից, որոնց սերը
մի օր լքեց: Վրեժի ծարավ այդ աչքերը հատուցում էին
պահանջում եւ իրենց տեղը: Կարմենը խոնարհվում էր
հանդիսատես ժամանակի առաջ, չնկատելով, որ սլաքի
նետը ուղղված է իր սրտին... Վիրավոր տղամարդը ու-

ժերը հավաքած անցել էր գրոհի: Հաշիվ էր պահանջում:
Հրապարակ էին նետվում կնոջ զոջման թովչանքները:

-Կեղծ են, ուշ է, չեմ հավատում...

Ո՛ր... եղջուրը խրվեց խաղամուլ սիրո կողը: Ուզում էին ցրել ցավի ուշադրությունը, որ Կարմենը նահանջի ելք գտներ, պահվեր անցյալի ստվերում: Թեեւ կինը անցյալից խորշում էր: Գաղտնի էր պահում եւ սիրո ոտնաձայնը, որը մի տոր աղետի սկիզբ էր գուցե... Երկրագունդն իր դիրքը մոռացած՝ հետետում էր կնոջ անկումին: Տիեզերքի ոտնահետքը ո՛ր էր դրոշմվելու՝ բաժանման սրտում, թե՛...

-Օլէյ, ո՛ր են համարձակները: Սիրտը գրավ դնող չկամ հանուն ինձ...

Հուշերի արնահոսությունը չէր դադարում: Երկրի ձգողականության ուժը իրականությանը ստիպում էր երազները վար բերել: Կյանքին համոզում էր բուրթ մատը խոնարհել, որից դադարում էր բաբախել ապրումի զարկերակը: Աշխարհի աչքի առաջ սիրահարվածի անշունչ մարմինը դուրս էին նետում: Զարշ էին տալիս եւ Կարմենին դեպի կուլիսներ:

-Արժանի՛ է, հրապուրանքի ձեռնոցներով խաղաց իրական սիրո հետ...

-Խեղճ աղջիկ,- հառաչում էր հանդիսատես օրերից մեկը,- ընդամենը ցանկացավ առանց պայմանակա-
նությունների սիրել...

-Ի՛նչ հանդգնություն,- մեջ ընկավ մի ուրիշը,- ո՛վ է իրավունք տվել խաղաքարտերի պես օրերի տեղը շարժել: Դիմակով ներկայանալ կյանքին ու դեռ կեղծել բարոյականության օրենքները...

Աշխարհում խղճմտանք վաղուց չկար: Փնտրող էլ չկար, թե ինչ է կորստի անունը: Օրերը չնմանվեին՝ն Լախասահմանվածին: Հիացած գալիքը կնոջ կանչին էր սպասում: Բավական էր մի ժեստ ու... արյունաքամ էր լինում դարձյալ սերը: Ժամանակն իր դերն անգիր էր արել, թմրեցնում էր մեր վերքերը՝ Կարմեններ կամ գուհեր դարձած...

-Օլեյ,- ճայթում էր մտրակը:

Կյանքը հունից ելած՝ փախնում էր արեւի հետքով...

Օլեյ... ու արյունաքամ վերջալույս, գիշեր...

Երբեմն զգացմունքները կանցնեն՝ չնկատելով քեզ, ու անարժան փոքրոգիները ներս կխուժեն: Հպարտությունդ կուլ տված կճչաս:

-Ես ձեր հերն եմ անիծել...

Ոչ միշտ է սերը սիրո գարդը: Ու օրերից մեկը ժամանակից ծնկաչոք ներողություն կխնդրի...

-Հանցանքներս չբարդե՛ք սերունդներիս վրա:

Քո գորշ կյանքից ծիածանը չուշաթափվի՛ հանկարծ, չաղավաղվի՛ գույների երթը: Կամարը անգույն տեսքիցդ ոտքի վրա կմնա: Ձեռքիցս չփախնի Աստծո տված ոչ մի օրը, ոչ մի տենչ որբ չմնա... Բայց իրականության հաշիվները ոչ միշտ են ճիշտ: Ոչ միշտ է մեր սպասված գույները համընկել կյանքին: Յոթնագույնի մեջ եմ փնտրում եությունս, բայց չկամ ու չկամ... Այսինքն կա, այն ութերորդը, որը ոչ ոքի կողմից չի ընդունված: Նորարարություն չի

սիրում կյանքը, իրականությունը չի լսում երազի կանչը:
Իզուր մի փորձե՞ք ինձ թովել...

...Ծիածանը ծաղիկների գունավոր թռիչք չէ՞ դեպի
երկինք: Թե ինձ ուզես քաղել՝ գուցե ծիածանից պակա-
սի գույներից մեկը: Անձրեակաթիւը չքարանձ էրկնքի
կոպին... Ժպտալուդ պահին աշխարհը յոթնագույն է
հագնում: Բնության ստիկներից ծորացող կյանքը փո-
խում է բաղադրությունը հոգուս: Ստիպում է ապրել ու
մեռնել միաժամանակ: Ես սիրահարված եմ քեզ, տիե-
զերք:

Հոգիս քեզի ընծա...

* * *

Մենությունը հուշերի կրակով հմայված սպանեց
ներկան: Միեւնույնն է՝ չիջեց եռքը տառապանքի: Եր-
կիրն իր գիրկն առավ բոցերը թաց, չորացրեց գարնան
վարսերով ու գալիքի երկունքը դարձրեց հավատամբ...
Լռությունը ժխտում էր պատճառ ու հետեւանք: Ժա-
մանակի շուրթերից կախված լրնռ օրորվում էինք ես ու
Բառը... Չարմանքի աչքերից դարեր էին գլորվում... Զր-
քիչս թեժացնում էր հիշողությունների կրակը, ու խցան-
վում էր տարածության քայլքը:

Գամվում էի հողին...

Աստված դարեդար կանչում էր ինձ: Ես հարցնում
էի. «Ո՛ր ր գամ...»:



Ինչ սեր է պոռթկացել սրտիցդ, Տեր Աստված, երբ երազիդ մեջ աշխարհն առաջին անգամ աչքերը բացեց: Ո՞ր էր ես մինչ ժամանակը կհավեր սրտիս: Երազիդ ղր գույնն էի: Ի՞նչ ուժ է պետք, որ սպասես սիրելիիդ դարեր ու տարի: Գույներն ի՞նչ համադրությամբ ես շաղախել: Անսեր ծվեն անգամ չկա տիեզերքում: Մեկտեղ սկսեինք ճանապարհը յոթսորյա, ճանապարհը հավերժի: Չեմ գտնի երկինքը, թե անսեր է հայացքս: Երբ հունցեցիր երազս, սկսվեց պահը Գոյի: Բառը բույն դրեց հեքիաթի շուրթին: Եղիցին պատռեց բողն աններդաշնակության: Երազը լույսի հետ խաղընկերացավ: Ու օրը շարունակ օր պիտի ծներ: Երազը մի ուրիշի երազին տրվեր... Փորձել ես բուրբոսի ուրիշ կյանքից ճամփա ընկնել, հասնել հոն, ուր քեզ հիշեցնող ոչինչ չկա: Գույն անձրեւեր օրինակքի, գորովանք դառնայի նվիրման ճակատին: Աստված գոջար, որ երբեմն մատնել է ինձ փորձության: Ուզում եմ տիեզերական ավետիսը լինել՝ չարին վերջ... Մեղքը ղր երազովս լվամ, որ մանկանա, սեւով չպատի ինձ: Տեր Աստված, ուժ տուր մարդ դառնամ: Մի ողջ կյանք փորձում եմ՝ չի հաջողվում: Ինչպե՞ս գտնեմ ներդամտության ձյունը, որի համաձայն ոճիրներս ճերմակով պատվեն, զոցվեն ճամփաները որոգայթի: Ափերիս առնեմ երկրագունդը, որ դարերի գլխապտույտը «դադարի»...

Հայացքս ճայերի ճախրանքն է համբուրում, սիրտս առագաստ դարձրած ընկերանում եմ նրանց: Համբույրս կաթում է ծաղկաթերթի մեջ՝ փոխելով բույրը նեկտա-

րի: Աստված գույների միջից ինձ է նայում: Չգում եմ, որ ապրում եմ, կամ... Սեր, ամենուր թեզ եմ տեսնում, բուռ-բուռ քաղում եմ աջ ու ձախից: Բաժին եմ հանում ծանոթ-անծանոթ օր ու գիշերին: Ամենահարուստ սիրահարն եմ: Ինչպես ընդունեմ, որ դժբախտ եմ, մենավոր... Սրևտ է, երջանիկ չլինելը մեղք է, թե արեւը ժպտում է դեղին: Հարցերս տապան են փնտրում: Մի երկրորդ կյանք տրված չէ... Ինձ կմսա սիրել, սիրել, սիրել ու... Սերս հարցերիս պատասխանը չունի, իսկ ես կարծում եմ՝ ամենագոր է... Ընդամենը մեռնելն ինձ չի բավի... Ո՛վ աշխարհը մասնատեց օրերի:

Դիմակներ, դիմակներ՝ բոլորն էլ կեղծ, անհույս, շինծու... Հեռու ինձանից, աներազ օրեր... Համտեսելի նախասահմանվածը ու երազներին ընկերանայի...

...Ես կրել եմ եւ նախորդներիս սերը: Ուսերիս տարել եմ եւ ուրիշների վերամբարձ հույսերը, որ անցյալը ոտնակոխ չլինի: Երբ ապագան ինձանից հրաժարվի, իմ փոխանցեմ դրանց: Նույնիսկ անունս չեմ հիշում... Հավերժությունը ծվարել է կողոսկրերիս վանդակապատ աշխարհում, կամովի ընտրել սիրո կալանքը: Գուցե հանդիպե՞նք կորած դրախտում: Ադամի աչքերով ինձ նայես ու Եվայանամ, ու կնանամ ինչպես ոչ ոք մինչ այս... Անսերության մենավոր կաղապարից փրկեմ եւ թեզ, արձակեմ զգացմունքի կապանքները... Աշխարհը պտտվի արարման առաջին օրվա պես, առաջին օրվա շուրջ...

Սավառնեմ, սավառնես, սա-վառ-նենք՝ պատրաստ ես...



Արեւի հետ համբուրվելիս՝ անունս շուրթերին եմ գրել: Չմոռանաք ինձ հավերժական աշուններում: Ինչպէ՞ս հիշեմ անունս, երբ դեղին չկա: Անձրեւը չթրջի՞ արեւին: Լույսի համբույրը շուրթերիս հեքիաթ է: Ձյունը արեւի հրաժարականն է: Կեղծ ժպտաս՝ աշուն կգա: Ինձ չխաբեք տարվա եղանակներով: Տերեւին դաշվել է կյանքիս պատմությունը՝ ժամանակին վերելում էի, երազանքների ծառին: Լույսը չթողեց չարի սահմանն անցնեմ: Ու թե սայթակել եմ՝ մի ոտքս միշտ պահել է բարու աշխարհում: Կորչի այն օրը, երբ լեզուս նզովք է առել, եփել է կյանքս դժգոհության կաթսայում: Գիշերը գույն-գույն երազներով խաբեց: Ինչպէ՞ս դավաճանեցի առավոտին: Ժամանակը կընթանա՝ անհաղորդ իմ գոջումներին: Ինչ-որ գարուն եմ փնտրում, որը մի ժամանակ իմն էր: Օրերս ցաքուցրիվ են:

Սրտիս գրքի մեջ արեւ եմ քանդակել: Շողերը անոթների պես տարածել եմ տիեզերքով, որ մութը գեղեցիկ թվա: Կծածանվի գիրս երկնքում: Վերջաբանին համբույրդ շուրթերիցդ կխլեմ: Թե տկար լինի երեւակայությունդ, հոգիդ պարապի վրա կտարածվի: Իսկ թե բանաստեղծության մեջ թաթախվես, կլինես այն բառը, որի վրա դեռ արեւ չի ծագել: Կյանքը դեռ չի սեւագրել իր պատմությունը ու թողել, որ բախտը ուղղումներ անի: Գուցե հասկանաս՝ իմաստությունը ո՞ր է, հանճարը է՞րբ է ծնվում... Լեռը խորքերից կկանչի. «Ինձ մոտ չէ...», անդունդը՝ «Ինձ մոտ չկամ...»: Երագողի գաղտնիքը այս է. «Չարությունից հեռանալը հանճար է»... Արեւի

ուժն ունեն դարձյալ ծագելու: Արեւը տառապանքիս վրա անմահությունն նկարեց ու մայր մտանք... Հանճարի ճամփան չի տեղավորվի ժամանակի մեջ: Հանճարին է տրված բացել արգանդը մտքի ու սրտի, շրջել սիրո անդունդներով... Մուսաների գինարբուքին տավիղի լարերը հանճարի անոթներն են, կյանքի հետ կապող արմատներն են անտեսանելի: Հանճարի սրտից Լույս կհոսի, ու ժամանակը մրցանակ ստացած՝ կճեմի դեպի անմահություն... Պատմությունը կթերթի դարերի էջերը ու կխունանա... Արեւի վրա քանդակված սիմֆոնիան աշխարհը կդեկավարի: Հրաշքը գեղեցիկի տեսքով կմտնեա ու թե հավի՛ կանմահանա...

* * *

Անձրեւի համբույրն աղի էր: Չներեցին թռչունները, քաղցրահամություն չգտնելով՝ չառան ինձ իրենց թելերին: Երազների վրա երկինք նկարեցի ու տեղափոխվեցի հոն ապրելու...

* * *

Երկնքի էջերը ո՞վ թերթեց անհոգի ձեռքերով: Աղոթքներս մնացին որբ: Տողերս քայլել չսովորե՞ն անմարդկայինի հետքով: Հողին չդավաճանելն անհևար է: Ժխորների լեզուն շատ է չոր: Անձրեւի, մեկտեղ սրբվենք հեքիաթի սուտից: Չասեցի՞ր՝ մեկտեղ ու ընդմիջտ... Ինչո՞ւ է այս լռությունը...

Երազից գայթաճ մարդը

Արեւը պատուհանս թակեց: Ուզեց գաղտագողի ներս մտնել: Սիրտս ասեց՝ ամոթ է: Ճառագայթաձեւ ծաղիկներ նկարեց ապակուն ու հեռացավ: Ողջ գիշեր զոջացի մերժելուս համար: Լույսը կորցնելուց հասկացա գույնի հեքիաթը: Պատմեցի աստղերին: Շատ ազդվեցին: Նետվեցին օգնության: Կես ճանապարհին խավարին կեր եղան: Աղոթքս կտրեց լռության երակը... Դարձյալ գայի՛ր, թեկուզ մայր մտնելով ուրիշի գրկում: Այս մտքից թմրած՝ զգացի, որ աչքերս խուտուտ են տալիս: Արեւս էր, վերադարձել էր, լսել էր կանչս: Շողե վարսերը փռել էր դեմքիս: Համբուրում էր՝ ինչպես մեղուն է խայթում ծաղկի անմեղությունը: Նեկտարից հարբած մեղրամոմ պալատներ էր կառուցում, ուր ապրում էին հուշերը: Համտեսողին թունավորում էր անմահությամբ: Արեւին հասնող կամ: Ամենաչքնաղ ծաղկի սրտից քամեմ լույսը ու հարբեմ մայրամուտով... Գուցե հաջողվի հեքիաթի «չկամ»-ն էլ փրկել, որ սերը գա ու չգնա, գիշերները չգրոհեն, ինչպես սեւ գնչու: Մոռացնել տան իրակաևության օրենքը: Ինձ դարձնեն երազե աղջիկը, երազի տերն ու արքան...

...Հուշերը հետևեցին Քամու կանչին, բայց սիրտս ասեց՝ ամոթ է: Մերժված քամին գժվեց ցավից: Ձեռքի ծաղիկներով ապտակեց ու հեռացավ: Վազեցի, վազեցի ետևից: Կորցրի եւ ինձ, եւ վերադարձի ճամփան: Կանչեցի՝ ռւր ես, հոգիս: Սիրտս պատասխանները տեղահան էր արել: Հողմերի բաժինն էի: Ո՛ր էի, հյուսիս, հարավ... Օտար էի անծանոթ երկրում: Կասկածի

հայացքներին ի պատասխան կուզեի ասել՝ ես քամու սիրուհին էի... Չարախնդորեն ցույց էին տալիս քամու սիրաբանությունը ամենքի հետ ու... Երագանքը թեւեւ-րիս մեջ չպարփակվեց: Հուշերը կոպերիցս կախվեցին, որ ոչ ոք աչքերիցս ներս չմտներ: Ինչպէս հասնեմ հորի-զոնին, թե ափը ակցանել է հոգիս... Հեռացա՝ չհիշելով արեւի երգը, քամու երթը ու այն ամենը, ինչ սերը մի ժամանակ խոստացել էր ինձ: Կհասնե՞ս սրտիս: Հորի-զոնները փորձել են ու ձախողվել: Թռչունները երդվել էին բույն հյուսել ամպե ճերմակին, էլ չլսել՝ թողնելով ամեն բան բախտին կեր: Իզուր է սիրուց սեր կորզել՝ ավելացնելով վայելքի տոնը: Սերը կառնի քեզանից՝ ինչ կամենա ու... պակասելով կավելանաս ինքնամոռացու-մի ծաղկաթերթում: Սպասելով, թե գարունդ ինչպիսի՞ն կլինի: Աշունը շմտ անխիղճ կվարվի պատառոտված գեղեցկությանդ հետ: Իսկ ձմե՞ռը... Մի հարցնի: Միակ ցանկությունս է առանց տապանաբարի, որ գարուն-ների ոտքը համբուրեմ, ժամանակի քայլքը զգամ եւ տիեզերքից դուրս... Հող դարձած գույնս խլրտա կանա-չի կողում: Հավերժության արգանդում Հիշողությունը լացի իմ փոխարեն: Անհավատներն անձրեւ կարծեն ու պատսպարվեն իրենց չոր հաշիվներում, չթրջելով սիրտ ու հոգի հեքիաթով...

Արեւը եկել էր աղբյուրի մոտ ջրի: Ուզեց համբուրել:
Մերժեցի:

Տիրության անձավները սեւ աչքերով թովեցին:

Ջուրը ձեռքից թափվեց, շող անձրևեց առատության եղջյուրից: Թրջվեցի: Չորանալու համար արեւ փնտրեցի: Յեռացել էր: Զամու հետ ինձ էին հիշել: Սիրո օրենքները հարբած են գեղեցկությամբ: Ինչ է քո գեղեցիկի անունը: Իմինս՝ Ա՛...

...Ժամանակի կողերը շոյելիս՝ ապագայի ձեռքում շող մնաց: Գտածոն դարձավ սիրուս վկան: Արեւի գրկում անմահությունն եմ համտեսել, թեեւ երագս երբեմն ճառագայթե սարդոստայնի մեջ շեշահեղձ էր: Կորելով գտել եմ անկորչելին՝ Կյանքի քույրը...

Անսերները գլխատել են լույսը, թաղվել անարեւ ինքնասիրահարվածության ճահիճում, թաղելով եւ նրանց, ովքեր արեւ էին, արեւացնելու էին, եւ ձեզ, թե արժեւորեիք սերը...

* * *

Արեւը բույն դրեց իմ ափերում: Մատներիցս լույս կաթած: Շողը կոպերիս վրա բանաստեղծացավ: Օրը կարդաց ու ցավից մայր մտավ: Չհասն էտելից...

* * *

Զամին երաժշտություն է: Երբեմն լսելի, երբեմն՝ ոչ... Ո՞վ է հասնելու երագին, ուր ամենքը հոգի են, ոչ հող... Բաժանման աչքերում թե սեր էինք, թե կիրք՝ հավերժական ու անցողիկ...

* * *

Ծառն ուզում է հողին քնից արթնացնել: Արմատներով կարգել է նրա երազներից: Ծառի կեղեւով անաւուն սերունդների երազանքներն են հոսել: Չոր ճյուղին ուշաթափվել է գույնը: Հովը կորորի, հովի հետ կպարի, նախնիների չապրած դրախտը կնկարի: Կգումարի այն դժոխքներին, որ հողի տակ են: Անտեսանելիի ցավը կմեղմի, փրկել կուզի չբայլողին: Զամին տերեւի սիրախաղի մեջ կկորցնի իրեն: Աշնանը սպասվող ողբերգությանը անտեղյամկ է... Երբ ճյուղերի վրա գույնը չգտնվի... Ինքնասպանության բոթը կհասնի արեւին, կհեռանա տեսադաշտից լույսի ժպիտը... Ձմեռը փաթիլե պատրանք կհյուսի սիրահարներին, կնախշազարդի ասքը սիրո: Լսողները հուշերով կջերմանան: Կսպասեն զարնանը, ուր զգացմունքներն օդում եռան, ու ամեն բան սկսվի նորից, հողից սկսած ու հասած երկինք..

* * *

Օրը խայթեց առանց թովելու: Տառապանքս խուզեց ու ցույց տվեց սպանդանոցի ճամփան: Հորիզոնի շուրթին էր մայրամուտի կանչը: Արեւի ժպիտը վստահություն տվեց: Մեռնելը գեղեցիկ թվաց: Հիշողություններում ապրելը դյուրին է: Դյուրին է գծել սիրո ուղին, երբ մահը շեղվել է հունից... Կորած քաղաքի աղմուկը գտնեմ ու զարկեմ լռության ճակատին: Հոգնել եմ: Սիրի, արթնանամ: Աչքերս բացեմ համբույրի ակունքին, որ դարձյալ կյանքը հաղթի, աշխարհը օրերի մեջ սուզվելով հասնի... Կհասնի՞ երբեւէ...

* * *

Արցունքը քարացել է կյանքի աչքին: Ափերս բացեմ, փրկեմ խեղճին: Միայն թե չհեղեղվի կրկին: Զանի՛ կյանք սպասեմ, մինչ ժպտա, մինչ արեւը հավատա, որ իրեն սպասող կա... Անմեղությունս հասնի Աստծուն, պատմի գլխով անցածը: Թե ինչ է ապրել մարդանալու պահին: Ինչէր է կորցրել՝ հանդիպելով չարին, այն աշխարհին, ուր արեւը գին չունի, հասարակ երեւույթ է լույսի «լացը»...

...Թե շատ վարժվենք ապրելուն, անմահությամբ կվարակվենք: Օրերի ձգողականության ուժը կույ կտա անսահմանության թռիչքը՝ զսպաշապիկ հագցնելով հոգուն...

* * *

Երբ սերը փոխվի ատելության, ի՛նչ լեռներ կհավասարվեն հողին: Վաղեմին սպառնալիքի պես կկախվի գլխիդ: Լույսը չգլխատվի՛ գոնե...

Օրվա ամեն քայլը թույն է ու վրեժ: Շղթայագերծ ծովերը քայլում են գարունների կրծքին: Յողը ներծծվում է անհիշելիության երազում: Նավամատույց չի մնում, որի ափին սպասումը խարիսխ նետե: Գեղեցիկի կողից էլ չի արարվում գույն ու երգ: Ապագան ինքնաճանաչման փորձ անի, սեւ երախը բացած ձմեռը անցյալին կոնի զոհասեղան... Երբ ատելությունը վերափոխվի սիրո, մահն ինքն իր առաջ ամոթով կմնա: Բայց նահանջելու

տեղ չկա: Հիշում է օրերը «չքնաղ», երբ իր դերը աստ-
լությունն էր ամել ուսերին, ազատել հոգսերից: Հիմա
սերը հմայում է, ինչպե՞ս ձեռնպահ մնա, երբ ինքն էլ սի-
րել գիտե...

Հողի վիրավորանքը չի բժշկվի: Ոսկորներիդ մեջ
կտարածվի, վար կբաշի ինչ վեհ էր ու գեղեցիկ... Լա-
ցող հողից պար չսպասես: Ամեն քայլս կբարկոծի: Սիրո
գարդն էլ օտար է թվում: Թե հողինը չեմ, մե՞ն կպատկա-
նի անցյալս... Ո՞ւմ պահ տամ հոգիս, թե երկինքը բարձր
է... Սպավածն ուրիշ է, ուրիշինն ես... Ահ, այս հուշերը...
Մոռացումը դարան է հյուսել: Անձրեւը թեւաբաց գո-
յություն է փնտրում, որի մեջ վաղվա օվկիանը ալիքվի:
Սիրո մայրցամաքներով զարդարի ու սպասի, թե մի
ամառինը ոտք կդնի իր հողոտ երագին: Միայն թեւա-
թափ գոյությանդ չհանդիպեմ, վերքիս վրա վերք չբա-
նաս, սիրոս անմարդաբնակ չթողնես... Իրականության
հետ հաշտեցնող երազ գտնվեր... Ինքնապաշտպա-
նության բողի տակ պատռել եք լույսը ու շարունակել
նայել աշխարհին... Ապրելու համար երբեմն մեռնել է
պետք, որ մի ուրիշը ծնվի... Արժե՞ սկսել, թե վերջաբանն
անխուսափելի է... Պատերազմի փողերի ներքո պարել
ու չհարբել արյան հոտից անհնար է... Ցավն արցունք-
ներով ջրեց հույսի ծաղիկները ու փակուղիները տողեր
դարձրեց...



***Մարդերը ինչ կատաղի
կենդանիներ են...
Ռ. Սեւակ***

Վիրավորելու համար նշան մի բռնեք: Թե իրակա-
նության մեջ, թե երազներում ծունկի չեմ գա: Թե պա-
տահաբար սպանեք ինձ՝ կմնա երեք եղանակ: Յավեր-
ժույթյան հյուսթը իմ չգոյությանմբ կսպառվի, ու չորացած
մրուրը կխշրտա ժամանակի լեզվին: Ինչքան էլ նշան
բռնեք՝ տեսիլք եմ, կանեանամ... Երդվել եմ գամված
մնալ մինչեւ սպառվեն ձեր փամփուշտները, էլ ուրիշի
չմնամ... Երազներիս նշան չբռնեք... Իրականությունը
խաբուսիկ է, բարեւոյ սկսիր անուրջներից՝ հոն է եուլթ-
յանս կորիզը: Խեղանդամ մի արեք ներկան...

Արցունքներս արծաթե փամփուշտներ են, հում պա-
րանոցն են զարդարելու... Ես ոչ թե վիրավոր՝ մեռնել
կուզեմ հանուն սիրո... Կյանքին նշան չբռնեք, հոն դուք
եք, ձեր ապագան...

...Թռչունը արցունքներս թելերին առած հեռա-
նում է երազի ափերից: Ուժը սպառվի՝ տեղատարափ
է, չհայտարարված պատերազմ... Երկրագունդը սրտիս
մեջ է պատսպարվել... Ո՞ր է աղոթքի զրահը... Նրամք
էլ են քնով ընկել... Սահմանների կարծրությանը չեմ
դիմանա... Արեւի ինչույքին ատելությունները կհալ-
վեն, լույսը վերջապես կհաղթանակի... Թե՞ նշան բռնել
միայն ժպտով: Վիրավոր նժույգ եմ, հըր է վերջին փամ-
փուշտդ...

...Տեսած կանն դրախտի արժանի մարդուն: Ծանոթացրու: Ուզում եմ դրախտի բույրն առնել նրանից: Բարեւս դրոշմել ավին ու ասել՝ ես քեզի շանտ եմ փնտրել... Ռ՞ր էիր մինչ այս...

* * *

Պոեզիան աղե արձան է, որին փորձում եմ կենդանացնել: Շանտ քարկոծեցին: Զարը քարի վրա վեր խոյացավ: Ճչացի՝ «ով անմեղ է, թող...»: Զարերը կես ճանապարհին բանաստեղծացան, որ չտխրեմ... Խոսել սկսեցին... Ամեն բառը նախորդից էլ ավելի թարմ, որ չհնանա անցյալը: Հավերժությունն իմ պես լուսավոր սեւի մեջ գտնի իրեն: Առանց պոեզիա չեմ կարող... Թեեւ ունայնություն է երգում կյանքը, իսկ մահը երդվում է ոչ իմ անունով: Իսկ ի՞նչ էր անունը իմ... Պոեզիա... Առանց բառ ու տող, առանց... Բախտի կողմից խճճված ծնունդ եմ, ինձ մոռացած գոնե հոգիս եմ ուզում փրկել...

Անձրեւի նկարած հույսը ինքնաժխտում է, որին ոչ միշտ է օգնում յոթնագույնը... Հողի հետ խոսելու ժամը գարունն է: Միայն թե չուշանաս հանդիպումից...

...Անտելությունն ինձ սիրո հողի մեջ էր թաղում, ցույց էր տալիս սիրուն անզորությունը. «Ռ՞ր է, թող իմ ճակերից քեզ փրկի...»: Բախտի հետ պատերազմում իմ է հաղթել... Օրվա ելելեջները թագադրում են անելանելիությունս: Ինքնակամ դառնում եմ վերջին խոսքը սիրո: Այն խնձորը, որ չգիտի հեքիաթից բաժանվելիս իմ բաժինն է լինելու...

Ամեն մի երիտասարդի մեջ վրնջացող արյունս
եմ տեսնում: Հավասարվում եմ հողին, թե մեջս խեն-
թության մղող խինդ չկա, չկա մեկը, ում համար արժի
մեռնել...

...Կյանքը՝ զուսպ դեմքով ուսուցիչ, հարցը շեղ-
քի պես կտրում է արյունս. «Ճիշտն ասա...»: Իսկ ի՞րն
է ճիշտը... Մեղքի կեղեւի մեջ գտնում եմ պատիժը
պապերիս: Ապագային ծուղակ լարող «պատահակա-
նություններ»... Բախտս թինկն է տվել ինձ չպատկա-
նող օրերին... Իմ բաժինը փուչ էր: Իմ բաժինը մի փունջ
հիասթափություններ, որոնք գոհացնում էին ճակա-
տագրին: Ես կրնչտ եմ ճիշտ ու սխալից: Փաթաթվել եք
ոտքերիս: Զայլ անելը հերոսություն է: Ուզում եմ շեղվել
ճամփաներից, ուր դեռ ոչ ոք չի պղծել փոշու անդորրը:
Փոշու մեջ են դարավոր հուշերը, դարերի հույսերը... Ինձ
չպատկանող ապագաները օրորոցային են սպասում...
Կգտնվի՞ մեկը՝ երգի ճամփան պեղող: Արեւին հասնելու
համար ուսերս՝ քեզ: Տիեզերքի վրա տիեզերք նկարի ու
թող ներաշխարհիդ տակը ստորագրի...

...Առավոտի ազգաբանության մեջ օրերը հղի,
արեւը հույսի բողբոջի կնիք, բողբոջի վրա ժպտացող
մի սեր, ու սիրո շուրջ սոսափող քամի: Սկիզբ առած ի՞ր
հավատի ափից: Մնող մարդուն ոչ միայն հացով, ծնող
մարդուն եւ կյանքից դուրս...

* * *

Պոեզիան նեղ ճամփան է մեղավորի: Մարգարե է, որ դարձի չբերեց սեւ հեքիաթը իր պապերի: Մենությունս բաժանվել է մենությունների, որ չտխրեմ... Լռության մեջ մերկ էի, խոցելի: Սիրով պճնվեցի: Չերկմտեցի: Պատռվեցի: Ինձ փրկեցի սահմանափակող անսահմանություններից ու հասա քեզ... Ու դարձա երգ սիրո շուրթին... Հեղինակը դու ես՝ իմ բանաստեղծություն անվերնագիր: Պտուղը «ոչ» ու «այո»-իս:

...Մենավոր կատարելություն եմ: Թքած, թե սերդ անտեսել է ինձ...

* * *

Երազե-երազ վազում էին քրմուհի գիշերները: Աստղերն էին ոտքերս ծակում, թե՛ հուշերը: Փեշերիցս երազի պատառիկներ էին թափվում: Հունցում էի ժամանակի մնացորդով ու հագեցնում առավոտին: Թե աշխարհը զոհասեղանին հայտնվի, արեւը ոտքի կհանի խոստումը Աստծո, ու արցունքիս ծիածաններ կխառնվեն: Ժպիտս չայրե՞ք... Քրմուհու սրտում պաշտամունքն է Լույսի, ինչքան էլ ինքը սեւ հագնի...

* * *

Թռչունն հոգիս երկինք է ուզում, իսկ շուրջս մարդիկ են, մարդի՛կ... Փաթիլվել եմ ուզում, բայց ամենուր ինչույքն է սեւի: Պատուհանները գաղտնիքներ գիտեն ներսում մոխրացած սրտերի մասին: Իսկ ես դրսում գուշակում եմ, թե ես ու օրը ինչպե՞ս ենք մեռնելու այսօր... Հավերժության խոստումները ո՞վ տրորեց: Վրան արցունքներս ծունկի էին եկել աղոթքի: Վիրավորանքս ամեն երեկո վրեժ է ուզում: Օրը դաշույնը սրտին աչքերն է փակում: Փաթիլվում եմ, կայծակում անտարբերության դեմ աշխարհի: Միեւնույնն է, ոչինչ չի փոխվում: Լիլիթին դարձյալ վռնդում են սիրո աշխարհից, Կայենները լափում են սրբությունը հոգուս: Ինչպե՞ս ապրեմ... Փաթիլվել եմ ուզում, բայց սառցե լեռ եմ...

...Գուցե անձրեւի հետ բաց պատուհան գտնեիք, փրկեիք ներսում շնչահեղձ ապրողին... Արի ծաղկե՛նք: Արդեն քանի դար է աշխարհն առանց գարուն է... Արի ժամանակից դուրս հանդիպե՛նք...

* * *

Փողոցները տողերի պես երկարում են: Զայլերս վրան ինչե՛ր են գրում: Իմ գգվանքներից փշաբաղվում է ափը: Ինչպե՞ս պատմեմ սիրո հեքիաթը, երբ ինձնից առաջ ապրել է արդեն: Ես ծովին եմ հետեւում ու տեսածս ամեն երեւույթ դառնում է կապույտ...



Երամը կորցրած թռչունի նման հայտնվել եմ ձմռան սրտում: Մինչ գարունն ո՞վ ինձ արել կլինի: Մինչ արեւի գալը կդիմանամ...

...Ժամանակի փաթիլված պարը շատ է գեղեցիկ: Ասես, հասկանում է, որ առջեւում չի մնացել ոչ ցավ, ոչ վիշտ: Սառույցի վրա «թռիչքս» կատարյալ էր... Կյանքը փաթիլի մեջ հոգեվարք է ապրում: Երեւան է գալիս մահվան «գեղեցկությունը»: Հող չեմ գտնում թաղվելու... Կեղծ գարուններից ինչպե՞ս հարբեմ: Դյուրին է մոռանալ հեքիաթի բույրը... Հիշում ես անունս: Անունն էի սիրո...

...Պարտք եմ այն ծովերին, որոնք ստիպեցին բարձրաձայն երգել ու խեղդել շառաչն ալիքների: Թեկուզ խեղդվողը ես էի ասիերի՝ վրա... Ժայռի ծերայերից Բախտը չափեց անկումն ու սարսռաց: Խղճի խանթ զգաց... Արեւը երդվեց, որ իր տանիքին իմ երազանքից բացի ուրիշ ոչ ոք չկա... Ճայերի թետերից կախեցի նոր հասցես: Թե քեզանից հրաժարվեմ, կնահանջե՞ն ձմեռները: Ծովերը սառույց չհագնեն, չգամվեն օրվա ոտքերը...

...Այդ երբ անմահությունից զրկվեցի: Աջբերիս մեջ փնտրեցի, բայց հոն խառնվել էր սեւը: Կեղեւով պատվեցի: Երկինք հասնելու համար թեւը պարտադիր է... Բախվեցի: Բախտի հայացքն էր: Պատժվեցի: Մեղքս ո՞րն էր: Ճշմարտությունը անտեսել: Իսկ ո՞վ է տեսել: Սիրողը, սերը ու այն մանուկը, ով չգիտի ոչ իրեն խաբել, ոչ ուրիշի...

...Քառսը որպես խայծ չնետնեմ: Սառույցի վրա ծաղկած ծաղիկ եմ: Տեսես հոգուդ սառույցը կարո՞ղ եմ շարժել...

Երագս վրնջում է նժույգի խրխինջում: Բաշը շոյեմ՝ խույս կտա... Եղևիկի հայացքով խնդրում է չսպանել... Քանի անգամ ես ինքնասպան եղել՝ եղևիկի կողերին թփրտում է օղակների թիվը... Իրականությանդ հիշատակն է... Բախտն ինձ կյանք էր տվել չապրեցնելու պայմանով... Իմ երակներով երագ է հոսում: Երագներով հոսել ու հասնել ինչ-որ տեղ անհնար չէ...

...«Ոչ» ու «այո»-ի միջև տատանվող փրփուրե պատը խելքահան է անում: Ափից-ափ անցնեմ, խոստումները հասած մրգի պես քաղեմ: Համտեսեմ արեւի անմահության գաղտնիքը: Դառնամ տիեզերքի մաս, վերջապես մարդանամ...

* * *

Բառը բառից խռով, բառը բառի թշնամի: Կարոտս զենք է: Ինչո՞ւ էի ծնվել, երբ մահը կյանքի հակառակն էր լոկ հեքիաթում: «Ո՞ր է երկինքը» հարցի պատասխանը մոռացել էին մարդիկ: Ժխտական օրերի կանգամ էր: Արշալույսեր էին մայր մտնում: Մայրամուտները երգվում էին էլ չվերադառնալ երբեք... Անհամր է արդեն հաշտեցնել մարդ ու Աստծուն...

* * *

Ափիս մեջ ծովեր են եռում, ծովեր են հանդիպում,
որ օվկիան ծնեն... Մատներիցս բառեր են թափվում,
որ հին աստվածներին սնեն: Թույլ չեմ տա ժամանակը
բռունցքվի, անանուն ծնվեն օրերը... Դարերը ավերիցս
ջուր են խմում: Անկմանս եզրին հիշողությունն է սրում
ժամանակը... Հորիզոնի լեզվին նավեր են լողում, որ
պատմեն անհասանելիության ցավը: Իմ պես սահմանի
վրա պարեն: Պարեն առանց երգ, առանց ծափողջույն:
Ո՛չ հեռանան բեմից, ո՛չ հասնեն տուն: Ափ ու նավամա-
տույց չմնա կարոտախտի: Հորիզոնները ավի հասնեն,
նավերը խարիսխ նետեն արեւին... Ինչ էլ լինի՝ չօտարա-
նաս, ուր էլ լինես՝ հասնես լույսին...

...Անձկություններս մենավոր լեռան պես ծխում են:
Կաշկանդված փոթորիկներին հեծած ռ՛ւր եմ վարզում...
Փրկվելու ոչ օր կա, ոչ երգ: Մահը վրա է հասնում, որ
ապրումը վերջապես սիրե՞րգ դառնա: Գուցե եւ հակա-
ռակը...

* * *

Հուշերը թո սառցե սրտից ինչեր բողբոջին: Չէիր
գուրգուրել, չէիր ջերմացրել նրանց անկենդան հոգին...
Աչքերիս մեջ ի՛նչ կարոտ կար: Բավական է սիրո քամին
փչեր՝ կվերադառանայի թո երկիր... Բայց վերադարձի
ճամփան ինչպե՞ս գտնեմ, երբ փոխվել է օրվա դիրքը...

* * *

Մերկ էր կրակն ինչպես եվան... Հաճույքը թալկա-
նում էր մոխրե բանաստեղծության մեջ: Սեւանում էին
էջերս: Հնարավոր չէր անմեղ մնալ: Թերթում էի ան-
տարբերություդ, որ ժամանակը կենդանանար: Առաջ
ընթանայինք ես ու հուշերը: Երիտասարդանում էր անց-
յալը: Ինձ եվայացրու: Հաճույքի քույրը դարձած իրար
գուրգուրենք... Դողում եմ հուշերի վրա... Ինձնից հետո
մի վրա աչքերիդ վրա գարուն նկարում...

...Դավաճանության քամին վարժեցրեց սավառնել
հակառակ ուղղությամբ ու չկորցնել քեզ: Առանց աղոթ-
քիդ դրախտս մեղստու է: Շուրջս կրակ է ու բոց: Հուշե-
րիս հպվես, անմեղությունիցս ոչինչ չի մնա...

* * *

Բախտի խաղից էր կախված եզրերը իմ գոյության:
Անտելության ձկնորսները օրերս են որսում: Նրանց կար-
թը սրտիս մեջ է: Կարոտ ու հուշ խաբվում են, ճոճվում
են արեւները նույնիսկ... Ուռուկանի միջից ազատության
դեմքն է երեւում: Անկանխատեսելի է ընթացքը սիրո:
«Ոչ» ասող աչքերս արտասվում են, ու մենության ծովը
հանձնում փոթորկին: Ոչ գոյության եզրերն են երեւում,
ոչ չգոյությունն է զիջում երբեւէ...

* * *

Երեւակայութիւնը երազի շղարշով չբարուրվի՝ բաները Աստծուն չհասած կմոռացվեն: Կյանքն արտասովի՝ էջերը կթոջվեն: Ոչ տարին տարուն կփոխարինի, ոչ էջը մի ուրիշ էջի համար կրակի կտա իրեն... Օրը սպասում է, որ մեկն իր հետ ծունկի գա աղոթքի, բայց արեւից զատ ոչ ոք չկար հորիզոնին... Ծովն էլ փշրված բազմակետ էր, իսկ ափը լի էր առաջին բառի կարոտով...

... Լուսը նամակ էր Աստծուց առ մարդուն: Օրը գույներ էր շաղ տալիս, իսկ չարժեւորված երազի տխրութիւնը կյանքը դարձնում էր մոխրագույն... ու չգրված նամակները բռնկվում էին մայրամուտի արցունքում... Բռնկվում էր աշխարհի կորած խիղճը, իսկ մարդը կարծում էր, թէ նոր օրվա պարն է... Ու անհասցե օրերը ամպերին էին հետեւում...

* * *

Անձրեւը ապակու վրա բանաստեղծութիւն է գրել: Վերջին տողը մնացել է կիսատ: Հագարների մեջ ընդ է իմ բառը: Գտնեի, որ անձրեւի ողբը վերջանար...

Ինչ պայթիւններ են եղել, որ գարուն գա, ծիածանները ուս-ուսի պարեն: Ապակու ներսում ազատութիւն եմ երգում, որ երազս չդառնա վերջին տող, օրը չդառնանա... Առաջին բառը շնտ է գլխիկոր, արի տողի շարունակութիւնը դառնանք: Կորած գույնը նվիրենք անձրեւին ու ծիածաններին թամբած հեռանանք...

* * *

Դիմակայել եմ քամուն, թե ուղղությունը շեղել է սիրուց: Լուսացրել եմ արեւելքում, որ օրը նախ ոտք դնի հոգուն մեջ: Ձմեռվա այտերին հարավ եմ նկարել, որ արցունքներս չսարցակալեն: Մարդանալու համար ինչքան եմ փորձել Ոչնչություն դառնալ... Միեւնույնն է, անթեղված հույսիս փողոցներում ինչէր կային, ինչէր... Ես չկայի հոն...

* * *

Ինչէր արի, որ արեւը արեւելքից ծագի, լույսին ասի՝ «Կտեսնվենք դեռ»: Անձրեւը հասնի նպատակին: Յավատը մոմի պատրույզի փոխարեն սրտիս լեզվի վրա լուսավորի աշխարհը: Սերը սպասի օրերի խաչմերուկում, բարությունը ճանաչելի լինի... Ինչէր չարեցի...

* * *

Կնոջ արցունքները ծաղկե գորգի պես ժպտում են հողին: Լքվածության սառույցի վրա գարուններ են պարում: Քամիները խնդրում են ձեռքը երագի ու մնում անպատասխան: Չի գտնվի ոչ մի մահկանացու, որ իմանա տեղը սիրո, թե որտեղից եկավ, ուր է գնալու... Կնոջ ժպիտը երկնքի զարդն է, լույս է խավարում: Ամեն քայլը թե կյանք է, թե մահ...



Կարմիր ծովն անցած իմ դժբախտություն, արցունք-
ներով ես ալիքները ճեղքել, որ հասնես երկինք: Մինչ
սեւդ դարձնես այ՛ տառապանքի վրա ինչէր ես նկարել:
Ինչէր ես երկնել, երբ օրը կիսամեռ էր: Արեւին համո-
զել ես ժպտալ, որ լույսը չդառնա հուշ, անհուսությունը
չիրկիզի գարնան երթը: Երբ աղոթքը Ավետյաց երկրի
ուղղությունը բռնեց, ապագան ուժ չունէր: Թլվատ լեզ-
վով ինչպէ՞ս համոզեցիր ներկան դեպի ուրախությունը
քայլի: Օրը չէր հավատում ժամանակի երդումին: Դժ-
բախտության բոժոժում կցկված սերը վաղուց դարձել
էր հեքիաթ՝ ե՛ւ կար, ե՛ւ ոչ... Մետաքսե հույզերը կյանքի
վարագույրի դերը խաղացին: Խավարման սեւ ժպիտի
ներքո քանի՛ անգամ պատռվեց անցյալը...

...Կորած երկինքը ներս մտներ ու չհեռանար, բայց
ժամն էր հեռացումի: Դժբախտության ցուփը ձեռք ու
ոտքս էր... Ո՛ր պիտի տաներ խոստումը Աստծո, երբ
ուրախությունները խորթ էին ինձ: Հա-րա-գա-տա-
ցաաաանք... Դիմացս իմ արյունն էր: Դրախտը գրկելը
ի՛նչ վայելք է: Անհնարինի պատը ճեղքել վայել է միայն
բախտի զինվորին...

Հաղթանակ ու պարտություն ձեռք-ձեռքի տված
սրտումն պարում եմ: Կարմիր ալիքները ծափ են տալիս:
Հուլյսերից որոշը հասան ափ, որոշը խեղդվեցին հիմնո-
վին: Զառասուն տարի դեգերեցի, մինչ հասա քեզ, իմ
արյուն: Զառասուն կյանք ճգնեմ պիտի սեւերում՝ չհաս-
նելով քեզ, իմ արցունք... Գերության մեջ ազատություն
եմ խաղում... Ինչպէ՞ս ապրեմ եւս քառասուն գարուն,

երբ սիրտս կաղ է, արեւելքս՝ թերի: Անուններ կան սիրելի, անուններ՝ սեւի մեջ գերի... Կարմիր ծով թե մտնեմ, կդառնամ արեւ, կտեսնեմ, թե ուր են օրերս թաղվել... Ես երջանիկ եմ... Մինչ հասա սպասվածին՝ ինձ հիշեցնող ոչինչ չկար բախտի ափին... Ապրել առանց Աստծո օրհնանքի անկարելի՛ է... Ինձ չեն հետեւի անցյալ ու գալիք... Ես շնտ եմ հոգնել... Թեւաթափ ձեռքիս Աստծո ներումը շողար... Թեեւ դժբատությունը սրտիս մեջ դարձել է ջահ... Հիշեցնում է այն երկիրը, որտեղից սկսվեց իմ ուխտը դեպի... Հասամ, թե՛ դեռ ընթանամ պիտի՝ ոչ հույսս գիտի, ոչ ես...

* * *

Հիշողությանը կառչած օրերի ներկայացումներն եմ դիտում: Անտարբեր նայում եմ հորիզոնի պղտոր աչքերին: Փոթորիկ է սպասվում: Թքած: Կռկված իրանս հանգստանալ է ուզում հողին, բայց ուղղահայաց ծաղրանքն եմ կյանքի... Ի՛նչ է գույնը: Ծաղկի, մրգի մասին չհարցնեն... Գարունների փոխարեն սառցե հարցեր են ինձ պարուրել: Պատասխանը ոչ մի եղանակի հետ չի՛ գալիս: Տերեւաթափե թռիչքս ռ՛ւր է: Երկինքը նո՛ւյնն է: Փչակունս ի՛նչ երազանքներ էին ննջում: Հիմա միմիայն կացին եմ երազում ու վերջ: Ձմեռը ինչ՞նչ չի գալիս: Չորացած ջրերն էլ նույն ցավն են ապրում... Անտառ, ինչպես հասնեմ քեզ... Արմատները շատ են խիստ...

* * *

Չոգուս երկնքում բանաստեղծություններ են աճում: Թե քամու պես խիստ նայես, արմատախիլ կլինես: Կարոտի այգում ճեմում են օրեր դժխո, օրեր դահիճ: Ժամանակի ափին տեղ չեն տալիս ինձ: Ծաղկաթերթեր են թափվում արցունքի փոխարեն, թե Աստված նայի լքված տողերիս: Տարտամած քամին էրբ կպարի, որ զովանամ: Թե մարդու անուն տամ, բանաստեղծություններս կթռռոմեն: Լքված դրախտը կրակե հեքիաթ կպատմի... Անառակ որդու պես կվերադառնա բանաստեղծությունների երկիր: Կվայելեմ նեկտարը թանաքիս ու կմիանամ բազմակետերին...

* * *

Աղջկական թովչանքով մտա ծովը լողալու, երբ ափ ելա՝ կին էի արդեն: Գիշերն ինձ սիրահարվեց: Աստղը համբույրիս կնիքն է: Շուրթերս վառվեցին կարոտից ու իրենց կրակով լուսավորեցին երկիր-երկինք: Աշխարհը անունը Արեւ դրեց: Ես թովչանքս թողած հուշերին կոթի պարաններով ճամփա հյուսեցի... Քեզ չգտա: Յեռացել էիր, չնկատելով, որ քեզ հետ էի արդեն: Երբեմն մայր էի մտնում, որ չտեսնեի քեզ ուրիշի գրկում: Առավոտյան Նորից ճամփա էի ընկնում կարոտի հետքով: Մի Նոր սկիզբ կամ, թե հնի կրկնությունն է անվերջ: Ճամփա տվեք, ապրելու կարոտ գարուն եմ:

* * *

Թռչունին հանդիպելի երկնքում: Մեկտեղ փնտրելիք կորած գարունը: Հրաժարվելիք վայրէջք կատարել այն հողին, ուր գույնը չի քայլել որպես երաժշտություն... Լեռան գագաթին արեւին խնջույքի հրավիրելի, որ ոչ ոք իրեն մենավոր չզգար: Առատության միրգը կարկտահարեր կասկածներս: Լեռնապարից դղրդային մոռացումի դարպասները: Ամեն մի կորած օր հիշվեր: Բաժակ զարկելին հերվա սառույցները ու չփռվելին օրվա ոտքերի տակ: Կիրճերը բանային ժամանակի կապանքները: Անցյալը նորից չորբանար, ապագան հանդիպելի երազանքին... Մերը աչքերիս մեջի լույսը քաղեր ու նվիրեր խավարում վխտացող տարաբախտին...

* * *

Ներկապնակի վրա օրը երերում է ու ստիպված է լինում սավառնելու: Ո՞վ կուզի հավասարվել հողին... Աստվածների նախանձը շարժել, այն է սրտի դերը...

* * *

Աշունը ձյան վրա իր հուշերն է գրում: Գարնանը իրար թշնամի բառերը հաշտություն են նկարում օդում, ու անիրականի հետքն էլ չի մնում...

Լեռը

Ի՞նչ արշալույսներ էին իրենց առաջին համբույրը դրոշմել Լեռան կրծքին: Ի՞նչ Քամիներ էին շուրջը պարել: Անդրդվելի էր Լեռը: Հպարտ կատարը խոյանում էր վեր, անցնել էր ուզում սահմանը բարձունքի: Աչքը կատարելության կողմն էր: Գիշերը աստղե աչքերը թարթեր՝ Լեռը կանեանար խավարում: Ասես, չէր էլ եղել... Կրծքի ծաղիկները բուրում էին հեքիաթի պես: Ամպերը գլխապտույտ էին ունենում, բայց Լեռան մտքով էլ չէր անցնում նրանց հետեւել: Հողը ծունկի եկած սեր էր խոստովանում: Կրծքից հագարահամ գարուն էր հանում՝ Լեռը չէր համտեսում նույնիսկ: Ժամանակը քամահրանքով անցնում էր: Ամեն հպումը ցավ էր ու կսկիծ: Լեռան քարե սիրտը պատասխան չէր տալիս ոչ ոքի: Բախտը հպարտ էր իր գործի կարծրությամբ: Անձրեւն իսկ չէր կարող փխրեցնել լանջերը վերելքի: Մագլցողը պիտի տառապեր, խորքերում կորսվող էլ կար: Համբերության արցունքը կաթիլ-կաթիլ ծակում էր քարե երակը ժամանակի: Լեռան կրծքին քանդակում երդումներ, որոնք հանել էր անհատակ անդունդից: Ո՞վ էր նետել հոն, ի՞ր անցորդը: Խորշերի վրա քամին անվախ լարախաղաց էր: Զէր վախենում անկումից: Փրկության թելերը փռող չկամր, փրկող չկամր եզրերում ապրող վիատին... Օրե թռչունները ճախրում էին հավերժի աչքերում: Երբեմն էլ Լեռան անտարբերությունից ինքնասպան եղած գահավիժում, դառնալով ոչինչ... Ոչ ոքի չհետեւեց Լեռը: Կայծակե սպիերը կրծքին առած խորշումեց: Չղջամց հորիզոնի հրավերը մերժելու համար: Կամանց-կամանց

ճերմակեց: Ալեւոր գլուխը ամպերում թաղած կորած գարունները հաշվեց: Քանի՛-քանիսի հետ երջանիկ կլիներ: Հիմա ձմեռներին գերի աշխատում է չի՛շել սխալները, բայց մոռանալն էլ անհնար է... Քամին հորիզոնի աչքերն էր պղտորում, որ գուշակող չլիներ ապագայի երթը: Հուշերը սահում էին սառցե օրերից: Ժամանակը միշտ թարմ էր մնում, թեւ առանց վկա էր օրերի եռուզեռը: Լեռան շուրթերից «ոչ»-ը ձնահողմի պես գլորվում էր: Արեւն անգամ անգոր է երբեմն: Գլխիկոր մայր էր մտնում, փարվելով Լեռան թիկունքին: Աստված չանի Լեռան զգացմունքները քայլեն... Երբեմն անհրաժեշտություն է համրացած ապրելը... Որքան հեռանամ, ավելի կփոքրանամ, Լեռը կխոշորանա... Գորշ իրականության մեջ գունազեղ քարե երազներ կան, որոնց ծիածանն էլ է նախանձում...

...Մշուշի միջից լողում է Լեռան ուրվագիծը: Ճերմակ քողը դեմքին՝ աշխատում է ժպտալ: Երկնքից առկախ համր դողմանք է Լեռը, թե երկրից փախնող Ուրու... Թեւերը բացած՝ ուզում է իրեն ետեւից տանել կապանքները բոլորի, բայց քարե երաժշտություն դարձած՝ պատռում է թանձր լռությունն առավոտի...

* * *

Սրտիդ շեմին էի: Ասիր՝ ոչ ոքի չեմ սպասում: Քամու բռունցքը տապալեց «ոչ»-դ: Դռան դերը խաղացի, որ քեզ դրսից վտանգ չսպառնա: Երբ հասկացար սխալդ՝ ուշ էր: Քեզանից հեռացողը ես չեի՝ Սերն էր...



Յոգի հիշողությունից ջնջվել է աղբյուրի կարկաչը: Խլացել է Յոգը, էլ չի հետևում առվի կանչին: Գարունը էրբ է վերջին անգամ իրեն փարվել: Ասես, մոխրագույն տառապանք կար օդում: Սեւ օրերը քարակույտ դարձած դժվարացնում էին Յոգի շնչառությունը: Դժբախտության շեմին էր Յոգը: Նայում էր վեր ու չէր հասկանում՝ ճմեռն ին՞ր է ջերմացել, արեւի զայրույթը վաստակելու համար ի՞նչ մեղք է գործել: Կամանգ-կամանգ հողի հիշողությունից ջնջվում էր եղանակների պարը: Ժամանակ-մատուրոն սլաքները կտրած՝ հրաժարվում էր ղեկավարել բնության սիմֆոնիան: Աշխարհը հունից էլել՝ միտվում էր քաոսին: Անձրեւի փոխարեն Յոգի մեջ ներծծվում էր մարդու մեղքը: Երկիրը շեղվել էր սիրո ծիրից: Օդի մեջ վախ կա: Աշխարհի գլխապտույտ վազքը ինչն՞վ կվերջանա: Ամեն բան հանուն սիրո չէր: Աստված ինչէր էր հիշում: Մարդը ինչէր է մոռացել: Յոգը հրաժարվում է արարել այն, ինչ մարդու երազը կավեղեն խեցու մեջ սպասում է Լույսին... Սիրո կարոտ կնոջ պես սպասում է՝ մայրանա: Մրմնջում է հովի ունկերին. «Առանց արեւի չեմ դիմանա...»: Ծանր է Յոգի դերը: Յիշողությունից կջնջվի՞ այն պահը, երբ Աստծո ձեռքերի մեջ խմորվեց ու... մարդացավ... Քայլող այս պատմությունը քամուն հետևեց: Օրերը մթագնեցին, ու ամեն բան մոռացվեց կարծես...

...Երկնքից սաղմոս էր մաղում, օրհնանք ու զգուշացում, իսկ մարդը սրտին գրում էր. «Շահ, սպառնալիք...»: Ապագան Յոգի մասին անցյալով էր խոսում:

Հարցնում էին միմյանց. «Տեսած կամ Գարունին...»: Թե
Հողը չլինի, երկնքի երազը Աստված ռւր կցանի...

Ես հող եմ: Դու հող չեմ: Հող չէնք դառնալու դարձ-
յալ...

* * *

Բանաստեղծություն գրելիս մոռանում եմ, որ ար-
դեն քանի անգամ է ստիպել են մեռնեմ: Թեւերիդ փո-
խարեն բառը ինձ փարվեց, հասավ արցունքիս, որ
ժպտամ... Հարցրի. «Լինե՞լ, թե՛ ոչ...»: Պատասխանը
աչքերիդ մեջ էր. «Շանտ է ուշ...»: Արգելքները հեքիա-
թացրի, որ նախշուն թվա անհնարինի դեմքը ու ես քեզ
չհասած՝ վերադառնամ ինձ... Երկնքից կախված օրոր-
վում եմ: Խելքահան եմ անում հողից ծնված հող դար-
ձողին: Ամպերի հետ ճամփա ընկա: Ոչ սկիզբս հարցրու,
ոչ վերջս է հայտնի...

* * *

Առանց ափի որք մնացած նավ եմ: Ինչքան ն թափա-
ռեմ: Թախիծի երամը երեւակայությանս երկնքից ռւր է
չվում: Հասանելիք սիրո ափ չկամ... Ալիքները թունավոր
շուրթերով լիզեցին ստվերս, ու ոչինչ չմնաց ինձնից...
Արցունքիս մեջ ձեր մեղքերն են լողում, բայց խեղդվողը
դարձյալ ես եմ...



Սիրո այգում սերերը հովի հետ են սիրաբանում:
Համբույրները սարսափում են կոշտ անձրեւից: Թորշե-
լու վտանգ կա, անունը՝ Բաժանում... Վիրավոր հոգու
վաղեմի հուշը եղյամ է հյուսել կոպերիս: Չի չորանում
ցավն անցյալի: Փերիներն ամեն գիշեր օրոր են երգում,
սերմեր են ցանում երկնքում: Հուշե թռչունները երազի
սաղարթին բույն են հյուսում ու սպասում ապագայի
հետ հանդիպման: Ձեփյուռի շուրթերից անուններ են
գլորվում, որ մոլորվածի համար արահետ բանան: Դժ-
վար է սիրո պարտեզպան լինել: Օգնություն խնդրո՞-
ւները շատ են, իսկ ձեռքիցս ոչինչ չի գալիս... Ու այգին
կամաց-կամաց անապատի վերացված՝ սիրաբանում է
լոկ քամու հետ: Ժամանակն անողոք է՝ ավագ, արեւ ու
անմարդաբնակություն... Հուշերի քարավանը կարոտի
երակի մեջ խցանվում է: Զամին օրերի սպիերն է հար-
թում, որ ոչ մի ներկա ծերացած աշխարհ չգա: Արտաս-
վում են ու վերադառնում կյանք... ուր ոչ ծաղիկ կա, ոչ
բույր: Բետոնակուռ օրերի կույտ ու անսեր, անկուշտ
իրականություն... Ձեռքիս հեքիաթի խնձորն է, բայց
շուրջս կավեղեն ոչ ոք չկա: Ամենուր ոսկեհուռ հաշիվ
է: Օրերն էլ միրմիժ են, թե երեւակայության պտուղ: Ի
լուր աշխարհի գոռում են. «Սիրտս հրաշքի պարտեզ է,
ներս հրամմեցեք...»: Բայց հեքիաթներին հավատացող
վաղու՛ց չկա...

Ամենուր սրտի տերեւաթափ է ու սառցե քայլվածք-
ների տակ փշրվող սպասում... Ո՛ր էր, այգին պիտի
ծաղկեր ամեն գարուն...

* * *

Լապտերի մեջ աշխարհի խիղճն է վառվում: Անմարդկայինի մրուրը ապակու վրա սեւ համբույր է: Արեւը գերի չմսւմ ապակե կապանքների... Վախը ապակե աշխարհում խելահեղ պարում է: Խիղճը աղոթք է սերմանում, որ օրվա դեմքից անցյալի սեւ հետքը ջնջի: Լապտերի մեջ սիրտս եմ նետում: Կրակը թեժանում է, ու ինձնից մի բան պակասելու փոխարեն ավելանում է: Սեւ արցունքների մեջ ինչէր են բոցկլտում: Պատրույգի վրա առկայծող հույսերը ջերմություն են փնտրում: Արեւը սպասում է, որ մեկը առավոտի համար աղոթի: Ապակե արգելքը սեւ ատամներով ժպտում է, ու քամին չոր հիշողությունները հանձնում է հողին...

...Ո՞րն էր իրական` ապակե աշխարհը, թե պատրույգի լեզվին կրակե շուրթերով խոսող երագը... Կրակի վրայից դարեդար չեն առնում բարու մոխրացած խիղճը: Ոչ ոք չի ուզում վտանգի ենթարկել իրեն, ու արենս այդպես էլ մնում է անընկեր...

* * *

Արեւը շողերով լույս էր վրձնում: Կյանքի երագները երկինքոտ են, ոտքերը վաղուց մահվանն են հետելում: Մանկությունը աչքերիցս գլորվեց, բայց անհագ օրերը այդպես էլ խելքի չեկան: Արեւի համբերությունը չհատի: Գիշերներ կան, որոնց հավերժությամբ չես խաբի... Աշխարհի վրձնած ատելությունից հրաժարված աչքերս փակում եմ... մինչ Աստված բացի....

* * *

Ազատությունս հյուսիսային ծովերի պես կապանքնվել է: Ալիքվելը երազանք է: Ոչ արեւն է խաղում ափիս, ոչ էլ լուսինն է երազներիս սիրահետում: Շուրջս անսերության բեւեռ է: Ոչ առաջ եմ գնում, ոչ նահանջելու տեղ կա...

* * *

Երկնքի աչքերը թաց էր: Ճայերը չգիտեին՝ վեր թււէին, թէ՞ վար... Ամենուր կապույտ կարոտ էր, մեկը աղի, մյուսը գուլալ... Ծով էր, ծով էր, ծով էր ու կաշկանդված փոթորիկ... Ափին ես էի ու Ատված, իսկ հորիզոնը դու էիր...

* * *

Սիրտս շշնջաց՝ «Լնյս», ու բանաստեղծության մեջ արարեցի քեզ: Մեր հանդիպումը տարբեր էջերի վրա էր: Ժամանակը թերթեց, ու խոսքերս թափվեցին կյանքից դուրս: Տողի վրայից ունայնությունն էր քայլում, ես՝ ետելից...

* * *

Երազը կոպերիս վրա հրաշք նկարեց ու անհետացավ: Բայց երբ արթնացա, ամեն հանդիպած լոկ չոր խոստումն էր հուլիսի...

* * *

Դատարկ դժոխքում մենությունն է ու ես: Միակ սե-
ւը էն էի... Երագին անկրակ օրը չի դյուրում: Կյանքի
դեմքին պատուհան նկարեցի, որ մահը ներս գար:

Դժողքի կրակը նման է գրածս բանաստեղծությա-
նը: Կարդացող չկա մոխրացած խոսքի մեղան: Անցյալի
հուշերով եմ ջերմանում, ու սովորականը անիմանալիի
բույրն է դառնում...

...Օրը ձմռան այտերին արեւի նահանջն է նկարել:
Թռչունը ճիգ է անում հասնելու հուշերին: Ուշաթափ
արեւին ղվ է ոտքի հանելու: Շուրջս համակերպվա-
ծությունն է փաթիլվել: Առանց ինձ երկինքը չորբանա՛...

...Աչքերս բացեմ, հարցնում եմ՝ ո՞ր եմ... Կյանքս
արմատ չնետեց հողին: Ես պտուղի տեսքը չեղած պա-
տերիս վրա նկարեցի ու երեւակայեցի համ ու գույն:
Հարցերի սաղարթին բույն հյուսեցի ու արեւին հրավի-
րեցի հյուր... Լույս էի, երբեմն ծագում էի, երբեմն՝ ոչ...
Երկինքս ոչ միշտ էր իր տեղում: Թե՛ ես էի հասել ան-
գույնին... Շուրջս աղոթքի փակուղիներ են: Կապույտը
անմեղությանս փշրանքներից կերտում է կորած ութե-
րորդ օրը: Ինչ նման է կարոտիս: Առաջին փորձն է ապ-
րելու...

* * *

Զամին սաքսոֆոն է նվագում: Հուշերը տերևա-
թափվում են: Չմայլվում եմ պահով ու հեռանում ինքս
ինձնից... Գարնան մասին չհիշեցնեք...

* * *

Էլ երազող չկա՞ր աշխարհում: Կարծր երկնքի ներքո
ինչ թռչիչք: Յավքը հեքիաթից խռով պարփակվել էր հո-
ղի շուրթերում: Թե փոշին խոսեր՝ եղիցիներ կթեւածեին
օդում: Դրախտն այնքան որբ էր, որ Աստված զղջաց
արարման կատարելիությունից...

Երազողներից զուրկ աշխարհից ո՞ր փախչեմ:
Կարծրացած աղոթքները ցավ չպատճառե՞ն Աստծուն...
Լույսն էլ չի հասնում հողին: Սեպագիր մոխիր է մաղում
կորած մահվան ճամփին...

...Իրականության դառը աչքերում եզրագիծն է ցա-
մաքի: Ալիքներին բարության դաս տալն իզուր է: Խեղդ-
վում էի՝ սիրտս թողնելով մարջաններին գերի: Մինչ է՞րբ
եմ հիշվելու... Միայն թե չխոնարհվեմ փոթորկին...

Ինչ ծով, հուշերս էին հալվել... Յիասթափության
նավերը փորձում էին հանձնվել, բայց ափը անդրդվե-
լի էր... Կորցնում էի ելքերը թվացյալ ու նորից ճամփա
ընկնում... Ո՞ր... Ինչո՞ւ... Յոգնած ծովին չվստահեք...

* * *

Օրը Լռության հետ բանակցեց ու հասկացավ, որ
հեռանալն անհրաժեշտություն է, թե ուզում ես երգ
դառնալ: Թամբիս առած կարոտ ու հուշ՝ հեռացա: Դժ-
վար էր ողջ ձեւանալ: Իմ նախա-նախա «ես»-ս ինձանից
առաջ էր ընկել: Ծնվեցի, երբ կյանքս խռով էր ինքն իր
հետ... Ծնվեցի՞ ու ծնվեցի՞...

* * *

Բառը ինձ երկինք կանչեց: Ամպերը համբուրեցին աչքերս, արցունքներս փարվեցին աստղերին: Վերադառնալ չուզեցի հողին: Խոնարհ սիրո պես շարվեցի տողին: Սպասեցի, մինչ էջը փակվեր ու ամեն ինչ սկսվեր նորից... Ինչ վերջ... Բառը հրեշտակե թեւ է ինձ...

* * *

Հրաշք, ռ՛ւր ես, գերեզմանային լռություն է վրաս: Կայծակե հրավառությունը դատավճիռ է, ոչ տոն... Հրաշք, միակ հույսս դու ես... կամ կյանք տուր, կամ մահ... Հրաշք, ձեռքս բռնի, անկումը հոգուս մեջ երկինք է նկարել...

* * *

Արեւի վրա բանաստեղծություն գրող չկամ: Սպասումը քարացրել է ճամփաների սրտի զարկը: Օրերը չմոռանան ծնվել: Վախը թեւերը փռել է վրաս: Երկինքը չի՛ երեւում... Բախտի մրուրը սեւ ձյուն է ճամփեքին: Օրվա ոտնահետքը ճակատագրի մոնոլոգն է: Արեւն անգամ լույսի կարոտ է: Լոկ եզակիներին է տրված իրենց ձեռագիրը թողնել երկնքում...

* * *

Էջերիս վրայից երկնքի հոտ է գալիս: Բառի արմատը կողերիս մեջ է: Ադամի պես ուզում է հնազանդվեն իրեն, բայց ինչ Եվա, թե խաղի ընթացքը չշեղի...

...Երբ Լույսի ձեռքերի մեջ հունցվում էր աշխարհը, բառը կաղապարի դերը խաղաց: Իսկ երբ խաղից հոգնում է, էջերիս վրա է արեւահարվում...

Բանաստեղծություններս ճերմակ դրոշի պես թափահարում եմ, բայց բախտի հաշիվներում գուլթ չկա: Չծնված գարնան աչքերում հույս եմ նկարում, գոնե սպասվածը կգամ... Արեւը մայր չմտնի՝ երագները չէն կենդանանա...

* * *

Թռչունին հարցրի՝ հասմր երկնքին: Ասաց՝ գտա ու կորցրի: Անձրեւը չի վախենում վար նետվելուց: Ասաց՝ սիրո թեւերի մեջ փշովելս պետք է... Ծիածանը աչքերս չորացրեց ու «մոռացա» շանթի հարվածը... Երբ արթնացա, առավոտը ոտքից գլուխ մեղք էր: Սիրո խոստովանությունը կիսատ մնաց: Քեզ չասի՝ մնա, դու չասիր՝ կերթամ... Ու հեքիաթը անմահացավ՝ կայիր, էլ չկամ...

Թախիծի թռիչքին ինչպե՞ս հասնեմ... Ո՞ր ես, վերջին արցունքիդ մեջ խեղդվում եմ...

Ջրհորը

Աստղերն իջնում էին ջրհորի մեջ լողալու: Ականապատ հուշերը սպասում էին գոհի: Խորհրդավորի աչքն էր ջրհորը: Կուլ էր տալիս Նայողի հայացքը, ու վախը ճողփում էր հատակում: Ում ձեռքը հասներ բանտված փոթորկին՝ հեքիաթը կարթնանար ու կհագեցներ ծարավը գոհի: Իսկ թե ապրելը անտանելի դառնար՝ ջրհորը պատրաստ էր վերջին հանգրվանը դառնալու: Յողի արյունը ուզում էր աշխարհի սրտի հետ ամբողջանալ... Չորացած անոթներ ես կան: Ինչէր էին նետել մարդիկ հատակը Մոռացման: Միեւնույնն է, Յիշողության հայացքը միշտ դեպի երկինք էր: Յասնել էր ուզում վեհին, բայց գամված սպասում էր խորթերի երգը պեղողին... Ծաղկալեզու էր հողի խոսքը...

* * *

Մի ձեռքիս անցյալն է, մյուս ձեռքիս ապագան: Ծափ տամ՝ ներկան կփշրվի: Պարում եմ օրերի փշուրների վրա: Ժամանակը ինձ է սիրահարվում: Տարիները փաթիլվում են: Ոչ նրանք ինձ տեր եղան, ոչ ես գիտեմ, թե ինչի տեր եմ... Ամենահետինս եմ դառնում, միայն թե գոհացնեմ կյանքին: Միեւնույնն է՝ արհամարհանքը նետում է դեմքիս: Յոգումս ապտակի տեղը ծաղիկներ են ծաղկում... Ոչինչ եմ... Նայում եմ երկինք, Նայում եմ հողին: Ոչ հոն եմ, ոչ հոս... Ու կյանքի տված վիշտը մոռացած՝ մոտենում եմ ինքս ինձ...

* * *

Քամին էջերս կրակի տվեց, որ Լեռան ընթացքը լուսավորվի: Թե խոնարհվեմ, բառն իմ մեջ ինքնասպան կլինի: Էջս ճերմակ հուշ էր Լեռան հուշերում: Կրակի վրա պարելն իմ ընտրությունը չէր, չկարեցա մերժել բախտի հրավերը: Լեռը սառույցների վրա գարուն էր քանդակում: Քամին համբուրվում էր գրիչիս հետ, ու լանջերի վրա հեքիաթներ էին ծաղկում: Հոգևած հրաբուխներին նիսջ էր բերում Հավիտենությունը: Երբեմն Լեռան ոտքերի տակն ընկա, երբեմն էլ ուսերին առած տարավ ինձ Գալիթ... Լեռ, հորիզոնը ինչպիսին է... Ափիս մեջ գունազեղ քար դրեց ու հեռացավ: Կյանքի կարծրացած արցունքն էր... Չհասցրեցինք իրար ճանաչել, չհասա տապանին... Նորից ուշացա... Աստծո ափսոսանքը կորած երագիս էր սփոփում... Միեւնույնն է՝ ոչ խորբերում եռացող անցյալն էր հանդարտվում, ոչ հատակից հառնող միֆը... Երազների գլուխն անցած Լեռը պատերազմում էր՝ հաստատ համոզված, որ գերի է այս աշխարհում...

* * *

Ծովի մեջ լողացող արեւը որպես ծաղիկ ինձ նվիրեին... Աչքերս բացեի ու չճանաչեի ինձ նայող իրակա-նությանը: Ես ինձ չգտած սերը դառնայի...

* * *

Ե. Չափենցին

Աստված բանաստեղծի հոգին կրքերի կարմիր ավազից հուևցեց: Քամիները երկաթե մտքերը շոյեցին, ու բոցավառվեց աչքը անտեսի: Զրմուհի անցյալը զոհ էր պահանջում: Պոետը խաչի վրա տեսավ իրեն ու դարձյալ շարունակեց աշխարհը սիրել...

...Աստված բառը կերտել էր անձրեակաթիլի մեջ, որը դեռ չէր ծնվել ոչ մի երկնքում, ու չէր թափվելու դրախտի տեսքը չառած էջին... Ես ինքս ինձ տեսա աղոթքի մեջ ու հասկացա միտքն աստվածների... Ո՞րք ես, Սեր, ինձ աստվածների երկիր տար, մարդկանց հետ լեզու չգտա...

* * *

Անցյալը վաղեմի նորն էր: Ո՞վ փոխեց տեղը ժամանակի: Ես դարձա անդեմ, դու դարձար անտեսք, ու տարածությունը հույս մանող Ձեռքերի արանքից թափվեց ձորը հեքիաթի: Զերծերի ծերային հավքն էր սիրո: Ու շաթափ հեքիաթը սպասում էր համբուլյրիս... Բայց սիրո ու մահվան առաջ մերկանալ էր պետք... Կեղծիքի լաթերով զարդարվեցի... Թե արեւը քնով ընկնի, աչքերդ բաց, որ չկորեմ... Երկինքը նայում էր աչքերիս մեջ ու սպասում, որ իրեն փրկեմ... Թե իրականությունը չհեքիաթացնեմ՝ կորած եմ...

* * *

Ամենագեղեցիկ երգը անձրեւի քայլքն է, քամու վազքը: Ինքնասպան անձրեւի խոսքը չունի իր մեջ վիշտ: Ի՛նչ երկինքներ են կորել հայացքիս մեջ, երբ չար էին աչքերը ասիերի... Ոչ մի նավ չէր մոտենում կորած կանչիս... Ինչէր էին արժան հիշվելու, բայց շուրթերս հող էին ու փոշի... Ծաղկի գիրը ձմեռը չեղյալ էր համարելու: Ու սկսվելու էր ամեն բան նորից... Կաթիլ առ կաթիլ արցունքս էի գտելու, որ հրեշտակները քաղցրահամ ջրերում լողային... Ո՛ր ո՛ր ո՛ր ո՛ր... Աշունը սուլում էր անձրեւի հանճարեղ մեղեդին: Առանց փառքի ձմեռը ճերմակ սավան է փռում դեմքին: Մոռացվում է հնչունի թաց պարը մինչ մյուս աշուն... Մինչ կյանքը դարձյալ հասնի անորոշության եզրին, ու բուքի ռեքվիեմը կլանի ընթացքը ապագայի... Մինչ անմահական ջուր չգտնեմ, գարունը չի՞ գա... Առաջին ջութակի դերը ինչո՞ւ միշտ բախտին է տրվում...

* * *

Օտարի գիշերներում ի՛նչ գործ ունեն երազներս: Արևի հետ ծանոթանալ ու թշնամության մանրադրամով գտնել հորիզոն...



Սիրտս բախտիդ հրավիրել էր պարի: Շունչը պահել էին օրերը: Ինչպե՞ս բախտիդ սիրտն առնեի: Գու՞թ էր աղերում մեղեդին, իսկ կեցվածքս թրատում էր օդը: Մինչ է՞րբ էի մենապարելու: Բախտին ձեռնոց նետող օր չկամր...

...Ոչ «այո»-դ էր «այո», ոչ... Խաղը շարունակվում էր: Մեղեդին կապում էր աչքերս, որ ճայերը չլքեին սրտիս ափերը: Ոչ էլ անգղի բաժին դառնար պարս... Արյունս պտտվում էր, պարուրվում մարմնիս ու հողագույնս էր իշխում ինձ: Ոչ արնագույն ճիչ, ոչ արնաբառ հրաժեշտ... Համակերպվածությունն ճակատագրին, ուր ծաղիկներ են աճում ալ արցունքից... Անթառամ սերերը ներման կամուրջի սյուներն են պիրկ, բայց անցնող չկար ափից-ափ... Ոչ ծնունդն էր հիշում պարի սկիզբը, ոչ մահն էր մոռանում շարունակությունը... Յոթը նոտա ստիպված էին երեւակայել անիմանային, ստիպված էին չսպառ-վել... Նվագեք, հոգուս լարեր, ինձ դադար չկա...

Լքված հողի ողբը

Հայը ապրում է կրակի լեզվակներին: Պապենական սովորություն է արելի մեջ կնքել մանուկին, որ վարժ-վի կրակին... Դարեդար այս ու այն աշխարհի կապը գտնելու համար ճամփա են ընկնում: Երբ շատ հոգնեմ, Արարատի գագաթն են փնտրում: Կգտնե՞մ տունդարձի ճամփան... Հետեւում եմ երազի կանչին: Իրականությունը պապերի գերեզմանին ժամապահ թողած՝ դեգերում

եմ բախտի հետքով: Կարոտից եմ բողոքում, չհասկա-
նալով, որ իզուր է դատապաշտպան փնտրելը: Այնքան
եմ տարվում անցյալով, որ չեմ հասցնում ապրել: Մեռ-
նել՝ ինչքան ուզեք... Կորուստների բռժոժում հիասթա-
փություններս եմ փնջում: Դաս չեմ առնում: Դարձյալ
փորձում եմ երազը գրավել: Սիրո արմատը տեղափո-
խել երկնքից-երկիր, չնկատելով, որ արմատախիլ եղավ
զալիքը: Անցյալն այդ ամենի վրա ինչպե՞ս չլացի: Ինչպե՞ս
թողնի ժպտաս, թե ներկայի խորշերից հիշողությունն
է մխում: Հուշերն արելին գամում են հորիզոնին, ստի-
պում դառնալ շող ու լույսի նեկտարով սնվել, որ պատ-
մությունդ չմոռացվի... Ու թե քայլել՝ դեպի հեռուներ:
Ո՛ր, ո՛վ գիտի... Մինչ արեւը մայր մտնի, ապրել է հար-
կավոր: Կհասցնեմ... Արդեն կարեւոր էլ չէ, թե ո՛ր ես, ո՛վ
ես, կա՛ն... Կասկածները մագլցում են մինչ երկինքներ:
Պատասխաններ չեմ ակնկալում: Վախենում եմ հա-
մակերպվել... Արցունքներս ցույց են տալիս դրախտի
ճամփան: Բայց արգելքներ, որոզայթներ ու դավ, ու չի
երեւում տունդարձի ճամփան: Գոնե կարոտները երեւա-
լին... Ե-րե-վան... Կերեւա՛ն պատրանքի պտուղի աջուկ-
ները... Թեկուզ անցյալից... Երազը հուշում է. «Նայի՛ր»:
Առավոտյան տեսածիս անունը կնքում է. «Նա-ի-րի՛ն...»:
«Հայ-հայ...», - վրաս ծիծաղում է հորիզոնը ու հեռանում
տեսադաշտից: Հիմքս ուսերիս առած՝ տեղափոխվում
եմ: Լույսը զարմանում է. «Անկշտությունն է սա...»: Ինք-
նա-փա-խուստ... Լքված հողի ողբը փարվում է լանջե-
րիս: Հողը որբանում է: Սերմդ պահ չտվեցիր կողերիս:
Արեւը չի գունավորում գորշ օրերը: Արարարչագործույթ-
յան հետքերը ղում ցույց տամ: Էլ մարդ չկա, ում արյան

մեջ դրախտը քրքրջա... Թե արցունքով ջրես հողը, բեր-
քը դառնահամ է: Հարալեզները լիզում են անմարդաբ-
նակությունս: Ներկան երեւում է: Արեւը օգնության է
գալիս, մոռանալով, որ մոտենալը ողբերգություն է... Հո-
ղը տնքում է «թեթեւությունից»: Ողբերգության փոշին
ծանրացնում է երազների մուտքը, երկնքի գույնն է փո-
խում: Ժամանակը տարածության անշունչ մարմինը ու-
սերին առած՝ պատվիրում էր հիշել... Հիշողը մոռանում
էր ապրել: Ներկան երկերեսանի դիմակ էր՝ մոռացումի
կորիզ աչքերով՝ սպասելով օտարի հողին իննը ամիս,
իննը օր... Ինչի՞ ինքն էլ չգիտի... Իրականությունը երա-
զիս տատմերություն չէր անում: Ստիպված սփռվում էի
աշխարհից դուրս... Ի վերուստ երկվություն էի ճուռ...
Ամենուր Ազոավաքա՞ր է...

* * *

Օրերը ծեծում էին Կյանքի ափերն ու ինձ
Ժամանակից դուրս նետում: Մայրամուտի շուրթերին
կարոտիս աղե նախշն էր մնում: Աղահամ տեղատվութե-
յունն էր մակարդված հույզի: Շուրջս հուշերից զատ ոչ
ոք չկար: Վարում ծովն էր, վերում՝ երկինքը: Տարակու-
սանքի ուռկանն առել էր ինձ իր մեջ ու բանտել քայլքը
ապագայի: Հեռանալով՝ մոտենում էի անցյալին: Բայց
մերժվածության սիրավեպն ասես երերաց, ու կյանքի
ալիքները ցայտեցին դեմքիս: Կապույտը ճեղքվեց ու
լույսը հառնեց մինչ երկինք:

-Աֆրոդիտ...

-Բարեւ, հոգիս, ինչո՞ւ ես անհուսության ափին:

-Ոչ դու կաս, ոչ սերը: Առանց գեղեցիկի...

-Գեղեցիկի ճամփին նախանձի որոգայթներ կան:
Մինչ չթշնամացնեն քեզ բախտի հետ՝ չեն հանգստանա:

-Աշխարհի գրքում անուսն չկար: Միթե՞ սկիզբս
ատելության հողից էր:

-Քեզ օծել եմ որպես գեղեցիկի մունետիկ, սիրո
մարգարիտ: Ինչո՞ւ նահանջեցիր այսքան շուտ: Ձեռն-
պահ մնալ սիրուց՝ դա մեղքերի մեղքն է անմիտ...

-Նախընտրեցին թեթեւ ապրել, իսկ ես խարխիս-
ված էի քեզ...

-Զագամունքներով ճեղքի անհնարինի պատը: Փր-
փուրեւ հոգիդ կոշտ ձեռքերի համար չէ: Փորձում էիր
կավեղեն սրտի ձեւն առնել: Դա էր սխալը: Կավը կդի-
մանամբ պոռթկումիդ: Զպարփակվես ժամանակի մեջ:
Զթաքնվես ինքդ քեզանից: Փրփուրեւ խոսքերդ Տիեզեր-
քին նվիրի: Ծեծի՞ աստղերի կուրծքը, ոչ՝ մարդու: Շուր-
թերիդ նեկտարն իմն է...

Սապատավոր օրերին չհետեւես... Քեզ ի վերուստ
օծել եմ որպես կարոտ, սիրո մարգարե: Ոչ քեզ ես պատ-
կանելու, ոչ ուրիշի: Սիրո հասցեն քրմուհիները բաժան-
ման աչքերում են գրում...

-Միթե՞ դժվար է հավատարիմ մնալ...

-Փրփուրը չի արմատակալի ափին...

-Ում սիրեցի՞ կյանքն առավ ինձնից:

-Ատելության հետ կապդ ստուգելու համար էր:
Փորձությունն է սրտի աշխարհը: Սիրո կորուստը կկարծ-
րացնի՞ հոգիդ, կմիանա վրեժի՞ բանակին, թե՞... Դիմակդ
հանի: Պարի օդի քարացած դեմքին:

-Աֆրոդիտ, իսկ դրն է սիրո ճամփան:

-Արեւից արեւ դարձյալ արեւանալ: Անձրեւը քեզ երկինք կկանչի՝ վար նետելու համար դարձյալ: Կբաժանի կարոտների ու կստիպի կռնատ օրերիդ հաշվին ամբողջանալ: Ծիածանանալ մաղձոտ բառի կորիզում, դառնալ գույնը հոգու...

-Իսկ բախտը...

-Լսիր միայն շառաչը ծովի, որից կյանք առար: Հանաչանքին հետեւես՝ կհողոտվես... Փրկի՛ր սեւին, որ վաղվա ամուլությունը չողբա ինքն իր վրա: Սիրագուրկ օրերում դեգերես՝ ոչ սկզբին կհասնես, ոչ վերջին: Ոչ էլ տիեզերքը կհուշի ելքը ելքերի: Սիրուց շեղվածին ներում չկա: Գոտեպնդվիր սիրով: Իշխի՛ր զգացմունք ու հույզին: Ապրի՛ր արեւից շքեղ: Ապ-րեց-րու, որ չխախտվի Հավիտենության շղթան... Հողն ու անձրեւը չսիրահետեն՝ կանաչ կծլի: Գարնան նաժիշտները պատմում են ծաղկած հեքիաթը բույր ու համի: Պտուղը շուրթերիդ դնում ու ընթանում մի ուրիշ գարնան հետ համբուրվելու... Գրկիդ մեջ սիրվելու արժանի ինչէր կան... Ոտքի կանգնի: Հուշերի ցուպը ձեռքդ առ: Ճամփա ընկի քարոզելու մարգարեական դերը սիրո, որ ցավոք մանրադրամ է դարձել արդեն... Ճամփա ընկի մինչ երկինքներ: Համոզի՛ փրփրակալի ամենակարծր ծովն անգամ, որ ատելությունը նահանջի: Համբույրդ դրոշմի հորիզոնի կարոտին: Չհողոտվես, թեկուզ միայն ժպիտդ կհասնի արի... Թե քեզ քարկոծեն, դարձյալ արշալույս նկարի գիշերվա դեմքին: Ամահության անցաթուղթը սիրո ձեռքում է...

...ու ծովը տեսիլքը կուլ տվեց: Ալիքները հանդարտվեցին: Լույսը ադամանդե թալիսման է ձեռքիս: Հարսնացել էին սպասումներս: Այսուհետ պարտավոր էի

կյանք տալ ուրիշի հույսին: Մեջքով դարձա ծովին, կապույտը կոպրեիս մեջ առած քայլեցի դեպի հողը՝ մարգարեանալու նորանոր սերեր, հաշտություն տալ օրերին... Մոռացա հարցնել մեղքի մասին, իսկ երազները...

...Առանց հասցնելու ապրել՝ պատրաստվում ենք մահին դիմավորել, մոռանալով, որ հնարավոր է, եւ անմահանալ, թե ընտրեք սիրո ուղին:

...Սիրտը մոռացված հեքիաթի խեցին է: Ապագայի ավազանում ի՛նչ սերեր են լողում, ի՛նչ սրտեր են համարձակվում քայլել ծովերի վրա: Երբեմն հասնելով ափ, երբեմն խորտակվելով հիմնովին... Անսերությունից վիտացողի համար ոսկե օր դառնայի: Ժամանակը արեւի ստինքին փարված՝ հագնում է լույսի կաթով: Ես դառնում եմ սիրված, դու դառնում ես սերը մի ուրիշի... Միայն թե շուրթերս նզովք չառնեն, լույսը չաղավաղվի անսեր հայացքիս շանթով:

...Քայլել եմ սովորում լույսի արահետով: Կհասնեմ Աստծուն: Ուր սիրո փշրանքներով հեքիաթներ են հագնում... Չթողնես Արեւը քեզ կարոտի... Պարի անձեռակերտ պարը սիրո: Քո կռնատ ձեռքերով ծափ զարկի, պարի բախտի դեմքին: Սիրո պակասից չծնկես, թեեւ հող չնախապատրաստեցիր երազին, որ վայրեջք կատարեր օրերի մեջ... Անճրեակաթիլը քո ափից քարացավ: Չիրաժարվես հեքիաթների հետ թռիչքից, չհավասարվես աստղերին...

Աջ ու ձախից սեր մուրացի, մոռանալով, որ ուր հպարտություն չկա, չկա եւ... Իսկ ուր սեր չկա, կյանքը նման է այն մարգարեին, որին աշխարհը մերժել է, իսկ դեպի Ատված տանող ճամփան կորել է հիշողությունից:

Ինչ պատասխան տամ Ամենակարողին: Ինչպէս հավատացնեմ, որ սերը աղբյուրն է ամենակարողության... «Սերն Աստված է»... երգում է ծովը, իսկ ժամանակի խշռոցը փորձում է խզել մեր կապը մեր իսկ հետ...
...Սիրուն նշան բռնողը ատելության ուսերի վրա հրաժեշտ կտա կյանքին: Վաղվա գարնան համար հող չի դառնա...

* * *

Աչքերիցս ծովեր են թափվում, թե կապույտի ծվեն չկա: Արեւները մոռացել են, որ սրտիս ափերում իրենց են սպասում: Ծովի համը շուրթերիս մնաց: Աղակալեցին համբույրներս: Պատվիրեցին ետ չնայել, չհիշել ափին գրած արեւերգությունը...

Ափերիս մեջ մի բուռ ծով, վրան՝ լույսի սերմեր լուսաշող: Օվկիանն ափերիս զարնվել՝ հոգեվարք է ապրում: Ժամանակը կանգ է առել փրփուրի վրա: Ափերումս բանտվել է անսահմանությունը: Թելերս բացեմ, ուշաթափ արելին ելք տամ:

Աստեսի ձեռքերում ինձ եմ փնտրում: Չեմ ուզում հասնել անարել օրերին... Սիրտս ծեծում է Կյանքի դուռը: Բախտը չի հուշում նշանաբանը: Օրերը դիտմամբ լռում են: Կառչում եմ առեղծվածներից: Հրաշքները կճանաչեն ինձ... Ասես, չեմ էլ եղել, չի էլ եղել հրճվանքը եղանակների, որ բերում էին թե մահ, թե սեր...

...Ճանապարհվում եմ արեւից-արել, լույսի երդման մեջ ինձ եմ փնտրում, մերժումի գիշերոտ աչքերում երազանում... Դրժում եմ օրենքը իրականության ու չեմ հասնում վերջակետերի...

Մենապար...

Էջերի վրա

Սերմնացանը հոգու դառնությունից բաժին չտամ
հողին...

Դրսում վտանգավոր է, սրտիցս դուրս չգաք...

Անսեր ապրված ամեն օր Աստծո հետքերն է
ջնջում...

Բաժանմամբ չես վախեցնի՝ ես հուշերի տեր եմ...

Սրտիդ շեմին բանաստեղծությունս եմ նետել աշ-
խարհ: Թե քայլես՝ կփշրվեմ...

Մարդու քայլվածքը իր կարոտը կպատմի հողին...

Հուշերից ինձ ձեռք մեկնողը դարձյալ ես էի: Դու ո՛ր
էիր...

Վիրավոր եմ երագի թամբին: Նժույզս տունդարձի
ճամփան դարեդար չի գտնի...

Արևների շուրջպարին ժամանակը թամադա է
միշտ...

Ճայի արցունքները փրփուրե ժպիտ են ծովի դեմ-
քին...

Մինչ անձրեակաթիլի հատունանալը քանի՛ օվկիան է բարձրացել զոհասեղան...

Լռությունը թե խոսե՛ պայթյունն անխուսափելի է...

Թռչունը երազ սերմանեց օդում, որի սկիզբն ու վերջը կապույտ երգ է:

Իրականությունը բռունցքներով երազ էր կերտում: Օրվա թաթերն էին արյունոտվում: Մայրամուտով հիանալը ցավ էր արդեն...

Չույսիս կնճիռներում է թաղված երիտասարդությանս չապրած թռիչքը...

Կայծ եմ արեւի դեմ: Թե բռնկվենք՝ մեզնից հով կմոխ-
րացնի մյուսին...

Թե ժպտամ, արցունքիս առաջ ամոթ չե՛մ: Թե լացեմ,
ժպիտս ցավ չապրի՛ր...

Ժամանակը Հավերժության աչքերի մեջ նայելու
երես ունի՛ր...

Ե՛ս արեւի մեջ մայր մտա, թե՛ արեւն իմ մեջ...

Բառը լույսի շող է՝ ուղղված խավարին...

Լույսը Աստծո համբույրն է աշխարհի կոպերին...

Հոգիս ճերմակ էջի վրա կպարի, հետքը կդառնա
բանաստեղծություն...

Ես չեմ ապրի այն հողին, ուր մինչ այդ երազները չեն
քայլել...

Աստծո մատը զարկերակիս վրա է: Ու թե ետ քա-
շե...

Շուրթերս մայրամուտով եմ ներկել: Թե համբուր-
վենք՝ կորած ես...

Նավերի կարոտը ափերով չի չափվի...

Չանճարները դեպի Աստված տանող ճամփան են մաքրում:

Բնությունն ու մարդը Աստծո երազանքի պտուղներն են: Մնացյալն ավելորդություն է, իսկ ավելորդություններից պետք է փրկվել...

Մոլորակին հանել են կախաղան ու խղճի ոտքերը բռնող չկա... Էլ աղոթող ձեռքեր չկան...

Երկինքը երաժշտություն է տիեզերքում: Երբ պիտի պարենք՝ տխուր դեմքով իմ ուրախություն...

Օրերից մեկն անկոչ հյուր լինի՝ ապագան երազի տեր չի դառնա: Տարածության ու Ժամանակի միջեւ անդունդ կգոյանա...

Աշխարհը պոեմ է, իսկ երազը Աստծո անտիպ երգն է գուցե...

Անձրեւը հրի կտամ: Պետք չի կեղծ արցունք: Ես դժոխքի կրակների մեջ էլ կժպտամ... Եղանակների պարն այլեւս ինձ չի դյուրում: Ժամն է հեռացումի...

Սիրո հետ անցած ժամանակով խոսելը անբաղա-
քավարություն է...

Շնորհը էջերի կուսական ամոթխածության վրա
իրեն արարիչ է զգում...

Աննպատակ ծնված օրը չի թակի Յավերժի դուռը...

Անմեղի արցունքն ինձ համար կաթա, Էլ ոչ մի դժոխքից չեմ վախենա...

Թե զգացածս խոսքի վերածեմ, շուրթերս կայրվեն...

Մերժված լույսը շրջում է հեքիաթ-հեքիաթ: Ոչ լինելիության հասցեն են տալիս, ոչ չլինելիությունից փրկություն կա...

Արյունս եռացող դավ է: Լավան մայր հուշի պես չորացավ, դարձավ ծակոտկեն լաբիրինթ, որի միջով ներս ու դուրս են անում կարոտները...

Դժոխքում բացված ծաղիկը գարուն է բուրում, որ դրախտը չմոռացվի...

Դժոխքը արցունքներիս հաշվին է ուզում զովա-
նալ...

Աստղերի օրորոցը հոգուս մեջ էր, բայց ո՛վ աչքերս
փակեց, ես դեռ ողջ էի...

Երգի փշուր եմ օդում: Ո՛ւմ հետ միանամ, որ դառ-
նամ հնչուն...

Ամպը երկնքի վրա գրված էրգ-երգոց է...

Արցունքներովս եմ աշխատացնում լինելիության
ջաղացքարերը: Դարձյալ օրերիցս հարկ են առնում...

Բախտի հնոցում երազանքներս քայլել են սովորում...

Աչքերս փակեմ՝ երազը բանաստեղծություն կգրի կոպերիս: Աչքերս բացեմ՝ ես եմ բանաստեղծանում...

Մահվանը սպասողները ժամանակ չեն գտնում ապրելու...

Երազանքները երազի սահմանը չանցնեն՝ օրերը խուլուհամր դահիճի կվերածվեն...

Մեռնելու համար նախ ծնվել է պետք, իսկ ո՞վ է հասցրել...

Ապագան եկավ՝ ոչ ես էի տեղում, ոչ՝ ներկան...

Մարդիկ առանց ապրելու կյանքից էին խոսում...

Արցունքս ճերմակ վարդ է, որի վրա հոգիս է քայլում՝ թե բույրից հարբած, թե արունկվա...

Լույսը երերաց: Թված՝ ընկա: Բայց հրեշտակն ինձ խղճաց ու բառերի մեջ աստվածացա...

Երբ կրակների վրա քայլես, ճախրելը կդառնա անհրաժեշտություն...

Աստված նայեց անցյալին, նայեց ապագա ու ար-
ցունքը թափվեց հողին՝ անունը Պահ...

Արցունքս թափվեր դժոխքում, այրվողի շուրթին ու
խոսեր մոխրացած գլջումը: Ժպիտս տառապյալին նվի-
րեի ու դառնայի թռչուն...

Ոչ կարողացա անմեղ մնալ, ոչ բարեկամանալ սեւի
հետ...

Թռչունը սավառնող աղոթք է երկնքում...

Մեկին դժոխք ուղարկելու համար դրախտից մի
գրկվի...

Ոչ ձեր աղոթքներում տեղ ունեի, ոչ իմ երազների տեղը գիտեիք...

Եթե կիսն ասում է «երեւի», ուրեմն սրտի ճոճքին երկիր-երկինք օրորվում են արդեն...

Բախտը շուրթերս կրակի էր տվել: Դրա համար էին խոսքերս ածխահամ...

Սիրո լեզուն չիմանաս, մոտուզը կիշխի կյանքիդ...
Դրա համար է մարդը Աստծուց այդքան հեռու... մոռա-
նալով, որ ինքը քայլող տիեզերք է...

Անձրեն անցյալի ուշացած արցունքն է...

Ինչ երկինքներ են խոնարհվել, երբ աղոթքս որբացել է: Չող եմ փևտրել, թե սիրո ուղեծիրից շեղվել է օրը: Կյանքը երդվել է ինձ հետեւել, իսկ ես ցավի խեցու մեջ անշարժացած մարգարիտ եմ դարձել... Էջերի վրա մեկնապարել եմ ու դարձել հարճը բառի...

Ժուլեթ Պետրոսյան

Արեանա՛լ,

երկինքոտվե՛լ

Շարվածք՝

Աննամարի Զարությունյանի, Մերի Զունանյանի

Էջադրում եւ ձեւավորում՝

Աշոտ Խալափյանի

«Նոյան Տապան» հրատարակչության գլխավոր
խմբագիր՝ Գայանե Առաքելյան

Թուղթը՝ օֆսեթ

Տպագրությունը՝ օֆսեթ:

Ծավալը՝ 8.1 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 300:



Տպագրված է «Նոյան Տապան» տպագրատանը:

«ՆՏ Զոլդինգ» ՍՊԸ

ՀՀ Երևան 009, Իսահակյան 28

Հեռ.՝ (060) 351122

Էլ. փոստ՝ contact@nt.am

Կայք՝ <http://www.nt.am>